ԵՂԻՇԷ

ԶԱՐԵՆՑ



2043

ՍԵՒԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԹԻՒ 3

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ
ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԳՈՐԾԸ

ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ



ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

ՀԱՏՈՐ

1955 ՏՊ. ՍԵՒԱՆ ՊԷՅՐՈՒԹ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

Պատի՛ւ կը զգանք հրատարակելու Եղիւզ Չարենցի ամբողջական գործը, 1600 մեծ էջերով:

ՍԵՒԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՏՈՒՆԸ Ակադ. Մանուկ Աբեղեանի ՀԱՅՈՑ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Ա. հատորեն եւ Ակադ. Ստեփանոս Մալխասեանցի խառաիատոր ՀԱՅԵՐԷՆ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԵՆ եսէ, գերթէ միաժամանակ ձեռնարկեց հրատարակելու ամբողջական գործերը Եղիւզ Չարենցի եւ Ակսել Բակունցի՝ խորհրդահայ գրականութեան երկու գագաթներուն, մին՝ բանաստեղծութեան եւ միւսը՝ արձակի մէջ:

Եղիւզ Չարենցի ամբողջական գործը լոյս պիտի տեսնէ չորս հատորով, իւրաքանչիւր հատոր բաղկացած 400-ական էջերէ, իսկ Ակսել Բակունցինը՝ երեք հատորով:

Ներկայ Ա. Հատորը, որ բաղկացած է 432 էջերէ, կը պարունակէ Եղիւզ Չարենցի բոլոր այն տաղաչափեալ ստեղծագործութիւնները, որոնք 1922 թուին երկու հատորով հրատարակուեցան Մոսկուայի մէջ, իբրեւ իր «Երկերի ժողովածու»ի Ա. եւ Բ. Հատորները, բանաստեղծին իսկ խմբագրութեամբ: Մոսկուայի այդ երկու հատորները կը պարունակեն Չարենցի մինչեւ 1922 թուականը ստեղծագործած երկերուն ամբողջութիւնը: Հրատարակութեան մեթոդին եւ կարգին մասին Չարենց գրած է իր «Երկու խօսք»ին մէջ, զոր կարելի է գտնել հիւ ան գիրքին:

Մեր ներկայ հրատարակութեան մէջ՝ մենք անփոփոխ եւ հարազատ կերպով վերարտադրեցինք Չարենցի այդ երկու հատորները, այսինքն յիշեալ երկու հատորներու (Մոսկուա, 1922) էջերուն ճշդութեամբ հետեւելով հրատարակութեանց մէջ կրած սրբագրութիւններն ու փոփոխութիւնները չմտցուցինք մեր ներկայ հրատարակութեան մէջ: (Չարենց իր գործերու հետագայ հրատարակութեանց մէջ փոփոխութիւններ մտցուցած է. յատկապէս իր «ԱՄԵՆԱՊԱՏԻՄ»ը ենթարկած է բաւական խոր սրբագրութեան, իսկ «ԻՆԹԻՄԱԿԱՆ ԱՒԱՍՊԵԼ»ին դուրս ձգած է ամբողջ գլուխ մը):

Մենք բաւականացանք կեսդրական եւ այլ քերթ. սրբագրութիւններով միայն, միշտ ըստ Չարենցի հետագայ հրատարակութեանց:

Այդպէս վերաբերեցանք ոչ միայն որովհետեւ մեր հրատարակչական սկզբունքն է հայ բնագիրները խղճահար հարազատութեամբ հրատարակել, այլ նաեւ ուզեցինք որ Չարենցի իւրաքանչիւր ստեղծագործութիւնը բերէ հարազատ վկայութիւն իր անդրանիկ տպագրութեան թուականին:

Չարենցի յաջորդ երեք հատորները հեռզհեռէ լոյս պիտի տեսնեն 1956 տարուան ընթացքին եւ պիտի պարունակեն իր հետեւեալ գործերը.

Բ. Հատոր, ԷՊԻՔԱԿԱՆ ԼՈՒՍԱԲԱՑ եւ ՊՈԷՄՆԵՐ ՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ (1922—1932),

Գ. Հատոր, ԳԻՐՔ ՃԱՆԱՊԱՐՀԻ եւ ԱՆՏԻՊ ԵՐԿԵՐ,

Դ. Հատոր, ԱՐՁԱԿ ԵՐԿԵՐ (ԵՐԿԻՐ ՆԱՒԻՐԻ ու ԵՐԵՒԱՆԻ ՈՒՂՂԻՁ ՏՆԻՑ) եւ ուսումնասիրութիւններ Չարենցի մասին:

Անհրաժեշտ էր Չարենցը իր ամբողջական գործով ծանօթացնել սփիւռքի Հայութեան, վասն զի անիկա եղաւ ոչ միայն խորհրդանիշ մեծագոյն եւ անգերազանցելի բանաստեղծը, այլ եւ եղաւ ամենէն աւելի ի՛ր ժողովուրդին եւ ի՛ր երկրին — «արեւահամ» Հայաստանի — բանաստեղծը:

Տակաւին, Չարենց եղաւ ոչ միայն մեծ բանաստեղծ մը, այլ եւ մեծ դաղափարապաշտ մը — մեր մեծագոյն ու գաղափարապաշտ հայրենասէրներէն մէկը, որ իր գրիչն ու կեանքը ի սպաս դրաւ մարդկային ու «ճայիրեան» բաներու համար...:

Մեծ՝ ո՛րքան իբրեւ բանաստեղծ, նո՛յնքան իբրեւ դաղափարի:

Ապագան պիտի դառնայ կրկես, ուր իրարու հետ պիտի մրցին Չարենցի բանաստեղծի եւ դաղափարիի մեծութիւնները:

Մենք կը խոնարհինք Չարենցի այդ երկու մեծութեանց առջեւ:

ՍԵՒԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

Յ. Գ.— Հեղինակի իրաւունքը պիտի յարգուի:

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՍԿՈՒԱ 1922

ՏՊՈՒԱՆ Է

ԽՄԲՀԲԴ. ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏԱՆ ՏՊԱԳՐԱՆՈՒՄ
ՄՈՍԿՈՒԱ 1922 ՓԵՏՐՈՒԱՐԻՆ



ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

Նկար՝ Մկրտչյան. Մազմանեանի

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Իմ այս «Երկերի ժողովածուն», թուում է թէ, շատերին պիտի զարմացնի: Եւ դա հասկանալի է միանգամայն: Եւ ահա թէ ինչո՞ւ:

Իմ գրական գործունէութեան սկզբի օրից ես ստիպուած եմ եղել իմ հրատարակութիւնները ինքս անել եւ քանի որ այդ գործը միշտ կապուած է եղել նիւթական որոշ հնարաւորութիւնների հետ — ուստի եւ ես մինչեւ օրս ինչ որ հրատարակել եմ — հրատարակել եմ պատահմամբ եւ երբեք հնարաւորութիւն չեմ ունեցել սիստեմատիկ կերպով հրապարակ հանելու իմ ստեղծագործութիւնը, — մի հանգամանք, որ չափազանց նպաստում է որեւէ գրողի մասին ոչ ճիշդ՝ պատահական կարծիք կազմելուն:

Եւ ահա հիմա, երբ հնարաւորութիւն ունեմ իմ ամբողջ ստեղծագործութիւնը հրապարակ հանելու — մի տխուր երկմտութիւն պարուրել է ինձ: Հրատարակե՞լ արդեօք այն բոլոր հին բանաստեղծութիւնները, որոնք անբակտելի օղակներ են կազմում իմ հոգեկան — նոյնպէս եւ ստեղծագործութեան — զարգացման բաւականին երկար ընթացքի, — թէ՞ թողնել, որ նրանք, այդ ծախող պայմաններից դրդուած անլոյս մնացած երկերը այնպէս էլ մնան թղթերում եւ իզուր սպասեն ոչնչացմանն: Աւելի քան քնական պիտի թուայ այս երկմտութիւնը, որովհետեւ ստորեւ հրատարակած իմ երկերից շատ-շատերը կարող են թուալ անհանկանալի եւ՝ որ աւելի հասկանալի է՝ անտեղի: Բայց սխալուած կը լինեն այդպէս մտածողները: Ամէն մի հեղինակ պարտաւոր է իրեն հրատարակել այնպէս, ինչպէս ինքն է հասկանում եւ ո՛չ թէ այնպէս, ինչպէս պատահմամբ հրատարակած երկերի վրայ հիմնուելով՝ պատահական տպաւորութիւն են ստացել ուրիշները:

Այսքանը — Pro domo sua. *Մի քանի խօսք եւս աւելորդ չէր լինի ասել հրատարակութեան կարգի մասին:*

«Երկերի ժողովածուն» խմբագրելիս ես գլխաւորապէս մտահոգուած եմ եղել նրանով, որ ամբողջ հրատարակութիւնը եթէ ոչ լիակատար — գոնէ մօտաւոր պատկերը հանդիսանայ իմ մինչայժմեայ ստեղծագործութեան:

Այդ նպատակով ես ամբողջ գործը բաժանել եմ երկու ստուար հատորների, ըստ որում առաջինի մէջ մտնում են լիրիքական բանաստեղծութիւնները եւ պոէմները, իսկ երկրորդի մէջ — էպիքական պոէմները: Ինչպէս առաջին, նոյնպէս եւ երկրորդ հատորում ես բանաստեղծութիւններն ու պոէմները դասաւորել եմ ժամանակագրական կարգով, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ յիշեալ բանաստեղծութիւնը գրւում է տուեալ թուականին ո՛չ թէ պատահմամբ, այլ, եթէ կարելի է այսպէս արտայայտուել՝ նոյնիսկ ժամանակագրական կարգով, որը եւ ամենաէականն է որեւէ բանաստեղծի հասկանալու համար: Այս թերեւս մի քիչ չի վերաբերում «Լոռեան բանաստեղծութիւններին», որոնք տեղաւորուած են, թէպէտեւ նոյնպէս ժամանակագրական կարգով, բայց բանաստեղծական շարքերից առանձին՝ գրքի վերջին մասում՝ գրքի ամբողջութիւնը չխախտելու նկատառումով:

Ինչ վերաբերում է նախկին հրատարակածներիս ուղղումներին — կարծում եմ այդ ոչ միայն անհրաժեշտ, այլեւ անխուսափելի է լեզուական խնդիրների եւ ոճային նկատառումների սահմաններում: Եւ իմ բոլոր ուղղումները, կարծում եմ, չեն անցել յիշեալ սահմաններից:

Վերջում աւելորդ չէր լինի յիշատակել, որ իմ առանձին հրատարակութեամբ լոյս տեսած պոէմները բոլորն էլ սպառուել են վաղուց, եւ վաղուց սպասում էին երկրորդ հրատարակութեան:

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

ՄՈՍԿՈՒԱ, 1921
ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԵՐԿԵՐԻՍ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ — *ԱՐՓԻԿԻՆ*

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

ՄՈՍԿՈՒԱ 1921 XII

ՈՐՊԷՍ ՍԿԻԶԲ

1

Գիշերը ամբողջ հիւանդ, խելագար,
ես երազեցի արեւի մասին:
Շուրջս ո՛չ մի ձայն ու շշուկ չկար—
գուցաս էր շուրջս՝ գիշեր ու լուսին:

Ես երազեցի արեւի ոսկին,
տեղնչացի նրա հրաշէք խնդուն՝
ուզեցի սիրել շշուկն իմաստուն
արեւաճմաճ, արնաւաղ խօսքի:—

Բայց շուրջս այնպէս գուցաս էր, տկար, —
խօսքեր չկային ու արեւ չկար...

2

Ո՞վ կը հանդիպի, ո՞վ կը բարեւի,
ո՞ւմ հոգեհամբոյր խօսքը կը լսեմ:
Ո՞ւմ ուրախացած դէմքը կ'արեւի՝
Բարեկամական հրճուանքով վսեմ:

Ո՞վ կը համբուրի, ո՞վ կը հեկեկայ,
Ո՞վ կը ինձանայ անսուս հրճուանքով:
Գուցէ աշխարհում, դուրսը, մէկը կայ,
որ ապրում է իմ անուրախ կեանքով:

Գուցէ իմ սրտում, երգերում իմ մութ,
խօսքերում՝ ասուած իմ հոգու մասին—
հեռաւոր մէկի անրջանքն եմ սուտ՝
նետուած աշխարհի անսուս երազին:

Գուցէ՝ ապրելով նրա երազում՝
երգում եմ նրա տագնապները խոր—
եւ թւում է ինձ աշխարհի մուժում,
որ ինձ եմ երգում, կեանքս մենաւոր:—

—Ողջո՞յն քեզ, անյայտ, անծանօթ ընկեր,
խաղաղութի՞ւն քեզ, հեռաւոր եղբայր.
—ողջո՞յն ձեզ, վաղուայ չծնուած կեանքեր:

—Ես՝ եղբայրօրէն ու մտերմաբար՝
ողջունում եմ ձեզ անցած խաւարի
խմասուն, տխուր ժպիտով բարի...

3

Ես գալիս եմ ահա: —Նայեցե՛ք, նայեցե՛ք:
Ես գալիս եմ ահա —դարերից...
Ու բերել եմ ինձ հետ երազները իմ սեգ
ու երգերը ցնդած օրերի:

Նայեցե՛ք,—նայեցե՛ք.դուք ինձ չե՞ք ճանաչում.
ես սիրել եմ աշխարհը—այնքա՞ն...
Բայց հիւանդ օրերի թունաւոր կանաչում
ես թաղել եմ թեւերս արնաթաւ:

Թաղեցի օրերում,երբ գիշերը անհուն
խաւարով փայփայում ու գերում էր—ձեզ:—
—Ես գալիս եմ ահա՝ հազարդեմ, բիւրացուն,—
պոռնիկի պես ընկած,աղօթքի պես հեզ...—

1915 — 1921

Կարս — Մոսկուա

ՅԱՐԴԱԳՈՂԻ ՃԱՄԲՈՐԴՆԵՐԸ

ՍԻՐԵԼԻ ՎԻՒԱՆԻՆ

●

Ցարգագողի ճամբորդներ ենք մենք երկու՝
երկու ճամբորդ պատառոտած շորերով։
Ու սիրել ենք տրտմութիւնը մեր հոգու՝
աներջական կարօտներով ու սիրով։
Մենք սիրել ենք տրտմութիւնը մեր հոգու՝
աներջական ինչ-որ կարօտ, ինչ-որ սեր։
Ու սիրում ենք առաւօտից—իրիկուն
ճամբայ երթալ—ու յաւիտեան երազել։
Աչքերիս մէջ մնչի պահել ենք երկնային
ճամբաների հեռուներն դիւթական—
ու անցնում ենք ոտներով երկրային,
ուր բի՜ւր մարդիկ երազեցին ու չկան։
Մօտէն պես մեր մանկութիւնը անցաւ՝
գորշ, անարեւ, անմխիթար մանկութիւն։
Չառանցանքի պես մանկութիւնը անցաւ—
ու հեռացանք։ Ու չենք դառնա կրկին տուն։
Լո՜ւռ հեռացանք ու խոյեցինք անդադրում,
երազելով յաւերժական հեռուներ։
Կեանքը դարձաւ յաւերժական մի փնտրում —
մութ, անհնթեթ, տարօրինակ կեանքը մեր։
Ու օրերում բազմազոյն ու բազմազան

վառուեց, վառուեց ողջակիզուող սիրտ մեր,—
բայց աչքերը մեր — արեւներ չտեսաց,
եւ մեր ուրերը — լուսաւոր հեռուներ:
Ու մշուշոց մեր աչքերը յաւիտեան
որոնեցին պատահական աչքերում
ցարդագողի ուղիներ ոսկեման,
նրա անծիր, անծայրածիր այն հեռուն:
Բայց աչքերում նրանք երկինք չգտան,
ու ուրերում — արեգակներ ոսկեվառ.
ու բզկտուեց հայեացքներից անկենդան
որբ սիրտը մեր՝ երազօրեն—հոգեվար:
Ես ուզեցի երգել գովքը Աստծու,
երգել փառքը պայծառ սիրոյ ու հացի.
սիրտս լցուեց... բայց չգիտեմ, թէ ինչո՛ւ—
գորշ օրերի տաղտկութիւնը երգեցի...
Թաղուած մնաց իմ աչքերում մի անհուն,
կապուտաչեայ երջանկութեան առասպել.
մի երկնային առընչութեան պատմութիւն —
ու կարծրացաւ սիրտս՝ անլոյս ու անբեր:
Չէ՞ որ կեանքում չհասկացաւ ոչ-ոք մեզ,—
ու խնդացին լուսաւո՛ր մեր աչքերին,
բութ հեգնեցին մեր կարօտները հրկէզ—
ու հեռացան : Ու ո՛չ մի լոյս չբերին:
Ցոյրը խնդաց, բարեկամը ծիծաղեց,
օսար մարդիկ հայհոյեցին ու անցան:
Միայն պոռնիկը մշուշում համբուրեց
եւ խելագարը բարեւեց կիսածայն:
Հոգ չէ, որ մեր օրերն անցան տեղի պէս,
կեանքը դարձաւ անմխիթար զառանցանք.
— մենք կը ժպտանք, գո՞հ կը ժպտանք մեռնելիս,
որ երազում երազեցինք ու անցանք...

1916—1917

❁

Մենք բոլորս, որ գնում· ենք մենյակ, տրտում,
որ գնում ենք խանութները գինի ու հաց,
որ փնտրում ենք անկարելի մի խնդութիւն,
բայց չենք գտնում՝ վազով տարուած ու գբա-
ղուած. —
մենք բոլորս, որ, յոգնաբեկ, չենք նայում վեր —
մոռացալով աշխարհային չարք, բարիք՝
տրտո՞ւմ կ'օրհնենք մի իրիկուն օրերը մեր—
ու կը նայենք Յարդագողի նաւապարհին...

1917

ԵՐԵՔ ԵՐԳ ՏԽՐԱԴԱԼՈՒԿ ԱՂՋԿԱՆ

ԱՍՏՂԻԿ ՂՈՆԴԱԽՉԵԱՆԻ

Et c'était le dernier amour du soir antique...

ALBERT SAMAIN

1. ՁՒԱՐԲԻՆ...

Օրորուելով կառքն էր վազում արբնթաց
դաշտի միջին, ճանապարհով ցեխապատ:
Թօնն էր մաղում միապաղաղ, ցուրտ ու թաց:
Օրն էր մարում հիւանդոտ ու մեղմ-վհատ:

Օրօրւում էր կառքը, վազում ու վազում:
Կառապանը երգում էր մի ինչ-որ երգ:
Թոխախտաւոր կինն էր մօտիս դառն հազում:
Մութն էր գրկում արեւմուտքն ու արեւելքն:

Թօնն էր մաղում միապաղաղ, ցուրտ ու թաց:
Ագռաւներն անցնում էին երջալով:
Թոխախտաւոր կինը տխուր՝ հեծկլտաց:
Քամին անցաւ՝ մեկի մասին ողբալով:

Եւ կառապանն, օրորուելով, դեռ երկար
Երգում էր իր օրերի երգը անգոյն:
Գնում էինք : Ո՞ւր—չգիտեմ: Վերջ չկար:
Գնում էինք: Անխօս: Անձայն: Ու աննուն...

2. ԱՆԿՈՒՆ ԳԻՇԵՐԻՆ

Քնել չի՞ լինում...
Հիմա, երբ այնպես ուզում եմ ճնել,
ամե՛ն, ամե՛ն ինչ մտիցս հանել:
Հայեացքներս՝ անփակ՝ բափառում են լուռ —
ու միտս, տարտամ, դեգերում է մութ
դատերում տխուր:

Մթութեան գրկում լալիս է դողդոջ
լոյսը լապտերիս՝ մեռնող աղջկայ
հոգեվարքի պես...
Մեկը բաղխում է դռներն անցածի—
ու չիւում եմ ես:

Մոռացուած երգի նուագի նման
դողում է հոգիս լոյս մատների տակ—
եւ ահա մեկ-մեկ շարւում են իմ դեմ
պատկերներ, դէմքեր, որ կորել էին
առանց չիշատակ:

Այնտեղ, մութի մէջ յայտնւում է ահա
տեսիլդ գունատ ու տխրադալուկ,—
օրերի անյայտ մշուշից ելած
գունատ այցելու:
Ու չիւում եմ ես անձրեւոտ մի օր—
մի հին իրիկուն.
հեռու երգերի խնդալառ օրօր,
հարսանքի հանդէս.—
մաղող անձրեւի կաթիլների տակ
կանգնել էի ես...

Է՞, ճնե՞լ, ճնել...
Աչքերս փակեմ ու սեղմեմ ամուր
ու չմտածեմ ոչնչի մասին:
—Մի՞թե, երբեմն, չեի՞ք միասին...
—Ախ, oror ասա, անդորր ու oror.
ճնել եմ ուզում՝ գիշերն անց կացաւ...
—Երա՞զ եր արդեօք, զառանցա՞նք, թե ցաւ...

—Յա՛ւ, ցա՛ւ եր անուրց.
դու երբե՛ք, երբե՛ք ինձ չես ժպտացել—
ես ժպիտն անգամ ցա՛ւ է բուացել
իմ հոգուն տկար...
Ես քեզ կանչեցի երկա՞ր ու երկա՞ր—
դու չեկար, չեկար,—
ցանկացայ լինել ես դեմ մի հլու.
ու անկամ գերի—
եւ ես իմ սիրով քեզ ձանձրոյթ բերի...

Օսա՞ր եր հոգիս քեզ համար, ինչպես
օսար դաշտերից բերած ծաղկեփունջ.
տանջանքի վարդեր, յոյսի ծաղիկներ,
երազի աստղեր, յոյսերի ցոլքեր—
ու կարմի՞ր, կարմի՞ր խաչխաչներ ցաւի.—
այս ծաղիկներով զարդարուած հոգիս քեզ նուէր
բերի,
որ ես կոյս հոգին իմի հետ ցաւի...
Ու ես չեմ յիշում, թե ի՞նչպես մի օր—
օսար, անմեկին—
ես քեզ կորցրի նոր կեանքի շեմքին...

Չէ՛, դու գնացիր, չգիտեմ թէ ուր ։
Ես էլ գնացի։ Ի հարկէ, այնտեղ,
ուր ապրել ես դու երկար ժամանակ—
ապրել չէ՛ր լինի։—
Չէ՞ր լինի տեսնել լոյսերը ձեր տան,
չէր լինի տեսնե՞ լայն փողոցը ձեր,
որ միևչեւ հիմա ես չեմ մոռացել...

Թողնենք, ախ, ի՞նչ հոգ.
չէ՞ որ չգիտէ, չգիտէ ոչ-ոք,
թէ ինչո՞ւ կեանքում այսպէս է եղել.—
սէրը մեզ համար—արցունք ու արիւն,
սէրը մեզ համար մահուան գին ունի,
իսկ կնոջ համար —հրճուանքի գինի...

Այս աննուն, աննուն ու լուռ գիշերին
ախ, էլ չեմ ուզում վերյիշել կրկին
անցեալը անմիտ ու անմխիթար.
էլ ինչո՞ւ ես դու գալիս անդադար
եւ ուշ գիշերով փորել ես ուզում
իմ հոգին տկար...

Դրա համա՞ր ես դու այստեղ եկել
օ, նենգոտ տեսիլ...
Ուզո՞ւմ ես հոգուս վէրքերը պեղել,
որի գանձերը չուզեցի՞ր տեսնել...

Օ, զզուելի՛ կին,—
ես արաս է պես, սին արաս հոգու,
որ լաւ ծիծաղես ու չարկամ խնդաս—
եւ ամբողջ հոգով հրճուանքից բնդաս...
Ուզո՞ւմ ես՝ պատմեմ, թէ ինչպես յանկարծ
ինձ համար փոխուեց ամեն, ամեն բան—
եւ ես կորցրի երազի նամբան...

. . . . . .

Մի գիշեր էր մութ: Անձրեւ էր գալիս:
Խաւար էր իջել իմ մթնած հոգում:—
Ամայութիւնն էր հեկեկում այնտեղ
հին, անվերադարձ երազների տեղ:
Եւ ես դուրս եկայ: Ցեխոտ փողոցով
խայտեցի երկար:
Չգիտեմ, թէ ո՞ւր. ինձ համար արդեն
նանապարհ չկար...

Երկա՜ր խայտեցի:
Եւ իմ դեմ ահա—մի երկա՜ր փողոց:
Հեռեւում—դեղին, տարտամ կրակներ:
Եւ ես մօտեցայ այն կրակներին,
որոնք իմ ուրտին մի հի՜ն լուր բերին...
Մի հին լուր՝ հոգուս մէջ պահուած ծածուկ—
եւ ես այն ջերմը անցայ կամացուկ...

Ու... այս եմ յիշում՝
մի հին անկողին—թաղուած մշուշում:
Ու մի մերկ մարմին:
Ու ցաւոտ, նշուած հեկեկանքը իմ...

Ու դուրս եկայ ես:
Չգացի միայն, որ ցուրտ է, խամի, —
որ կեսգիճն ինձ համար էլ կատակ է մի ...

Ինձ համար մեռաւ ամեն սրբութիւն:
Գնա՛, սիրելիս:
Թող կեանքը գլխիս մրրիկներ տեղա
ու մոխիր ցանի—
էլ ո՛չ մի զղջում իմ երազը հին
յետ չի դարձնի...
Գնա՛, սիրելիս.
ու թող մի վայրկեան էզ մտիկ հանեմ,—
ուզում եմ ճնեմ—ախ, ի՞նչպէս ճնեմ...

3. ՄԵՌԵԼՈՑ

Երեկոն աննշուլոտ էր ու թաց:
Փողոցները—դատարկ, անաղմուկ:
Ու խավին էր անցնում սրընթաց
ու տաքուկ:

Ու գիշերը իջնում էր մթին.
երեում էին մութ ճեռեուում
փողոցի կրակներն երերուն՝
յանձնուած ամօթին ու սթին:

Ու գնում էի ես յամրընթաց,
ինձս ինձ էո անունը ասում:
Հեռեուում ինչ-որ մեկը խնդաց
փողոցի աննշուլոտ երազում:

Ու օրհնում էի ես իմ ստում
մոռացուած դամբարանը էո մութ:
Մեկն ասաց, որ ստում եմ, ստում,—
ու յուսում էր ճեռուում մեկի յացն անօգուտ...

Կարս 1913

ՏԵՍԻԼԱԾԱՄԵՐ

1

Մի լուսե աղջիկ, լուսե մի մեռել
օրերի միգում երեւում է ինձ:
Թարթում են միգում կրակները դեռ
ու կարոտը հին խեղդում է ցորից:

Անցնում է, որպես անմարմին տեսիլ
ու ցորից միգում երեւում է նա:
Ու ցորից չկայ: Ու ցորից գիշեր—
փողոցի վրայ ու հոգուս վրայ:

Կրակներ, ջահեր: Անցնում են նրանք,
կանչում են նրանք, ակնարկում են ինձ:
Կանգնում են թարթող կրակների տակ,
ներկած աչքերով կանչում են ցորից:

Ու լուռ է հոգիս: Ու մենակ եմ ես:
Երազուն, տխուր: Հաւատում եմ դեռ:
Ու անցնում է նա—անմարմին, անտես,—
մի լուսե աղջիկ, մի լուսե մեռել:

2

Ես նստում էի անմարդ բուլվարում՝
աշնան արեւի համբոյրին գերի:
Խմում էր հոգիս երկնքի հեռուն,
լսում էր հոգիս երգը զանգերի:

Ու անթա՜րթ, անթա՜րթ նայում էի ես
անսահման, անծիր երկնքի հեռուն:
Ու թաց աչքերով տեսնում էի ես—
յաւիտենութեան կապոյտ դաշտերում:

Եւ երբ երեկոն մեռնում էր բոցում
ու իջնում էր պարզ, աստղազարդ գիշեր—
կապոյտ ջրերի հեռու զնգոցում
ես լսում էի ո՛ւ շուկը դեռ...

3

Հոգուս մէջ իջել ու փռուել էր մի
հիւանդոտ, հիւանդ տխրութեան հանգիստ:
Հաշտուել էի ու լռել էի:
Ու լուռ էր հոգիս՝ լուռ ու լռանիստ:

Եւ մէկը յանկարծ խնդաց խաւարում—
դուրսը, դաշտերի մենակութեան մէջ:
Մէկը դաշտերում տագնապ էր փռում—
ու մութ սենեակում հնկում էի ես:

Դուրսը, դաշտերում, երջում էր համին:
Ճչում էր հոգիս՝ հիւանդ ու տկար:
Աստուերները լուռ օրօրում էին :
Ու լուռ էի ես: Չկայիր: Չեկար:

4

Եւ մի իրիկուն զանգերի երգում
լսեցի վճիռ խոսուումներր fո:
Կարծես թէ հոգիդ իրիկուայ միգում
կանչում էր անտես... խաղա՞ղ երեկոյ:

Ու ղօղանջներր կապոյտում անծայր
թիթեռի նման նախրում էին դեռ—
երբ հեռուներում զնգալով անցար,
որպես մի ղօղանջ, մի լուսե թիթեռ ...

Անցար — լուսաւո՞ր, հեռաւո՞ր, թեթե՞ւ,
ճառագայթի պես իրիկնամուտի:
Իսկ սիրտս՝ տխուր, յոգնաբեկ, անթեւ,
խմում էր իջնող տագնապը մութի...

5

(Հայրենիքում՞)

Ձիւնապատ լեռներ ու կապոյտ լճեր:
Երկինքներ, որպես երազներ հոգու:
Երկինքներ, որպես մանկական աչեր:
Մենակ էի ես: Ինձ հետ էիր դու:

Երբ լսում էի մրմունջր լճի
ու նայում էի թափանցիկ հեռուն—
զարթնում էր իմ մէջ fո սուրբ անուրջի
կարօտր այն հին, աստղայի՞ն, անո՞ւն:

Կանչում էր, կանչում ձիւնոտ լեռներում
մեկը կարօտի իրիկնամուտին:
Իսկ գիշերն իջնում, ծածկում էր հեռուն,
խառնելով հոգիս աստղային մութին...

6

Եւ մի առաւօս, մշուշ էր ու մէգ,—
մոռացել էի ու չէի յիշում—
երբ եկար յանկարծ՝ տխուր, յուսաբեկ,
ինչի պէս անցար, անուշդ—Աշուն...

Անցնում էիր դու անմարդ պուրակում
եւ քնկնում էին ճ ոտների տակ
տերեւներ, թերթեր՝ դեղին, ոսկեգոյն,
մոռացուած միգում, որպէս յիշատակ:

Լո՞ւռ քնկնում էին տերեւները վար,
ու ծածկում էին նաւապարիսը, էշդ:
Ու ցուրտ պուրակում, մենակ, հոգեվար
մեռնում էր հոգիս ու լուռ էի ես...

7

Հիմա չգիտեմ, մոռացել եմ ես
նամբաները ճ: Մշուշ ու թախիծ:
Մոռացել եմ ես, մոռացել է էշդ
օրերի միգում կուրացած հոգիս:

Անցնում են, հոսում օրերը անձայր:
Ձամբորդների պէս գնում են հետս:
Ցիշում եմ միայն, որ մի օր անցար
օրերիս նման —ու յետ չես գալու:

Եւ գուցէ մի օր, մի վերջին գիշեր,
երբ վերջին միգում աչէրս մարին—
արքնանայ յանկարծ անիմաս մի սէր
ու ասղը ժպտայ մոխրացած ճարին...

Կարս 1915 Աշուն

ԵՐԵԿԸ

(ՊՈԷՄ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ)

1

Մի հին դղեակում ապրում էին զոյգ
երեքը—ցրացիմ. դղեակում այդ հին:
Երկուսն էլ ցրացիմ այդ երազ-կնոջ
ասպետներն էին:
Ու ապրում էին փակուած ու մենակ,
աշխարհից հեռու, դղեակի միջում:
Ու հին դղեակի կամարների տակ
հոսում էր ցրացոյ կեանքը անանուն:
Ի՞նչ էին անում այդ երեքը միտս,
այդ հին դղեակում ի՞նչ էին անում:
Կեանքը դղեակում երա՞զ էր, թէ միտս—
ոչ-ոք չգիտէր ու չէր խմանում:
Որպէս մի հեքեաք, որպէս հինաւուրց
դարերում ապրած լեգենդի կտոր—
կեանքը դղեակում դարձել էր անուրջ:
Ապրեցին անձայն ու անցան մի օր:—

2

Մէկը դղեակում մենակ էր առաջ
երազ—կնոջ հետ: Մենակ էր ու զոհ:
Թուում էր ցրացն աշխարհը—երազ,

ու լոյս էր այնպես. կապոյտ երկոյ:
Նստում էր մեջտակ եւ հսկում էր ցա:
Կինը դղեակում է՛ւ կար, է՛ւ չկար:
Նստում էր մարմար սանդուխի վրայ՝
աչքերը—վճիտ ու սիրտը—պայծառ:
Եւ մի իրիկուն. —հրոտ, հրավառ
արեւը մտաւ գիրկը լեռների:
Կինը դղեակում է՛ւ կար է՛ւ չկար.
ցա ցոտած էր լուռ՝ երազին գերի:
Արեւը մտաւ խորքը լեռների—
ու թուաց նրանց գիշերի միգում,
որ ո՛չ մի հրաշք էլ յետ չի բերի
անցած արեւի հուրը ոսկեգոյն...
Անշշուկ ցոտած լսեց, որ անցաւ,
անդարձ հեռացաւ... Մի՞թէ չգտաւ:—
Եւ ցա չտեսաւ, թէ ինչպես, անձայն,
միւսն այն գիշեր դղեակը մտաւ...

3

« — Դու կանչե՞լ էիր »—շշնջաց նրան.--
«հեռու դաշտերից, արեւի երկրից:
«Արեւը անցաւ ու ժպտաց միայն:
«Արեւի երկրից կանչել էիր ինձ:»—
Երբ գիշերն իջաւ դղեակի միգում
երեքը — նրանք — կրակ չունեին:
Ու թուաց, որ դեռ երեկ իրիկուն
երեքն էլ նրանք դղեակում էին:
Նայեցին իրար — ու թուաց, թէ դեռ
դարերի միգում, սկզբի օրից
երեքն էլ նրանք այստեղ են եղել—
մի՛շտ իրար կապուած՝ հեռու բոլորից...

4

Ասաց ծտուկով կինը երկուսին .—
«Գիշերը հազար հրաշքներ ունի.
«գիշերի գրկում ընկնում է հոգին
«հազարասղաքի գիրկը անհունի:»
Նայեցին իրար, նայեցին նրան:
Վառուում էր ոսկի հայեացքը կնոջ:
կարծես ասելու ոչինչ չգտան:
կարծես դողացին շրթերը դողդոջ:
Եւ մեկը յանկարծ հեծկլտաց մթում...
Միւսը ժպտաց:— Ու տեսան իրար:
Նուում էր մի տեղ դղեակի կատուն
ու դուրսը համին խնդում էր խելառ:

5

Ու կինը, հիւանդ, մտաւ անկողին:
Հսկում էին լուռ երկուսը նրան:
Ու գրկել էր մութ լուրթիւնը հին
նրանց—երեքին: Ու լուռ էր միայն:
Ու մութ էր այնպես: Ու հիւանդ էր նա:
Եւ երկուսն էլ, լուռ, անկողնի առաջ
երազում էին պատկերը նրա—
հեռաւոր նրա համայքը երազ:
Երազում էին: Երկուսն էլ կային:
Այնքա՜ն հարազատ, ու մօտիկ այնքան:
Եւ սուրբ խօսքերով օրորում էին
կնոջը հեռու: Երկուսն էլ—նրան:

6

Ու լուռ էր այնպես: Ու լուռ էր: Ու գոլ
լռությանն գրկում բուում էր նրանց,
որ կեանքը մահից անհուն է ու խոր,
մահու պես գաղտնի, անթափանց, անանց:
Ու հիւանդ էր նա: Բայց մահը չկար:
Միայն մռնչում երկու կրակներ
կարծես բռնկուող, կարծես հոգեվար,
երազի նման ժպտում էին դեռ:

7

Եւ մեկը յանկարծ ասաց միւսին.—
«Արեւը երեկ անցաւ—ո՞ւր գնաց...»
Միւսը նայեց ու ժպտաց կրկին.—
«Արեւը չկայ: Արեւը—երազ...»
Եւ մեկը ուզեց անդարձ հեծկլտալ,
բայց բարձր նշաց.— «Օ, ցո՜ւրտ է այնքան...»
Միւսը ժպտաց: — Ու երկա՜ր-երկա՜ր
լռեցին նրանք՝ անբարբառ, կարկամ:
Եւ երկուսն էլ լուռ նայեցին նրան:
Լուռ էին նա: Լուռ էր ու լուռ:
Եւ վերջին մթնում վերջին լռությանն
երկուսն էլ հոլու սպասում էին:

8

Եւ միւսն յանկարծ բարձրացաւ տեղից
ու սուր, լռությանն դղեակում կարկամ,
ուր իջել էր մի անսահման կսկիծ —
ճչաց ու կանչեց տասերկու անգամ:
Տասերկու անգամ կանչեց, բայց չկար:
Արևոտ էր նրա ձայնը մռնչում:

Տասերկու անգամ կանչեց խելագար —
ու դուրսը ոռնաց յուսահատ մի շուն:
Լուսնի երեսին ոռնաց ու լռեց:
Եւ վերջին անգամ նա կանչեց նրան:
Կինը բարձրացաւ, ժպտաց, համբուրեց —
ու մշուշի մէջ երկուսն էլ կորան...

9

Իսկ մեկը, նստած անկողնի առաջ
սպասում էր դեռ: Կարծում էր, որ նա
դեռ պառկած է իր անկողնի վրայ,
որպես յոյս-ցնորք ու հոգու երազ:
Չտեսաւ, կարծես, որ ջահը հանգաւ:
Չտեսաւ, կարծես, որ անդարձ քնկաւ,
անդարձ փշրուեց բաժակի հոգու,
որ վնգում էր դեռ երկ երեկոյ:
Մի՞թէ չլսեց կանչը խելագար.
տասերկու անգամ կանչեց ու տարաւ:
Մի՞թէ չտեսաւ, որ ջահը չկար,
որ ջահը յանկարծ արիւնուեց — մարաւ:
Լուռ նստած էր նա անլոյս սենեակում,
աղօթում էր դեռ ու հսկում էր նա:
Եւ կամաց-կամաց տպաւորը բազուն
իջնում էր նրա կարօտի վրայ...

10

«Դու ի՞նձ ես ուզում. այստեղ եմ ահա:
«Նստել եմ էեզ մօտ — մի՞թէ չգիտես:
«Լուռ թեանձ գրկում սպասում է նա:
«Շրթերդ հրոտ համբուրում եմ — ես»:
Եւ կինը գրկեց, համբուրեց նրան:

Ձաները ցորից դղեակի միգում
արցաւուց լուսով բռնկուած — կորաց:
Եւ խաւարն իջաւ աշդուռ դղեակում:
Եւ կինը կարծես չտեսաւ, որ լուռ,
որպես մի ուրուռ, որ կայ ու չկայ —
մօտեցաւ յանկարծ լուսաւոր, տխուր,
տխրորեն վճիռ երազը ցրա...
Միւսը կարծես չիմացաւ ինքն էլ,
թէ ինչո՞ւ յանկարծ բուաց, որ միգում
մէկը, աճապարանք, աշտեղ մօտեցել
ու խուլ տագնապով դռներն է թակում...

11

Ու լուռ կանգնեցին իրարու դիմաց
երկուսը — կարծես առաջին անգամ:
Կինը ոեծկլտաց ու ցորից ժպտաց —
ժպիտն էլ, լացն էլ — oսա՜ր եր այնքան:
Ու կանգնած էին ցրանք դէմ ու դէմ
ու չգիտէին՝ ի՞նչ էին ուզում:
Բայց զգում էին, որ մի լուր գիտեն
երկուսն էլ հոգու անլուր երազում:
Եւ զգում էին, որ ճամբայ չկայ:
Եւ զգում էին, յոգնած ու տխուր,
որ կ'քնկնի՜, կ'քնկնի լոյսը ոեռակայ
վերջին խաւարի գիրկը ահաւոր:
Եւ զգում էին. վերջին անհունում,
արեւից յետոյ ու լոյսից յետոյ —
երկուսն էլ ցրանք՝ անդէմ, անանուն՝
կը դառնան հյու ողջակէզ ու զոհ...

12

Ու վերջին անգամ նայեցին իրար...
Ծանո՞թ եր այնման աչերի հեռուն...
Այն ո՞ւր է տանում յորձանքը վարար —
յոյսը հոգեվար մարող աչերում:
— Դու ի՞նչ ես ուզում... Դու մրսե՞լ ես, հա՞:
— Իսկ դո՛ւ, դո՛ւ, որ միշտ արեւի բովում
այրում էիր — եկել ես հիմա
ու փնտրում ես իմ լուսնային հեռուն...
Ու աչերը, խոր, խորունկ խորացան
միւս աչերի խորութեան մէջ խոր:
Կարծես յիշեցին, կարծես մոռացան,
որ եղել են, կ՚ուն, ապրում են մի օր:
Եւ կինը խնդաց, արնոտ մշուշում —
ու եկաւ, կանգնեց երկուսի առաջ:
Միթէ նա՞ է — նա: Միթէ չի՞ յիշում
աստղերը վառած, աստղերը մարած:
Թէ՞ ուրու է նա: Եկաւ — ու չկայ:
Կանգնած են նրանք դէմ առ դէմ էլի:—
Վերջին պարտութեան վայրկեանը հիմա
կը հնչէ անդարձ... Եւ ուշ կը լինի:

13

...Ու վայրկեանը, խար, ընկաւ անողոք:
Հնամեայ մի կամք, անդարձ ու տկուն,
որպէս դարերի վիթխարի բողոք —
խաչցաւ նրանց աչերի միգում:

Եւ միւսն յանկարծ նչաց — խարացաւ.
կոյր, զգաց յանկարծ, որ սառցի մի սուր
մեխուեց իր սրտում: Սառցի պես մի ցաւ
կաշկանդեց նրա հոլիքնը հուր:
Բայց վերջին միգում տեսաւ, որ նա է՛լ —
մեկը, յուսահատ, տասերկու անգամ
նչաց ու կանչեց վանդակում անել —
եւ նոյնպես — ընկաւ . . . . . .
. . . . . .
Խաւարի գրկում դղեակը այն հին
երերաց յանկարծ: — Ու երկա՜ր, երկա՜ր
գայլերը դաշտում դեռ ոռնում էին:
Ու լուռ էր այնպես: Ու ոչինչ չկար:

1915—1916
Կարս—Մոսկուա

ՀԷՏԷ՛ՐԱ — ԵՐԱՉ

(ՀՅԻԼՈՑ)

1

Երբ վեր սլացան հրոս, հրակամ
հրթիռները հուր, հրավառս ու հիր —
աստղային ծիրից ցորից վայր ընկան
ու դղեակը հին դարձրին մոխիր:

2

Ու ընկած էր ցա մոխիրի վրայ:
Ընկած էր մենակ: Ու լուռ էր չորս դին:
Մոխիրի վրայ սպասում էր ցա՝
աչքերը յառած կոյր, անդեմ մութին:
Եւ մեկը կարծես մօտեցաւ ցրան,
մօտեցաւ, խնդաց ու կանչեց միգում:
Ցիշեց, որ կային — չէացան — կորան
աստղերը՝ հոգու երկնքում, հոգում:
Ու ժպտաց, ժպտաց ասպետը յանկարծ:
Ձեռքերը պարզեց — այնքան մո՞տ է ցա:
Գուցէ բռնկուեն աստղերը հանգած
ու ցորից վառուեն մոխիրի վրայ...
Ձեռքերը պարզեց ու լռեց միայն:
Ու խնդաց ցորից սիրտը մռուռում:
Ու չկար ոչ-ոք: Թուում էր ցրան
աշխարհն էլ, իմքն էլ — մի մութ վերյիշում:

3

Ու խո՞ր հեծկլտաց ասպետը, ընկած
ճերմակ դղեակի մոխիրի վրայ:

Ու յիշեց բոլոր ասղերը հանգած,
ու յիշեց հրոս հմայքը նրա:
Նկաւ — ու չկայ: Բայց չէ՞ որ երբ դեռ
հրդեհն էր լափում դղեակը իր հին՝
բոցերի ծովում մի ոսկի թիթեռ
զնգում էր, ծաչում — հրավառս մի կին:
Օ, բող գա՛յ, բող գա՛յ: Լինի արիւնոս:
Մեխուի իր սրտում, որպես խաղցր սուր:
Թող նորի՞ց վառուի համբոյրը հրոս
ու հմայքը նուր...
Եւ բո՛ղ չլինի երազն ասղայինն —
ներմակ դղեակի անմարմին ուրուն...
Եւ չէ՞ որ ոսկի կրակներ կային
մեռնելուց առաջ նրա աչքերում...

4

Ինու ինձ մոս էիր: Ժպտացիր — ու հուր
համբոյրի ժամին հոգիս՝ գոհ, դժգոհ՝
ընկաւ գիշերի խոռոչի մէջ խոր —
բայց օրհնում էի հրդեհները ես:
Ես օրհնում էի: Ժպտում էիր դու:
Ու հրդեհեցի իմ դղեակը հին,
որ ի՛մը լինես, չդառնաս ուրու,
որ ինձ մոս մնաս՝ պարզ ու երկրային...
Բայց ո՞ւր գնացիր, ինչո՞ւ. հեռացար:
Թէ՞—այսեղ ես դու, բայց մենակ եմ ես:
Ինչո՞ւ հեռացար ու ցնորք դարձար՝
հեռաւո՞ր ուրու — անմարմին, աներես:
. . . . . .
. . . . . .
Ձերմակ դղեակի մոխիրի վրայ,
յիշելով ոսկի հրթիռը մարած —
անզօր ծնշում ու կանչում էր նա.
—Հեսի՞րա-ցնորք, հեսի՞րա-երազ...»

ՀՐԴԵՀԸ

1

Հսկայ ճնճղերը հուր ու ծխի մեջ,
ճնճղերը հսկայ վառուում են, փլչում:
Բոցերը՝ կարմիր նայեադների պես
ծխերի միջից երկինք են բռչում:
Այն ո՞րտեղ էին, ո՞ւր էին պահուած
փերիներն ալուաճ կրակի, հրի,
աճման վ.ահագնի հարսներն հրավարս,
նայեադները այս կարմիր փրփուրի:
Երգով ու ծափով երկինք են բռչում՝
դեպի արեւի գիրկը մոռացուած.
ճնճղերը սակայն փլչում են, փլչում՝
նրանց կարոշին ոդջակեզ դարձած:

2

Մոխիրի միջից — կարմիր կրակներ:
Միթե չի՞ մարել, միթե չի՞ հանգել:

Աչխեր են կարծես — կասկածոտ, հրոտ:
Բոցկլտում են՝ հին հրդեհին կարոտ:

Մոխիրի միջից հսկում են, հսկում.
չե՞ս տեսնում մահը — աչխերի ոսկում:

Ահա խնդացին: Չե՞ս սոսկում հրից: —
Հէ՜յ, հասէ՜ — հասէ՜. հրդեհի է նորից:

1916

ԵԶԵՐՔԸ ԱԻԴ

Հոգու հեռաւոր դարբասից աընդին,
ուր մեռուս է, մեզ,—
ուր բաընձր միգում վխտում են մթին
կասկածների ընեգ.
ուր չի թափանցում ընայուածքը երբեք —
խոնի միամիս,—
կայ մի մութ եզերք, աընուը — Աիդ:

Հոգու այդ վերջին դարբասի առաջ
հսկում է աճուն
այդ մութ եզերի արեան աըներազ —
սեւահեր մի շուն՝
կոյր ընայուածքը իր կուրծքն յառած
հիւանդոտ մուժում:

Հսկում է, մոայլ, իր եզերը մառ,
իր եզերը հին,
ուր վերջին, նղնիմ գոյութեան համար
յանձնուած մութին՝
տառապում է մեր մարող, հոգեվար
երազի հոգին:

Ու մութ է այնտեղ, աըներազ մուժում, —
տաղտուկ, ամայի:
Ու ցուրտ է այնտեղ՝ Սիփսն է հոսում,
Գանգեսը մահի՝
յաւիտենութեան յաբիրինթոսում
անիմանալի:

Ու այն եզերքի սեւաթիթ արմա՛ւ—
աչկուցս, աւօրի, —
հասկում է, որ չինչ երազներդ գան —
բոցի, յօշոտի, —
ու երազների դիերն աւկնեցած
Սպիտակ ճեռի:

Ու հոգու վերջին դարբասից աւդին
ճենգ, հասկում է ճա:
Հասկում է, որ չինչ երազներն բնկնին
եզերքը ճրա:
Եւ ոռնում է ճա յոյս գիշերվերին —
լուսինի վրայ:

1916

ՄԱՐԻ, Է՛Գ ԹՌՉՈՒՆ...

Չգիտեմ, Մարի, երկնքի մոլից
ինչո՞ւ եր ինգիս կաւոսով կանչում,
որ ճախրես, թռչես, վերացաս ծորից,
Մարի, ի՛մ Մարի, Մարի, ե՞գ թռչուն:
Դաշտերը միայն գրաւում են ձեզ.
դաշտերը կանաչ, գոհարը ցօղի:—
Դաշտերի միգում կորցրել եմ ես
մի հին, երկրային բերկրանքի ուղի:
Մոռացել եմ ես դաշտերի ուղին.
մոռացել է իմ երազող ինգին
հովը դաշտերի, գմրուխտը կանաչ.
աշխարհը մեռաւ յաւերժի առաջ —
եւ ես մոռացայ բախտը աշխարհի՝
աշխարհի հեռուն ու բախտը բարի:
Լուսնեակ գիշերով ես նամբայ ընկայ
ու կեանքը թողած, ու կեանքի հեռուն —
թաղեցի ինգիս լուռ ու լուսնկայ
յաւիտենութեան մեռած դաշտերում:
Ու լուռ է շուրջս — ձմեռ ու գիշեր,
ու երգը մահի, որ կոչում է — սեր: —

Մեռած է, Մարի՛, իմ սիրտը հիմա:
Շուրջս — լռութիւն, ու գիշեր, ու մահ.
շուրջս խաւացած երազը մահի.
— կ'ուզէի՞ այնպէս, որ յետ դառնայի
ու համբուրէի շրթերը հողի.
փնտռէի մի պարզ, երկրային ուղի,
հո՞ղը լիզէի, որպէս համր շուն —
Ու լո՞ւռ կորչէի աշխարհի փոշում...
Ախ, ցուրտ է այսեղ — երկնի կամարում—

չի վառում այսեղ ճառագայթը հուր.
երկնքում չկայ ծաղիկ ու գարուն
ու սուտ է հոգու բերկրանքը մաքուր:
Մարի, իմ Մարի, մնացիր ճախճուն,
արևոտ ու տաք դաշտերում երկրի,
քող հոգիդ զնգա՛ երկրի մշուշում,
աշխարհի մուժում քող հոգիդ բերկրի:
Մի՛ ճայիր դու վեր. քող կեանքդ լինի
ոսկի մի ծօղանջ. վա՛ռ բախտի ճնչիւն,
քող կեանքդ լինի հուրհրող գինի,
Մարի, ի՛մ Մարի, Մարի, ե՞ք քո՛ւն...

— Իսկ ե՞ս. ի՞նչ անեմ ես, որ մնացի
երկնքի դաշտերում — ու մեռաւ հոգիս,
ես, որ երկրային կեանքս քաղեցի —
յո՞ւմ ես, Մարի, — ի՞նչ արի ես ինձ:
Ինչո՞ւ արեւի համբոյրը երբեք
չվառեց իմ մէջ ցանկութիւն ու ծող
ու չհրդեհեց սիրտս յոգնաբեկ
ես հուր մարմնի հմայքը դիւրող:
Բայց չէ՞ որ հոգիս, ասում եմ, ունի,
կամ գուցէ առաջ ունեցել է ճա —
կարմիր կարօտը կարմիր արիւնի
ու հրդեհումի երազը անմահ:
Ախ, մարդու հոգիս, ասում եմ, առաջ
ապրել է այնտեղ — արեւի վրայ,
եղել է վառման խնդագին երազ,
հրոս, հրաճաղ, ու անունը — Ոհա:
Վառուել է անմար արեւի հոգում՝
ինքը զոհ իրեն ու զոհաբերող,
ու սփռել է մութ օրերի միգում
հրդեհ ու կարօտ, ցանկութիւն ու ծող:

Ու եղել է այս կեանքը երկրային
արեւի առաջ խաւնուած մի զոհ.
աղօթք են արել հրակամ Ոհին —
ապրել են հրում ու անցել են զոհ:

Ծոգնե՞լ եմ, յոգնե՞լ երազից, մահից,
անտարբերութեան վիհակից երեր.
ուզում եմ զգալ, օօտափել ցորից,
չունենալ երազ, թռիչք ու թեւեր:
Կ'ուզէի՞ լինել հաստատ ու կարող,
աշխարհը զգալ, որպես հաղցր դող,
եւ ամբողջ կեանքով մի պահ երկարող —
վառուել ու մարել հրճուանքում բանտող:
Եւ ինչո՞ւ համար իմ մարմինը յոյս,
մարմինը մարող, մարմինը հիւանդ
դեռ պէտք է կրի դիակը հոգուս,
որպես ծանր բեռ՝ ինամեայ աւանդ:
Ձնշում է, ճնշում ուսերիս վրայ
դիակը այդ ցուրտ, ծանր, անբաժան,
ինչո՞ւ եմ կրում ես բեռը նրա,
այդ բեռը դաժան:
Եւ ինչո՞ւ համար, օրերիս ծոցում,
ուր բերել է ինձ բախտը այս գիշեր —
ես ինձ եմ փնտրում ու մեռելոցում
վերջին տագնապում, որ կոչւում է — սեր...
. . . . . .
Ես ինձ եմ ուզում, ինձ, լսո՞ւմ ես, կի՛ն,
ինձ, որ չե՛մ լինի էլ ուրիշ անգամ,
որ վաղը պիտի հո՛ղ դառնամ կրկին,
ու անցնեմ անդարձ ու աշխարհ չգամ:
Ի՞նչ անեմ ես, կին, — ի՞նչ անեմ հիմա,
թէ զգամ, որ ես անցել եմ անդարձ —
ու ցուրտ մռնչում ներման երեւոյ

մահը՝ աստղային զգեստներ հագած:
Եւ ցոյց տայ ինձ իմ երազած ուղին՝
յաւիտենութեան սահմանը ուրայն —
եւ ես հասկանամ, որ յաւերժը հին
վերջ չի ունենայ, որ հանգստանամ...
Երբ զգամ յանկարծ, որ հասել եմ ես
յաւիտենութեան սահմանը — ու նա,
հարացած հոգիս՝ աներեւոյթ, աներես՝
ցո՞ւրտ յաւերժութեան եզերքում մնայ:
Չէ՞ որ ով հասաւ յաւիտենութեան
ու Նիրւանայի լուսնաշխարհը սառ —
նա էլ չի՛ դառնայ կեանքին անսահման
ոլկիանը, որ կոչւում է Սանսար...

Օ, ծա՛նր է, ծա՛նր է, օ ծա՞նր է այնքան
ուսերիս համար բեռը յաւերժի.
— ախ, լինել թեթե՞ւ, հրո՞տ, հրակա՞մ,
վառուել, որպես զոհ, զոհս չմեռժի
արեւը — արեւ, որ Ա՛զնի, ու Ռա.
վառուել ու մարե՞լ աշխարհի վրայ՝
զոհի՞ պես արդար, ինքնաամոքիչ —
ու մահից յետոյ չլինի՞ ոչինչ...

1916

ԿԱՐԻՆԷ ՓՈԹԱՆՃԵԱՆԻՆ

ԾԻԱԾԱՆԸ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Դու իմ վերջի՛ն, իրիկնայի՛ն, աստղայի՛ն էակ...

Ես, աստղային մի պահ, լաքիրինթոսում ես կապոյտ,
ես՛յր, անցնում եմ, որպէս աստղ, հոգիս — մեռած աստղի փայլ.
այնքան տրտում է հոգին, բայց միտս ժպտում է հոգուդ,
որ երազը չդիպչեմ Գեղջոքայի ճաճանչին...

Հոգին չի մեռնում: Մարմինը թողած երկային փոսում —
Թափառում է նա Տիեզերական Լաբիրինթոսում:

Անցնում է բոլոր ճամբաները սուտ ու անբեր երկրի, —
որ պայծառ, մաքուր, դարձերից յետոյ,— Ձո գրկում բերկրի:

Բայց ե՞րբ կը հասնի հոգիս, որպես սէգ, սրբացած մի զոհ,—
Մայրամուտային եզերը կապոյտ,— լոյս եզերը Ձո...

ԾԻԱԾԱՆԸ

1

Լուսամփոփի պես աղջիկ Աստուածամօր աչքերով,
թոխախսաւոր, թափանցիկ, մարմինի՞ պես երազի,
կապո՛յտ աղջիկ, ակաթի ու կաթի պես հոգեթով,
լուսամփոփի՞ պես աղջիկ...

Ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ, որ չմեռնի իմ հոգին,
որ չմարի իմ հոգին ֆո ակաթե աչքերում.
ես ի՞նչ անեմ, որ մնայ ծիածանը երեփոյն,
որ չցնդի, չմարի՞ իմ հոգու հեռուն...

Լուսամփոփի՞ պես աղջիկ Աստուածամօր աչքերով,
թոխախսաւոր, թափանցիկ, մարմինի՞ պես երազի,
կապո՛յտ աղջիկ, ակաթի ու կաթի՞ պես հոգեթով,
լուսամփոփի՞ պես աղջիկ...

2

Երեք գոյն կայ երազային ֆո երկրում —
երեք գոյն:
Թափանցիկ են այն գոյները ֆո երկրում —
ֆո հոգում:

Դու ժպտում ես. ֆո լուսաւոր աչքերում —
երեք փայլ.—
ու բացում է, կապո՛յտ աղջիկ, ֆո հեռուն
լուսավառ:

Եւ տեսնում եմ դղեակները երկնահուպ,
գմբեթները սեգ:

Եւ յիշում եմ ոսկեծաղիկ մի ասուպ,
որ ընկաւ երկիր:

Ու լսում եմ, որ իրիկուայ մշուշում,
աւձրեւից յետոյ,
իրիկնային զանգակներն են կարկաչում
ու կանչում են, գոհ:

Եւ տեսնում եմ, որ դաշտերիդ, լճերիդ,
յո՜յս երկրիդ վրայ —
ահա իջել է աւետարակ ու վճիռ
մի կապոյտ հիմա:

Ու տեսնում եմ իրիկնային կապոյտում
բռնկուած կրկին —
գմբեթներիդ երկնասլաց ու ժպտուն
խաչերի ոսկին...

Եւ երազի պես պարուրում է յանկարծ
երկիրդ իմ հոգում.
ջինջ երկիրդ՝ աչքերիդ մէջ — մխգամած
իրիկուն...:

3

Երեք հաճանչ, երեք երանգ, երեք գոյն,
որ աւցան —
ես՛յր, կապել են ես աչքերում, իմ հոգում —
ծիածան:

ԿԱՊՈՅՏԸ

1

Կապոյտը հոգու աղօթանման է, հոյր,
կապոյտը — թախիծ.
կապոյտը — կարօտ թափանցիկ, մաքուր,
ու յուսակ, ու ջինջ:

Կապոյտը հոգ աչքերի անհուն
առաւօտն է թաց:
Կապոյտում հոգիս մի հին իրիկուն
անզօ՜ր հեծկլտաց:

Կապոյտը ծգին աղօթի կանչող
ղօղանջն է զանգի:
Կապոյտը — արցունք, ու կապոյտը — ցող
հոգու, երկնքի:

Կապոյտում անսուտ խօսքեր են հոսում
երկնքից-երկինք:
Հոգիս — Կապոյտի Լաբիրինթոսում
սրբացած կնիք:

Այն, որ չի եղել, որ պետք է լինի
մանկական սրտում —
հոսում է, որպէս լուսաւոր գինի —
հոգու կապոյտում:

2

Արեւից առաջ եւ ոսկուց առաջ —
տրտո՜ւմ է այնքան.
խմում է հոգին բաժակը երազ
այդ կո՛յս տրտմութեան:

Արեւից առաջ, երբ կապոյտը՝ ինձ,
սիրքնա՞ծ, գուցա՞տ —
հիւանդ աղջկայ երազ է կարծես՝
աղօս, լուսակաք:

Երբ ասղը՝ մի պահ դառնալով անտես՝
վառւում է յանկարծ:
Երբ տիեզերքը աղօթք է կարծես՝
հոգու մէջ հանգած:

Երբ դեռ ո՛չ մի ձայն չի ընկնում հոգու
բաժակի մէջ լուռ: —
Երբ որպէս ուրու դեռ ճնած ես դու
կապոյտում մաքուր:

3

Առաւօս կանուխ, երբ արեւ չկայ,
լուռ զգում եմ ես, —
որ լուսէ հոգիս ճնած աղջկայ
մօտի՞կ է այնպէս:

Ու լսում եմ ես, լսում եմ միայն,
երազուն-տրտում:
Ժպտում է հոգիս անդորր տրտմութեան
գուցատ կապոյտում:

Զգում է հոգիս երբերի վրայ՝
անմարմին, դողդոջ —
կապոյտ, երկնագոյն համբոյրը նրա —
լուսաւո՞ր էրոջ:

4

Քո՛յր, արցունքները — մաքուր
ղօղանջներ են, որ
յղանում են երկնագոյն
զանգ-աչքերդ խոր:

Ղօղանջնե՞ր են — լուսաւոր, —
կո՞յս թռիչք ու բե՞ւ.
ղօղանջնե՛ր են — բեւաւո՞ր
ու բերե՞ւ, բերե՞ւ...

5

Երբ չկայիր կարծես դու՝ դղեակում հոգու
աննշուկ ննջած, —
Քո՛յր, իմ հոգին, աստղայինն, որպես ցինջը ջո —
կապոյտում մնաց: —

Պատուհանից դղեակի ես տեսնում էի
երկինքները բիլ:
Շրթերիս մէջ, հոգուս մէջ մի խօսք ուներ.
— քո՛յր, ննի՛ր, ննի՛ր...

Միայն զգում էի ես՝ լուռ, տրտում այնպես՝
որ ամեն ինչում —
Քո լուսաւոր հուրերաց հարազատ ու հեզ
կապոյտն է ծնչում:

Եւ չկայիր կարծես դու՝ դղեակում հոգու
աննշուկ ննջած:
—Քո՛յր, իմ հոգին, աստղայինն, որպես ցինջը քո—
կապոյտո՛ւմ մնաց:

Ո Ս Կ Ի Ն

1

Կապոյտի՞ մէջ, կապոյտի՞ մէջ — արեւի ոսկին:
— Բնի՛ր, բնի՛ր, կապո՛յտ աղջիկ, չզարթնես ծեգին:

Կարապները լճերի՛ մէջ, ջրերի վրայ
դեռ բնել են, դեռ ցիրուման են. կ'արթնանան հիմա:

Ու զանգերը ղօղանջում են՝ կարկաչուն, ճնշուն,—
փախցնում են աստղերի չուն ու կանչո՛ւմ, կանչում:

Խա՛չը վանքի, ե՛րգը զանգի — կապոյտում վերջին.
—զարթի՛ր, զարթի՛ր,կապո՛յտ աղջիկ, ու ցայի՛ր խաչին...

Նա ոսկի՛ է, երկինք նետած մի կտոր ոսկի.
Ցա — մի երազ, ոսկի՛ միրաժ արթնացած խօսքի:

Ու արեւի թեւը ահա լճերի ցիրուման
հրդեհում է աստղանկար տրտմութեան հեռուն...

Ու մարում են, ու մեռնում են այն աստղերը, տե՛ս:
Արթնացել են կարապները ու կանչո՛ւմ են մեզ:

Փո՛յր, վայրկեանը սրբազան է—բռնկում ու մահ.
կարապները, որ կանչում են, կը մեռնեն հիմա:

Ու կը մարի խաչը վանքի կապոյտում վերջին.
—զարթի՛ր,զարթի՛ր,կապո՛յտ աղջիկ,—ու ցայի՛ր խաչին...

2

Արեւի ոսկին ինչո՞ւ է փակում
մեր աչքերը թաց —
երբ՝ կապոյտ երազն արթնացած հոգում՝
ցայում ենք յանկարծ:

Երբ բաց եմ աչում աչքերս՝ կապոյտ,
աստղային ճիրճից,—
որ տեսնեմ ոսկու ծիծաղը՝ աճպոյտ
յղացած հրից:

Ինչո՞ւ է խոցում, ասեղի նման,
ոսկին արեւի —
մեծաւոր ժամին վերջին տրտմութեան
վերջին բարեւի...

3

Դու տրտում ես, բայց արեւի բռնկուած ոսկին
ոսկեզօծել է ձո կապոյտ, աստղային հոգին:

Ու սփրթնած դեմքի՛դ վրայ—բռնկուող մի փայլ.
այն արե՛ւն է, այն արե՛ւն է, աստղային եղբայր:

Դու չե՞ս ուզում, դու չե՞ս ուզում արեւի ոսկին.
չե՞ս հաւատում արեւի տակ շիկացած հասկին...

Միայն ցայի՛ր ու հասկացի՛ր, օ, ցայի՛ր ու տե՛ս.—
մի ոսկեզոյն ծով են հագել դաշտ, աճատ ու սեզ:

Ու լեռնային, երկինք տանող ձիւնածածկ ուղին
հրաժեշտ է տալիս հիմա բիլ մառախուղին...

Եւ ամեն տեղ, ինչպես եւ այն լեռնուղու վրայ—
բռնկուել է ժպիտ-ոսկին Արեւի — Նրա...

4

Օ, ցայիր ու տե՛ս, ցայի՛ր ու ժպտա,
օ, ցայի՛ր հեռուն.—
վառուել է ահա մի ոսկի շղթայ
բոլոր աչխերում...

Սփրթնած, գունատ կապոյտը արդեն
չքացաւ, չկայ.
ժպտուն, ոսկեփայլ վառուում են ոտ դեմ
աչխերն աղջկայ:

Շղթան ոսկեգոյն, հրաշէի՞ շղթան
բռնկուել է, տե՛ս:
Նայիր ու ժպտա՛, դու ժպտա՛ միայն՝
արեւոտ – ու հեզ...

Եւ բոլ սո՞ւրբ թուայ, որպես կոյս հեռուն
կապոյտ մենութեան —
արեւածագին բոլոր աչխերում
բռնկուած շղթան...

5

Օրակ-օրակ, ոսկեգոյն ու հրաշեկ,
օրօրում են ալիքներն լճերի:
—Կապոյտ ցիրհում սպասումը չմաշե՛ք.
բոլոր արեւը մի ցո՛ր բախտի լուր բերի:

Ահա ճերմակ առագաստներն՝ ոսկի
արեւի դեմ հարսների պես շիկացած՝
օրօրուելով, ցազանիճերով, կողք-կողքի —
ճամբայ ընկան դեպի հեռուն ոսկեբաց...

Դէմը, հեռուն, կապուտաչեայ ջրերում,
ոսկեգնար դէմքը արեւ-արեայի —
հուր ժպիտի ոսկի թերթեր է թափում,
որ լաստերի ճաճապարհը զարդարի...

Առագաստները, ոսկեզոյն ծող հագած,
արեւելեան հարսների պէս ցագանուս,—
օրօրուելով ճամբայ ընկան բեւաբաց՝
դէպի ոսկի հեռաստաններն արեւոս...

6

Հրոս, հրաշեկ ոսկին արեւի՝
հրդեհուած հոգու հովն է երեւի...

Հուր հովը հոգու՝ հրդեհուած հիմա —
լեռնային վանքի խաչերի վրայ:

Փարուել է վանքի ոսկեթել խաչին՝
ժպտալաւ՝ որպէս համբոյրն առաջին:

Որպէս կարմրութիւնն այն այրող, հրոս՝
հարսնական դէմքիդ՝ ամօթխած կարոս...

Որպէս թափանցիկ կարմրութիւնն հոսող՝
այտերիդ վրայ՝ ոսկեզոյն մի ծող...

7

Ես հաւատում եմ հասկի ծռւկին, խոսքին—
երբ հագել ես արեւի բափանցիկ ոսկին:

Հեռասահներդ հացի — ոսկեզոյն, ոսկեզոյն:
Դու հայեցիր, ժպտացիր իմ գուցաս հոգուն:

Աչքերիդ մեջ, հոգուս մեջ, ես՛յր իմ, կա՛ր, ես՛յր իմ, կար՝
ոսկու ծռւկ, ոսկու փայլ, ոսկու ճաճանչ ոսկեվառ:

Եւ հոսում էր ոսկեծուփ կապոյտից դեպի վար՝
արտերի գիրկը բերրի՝ մի հեքսուրիւն հրավառ:

Ու ժպտում էր բռնկուած ոսկին՝ աճեկ ու անփոյթ՝
կապոյտ հոգուս, աչքերիդ, ու երկնքի՛ մեջ կապոյտ:

Եւ հաւատում էի ես հասկերի խոսքին,
ու վառւում էր կապոյտում արեւի ոսկին...

8

Արեւը — որպես մի ոսկի թիթեռ:
Իսկ երկինքը կայ — ու կապոյտ է դեռ:

Ձնգում են թեւերն՝ արնագոյն ու վառ,
այրում է նա — ինչո՞ւ, ո՞ւմ համար:

Վառւում են, վառւում կապոյտում անծիր
թեւերը նրա ու պսակը հիր:

Ու ճախրում է նա — մի ոսկի թիթեռ:
Իսկ երկինքը կայ — ու կապոյտ է դեռ...

9

Ու թուլացած, ու սփրթնած կը մարի
արեւի ոսկին —
վերջին անգամ եզերքի մօս կամարի
բռնկուած կրկին:

Ու կապոյտը՝ արեւի մօս ծիկացած,
վարդագոյն —
ո՛յր, կը փռի դեմքիդ վրայ — ամօթխած
կարմրութիւն:

Ու կապոյտը, ձուլուած ոսկուն, հեռուներում
կամարի —
ո՛յր, հոգուս մէջ, աչքերիդ մէջ, երկինքներում
կը մարի...

10

Ու կը տարածուի մի տրտում մեռուց
մանուշակագոյն.
կապոյտի, ոսկու տրտմութնակ մի յուշ —
խանձուած հոգում...

Արեւը ժպտաց, երբ կոյս եր հեռուն,
ու գունատ եր դեռ:
Արեւը անցաւ — կապոյտ դառներում
մի ոսկի թիքեռ:

Կապոյտը վառուեց, խանձուեց ոսկում,
արեւը — անցաւ.
արեւը — անհուն ու որբ կապոյտում՝
բռնկուած մի ցաւ:

Իջնում է ահա մի տրտում մեռուց
մանուշակագոյն.—
կապոյտի՛, ոսկո՛ւ տրտմութնակ վերյուշ՝
խանձուած հոգում...

ՄԱՆՈՒՇԱԿԱԳՈՅՆ

1

Կապոյտից յետոյ եւ ոսկուց յետոյ,
Ես՛յր, փուռից ահա իմ տրտմած հոգում,
որպես երազում ապրած երեկոյ —
մի խամրած մշուշ մանուշակագոյն...

Ցիշում եմ հիմա, որ մի իրիկուն,
ժպտալուց յետոյ, երբ ոսկի օդքան
ընկաւ աւօթխած գիրկը լուսեան —
փուռից ես դեմքին, իմ տրտմած հոգում
մի խամրած մշուշ մանուշակագոյն...

2

Աչքերիդ վճիտ ու բաց կապոյտում —
ժպիտը ոսկի·
մայրամուտային մշուշ տրտում՝
այտերիդ վրայ·
եւ, որպես ծուռկ չքաղուած հասկի,
մեր յոգնած սրտում —
սպասումը, որ ցրտաբեր եռմին
հիմա կը սուրայ...

Ըսուերներն իջնում ու փարուում էին
դեմքիդ, իմ հոգուն.
մրնում էր հեռուն խաճնուած հոգու,
որպես իրիկուն·
երազներդ, ես՛յր, երանգներ էին,
խամրեցին միգում, —
խամրեցին, հանգան մայրամուտային
իրիկնամուժում մանուշակագոյն...

3

Ու տրտում էին ֆո աչէերը քաց,
ու մբնում էին գոյներն իմ հոգում,
երբ վերջին անգամ տրտմօրէն ժպտաց
դէմքդ մեռուծում մանուշակագոյն...

Եւ ֆո քաց, վճիտ, ցօղոտ աչէերում
լոյսի նաճանչներ նախրելով անցան —
ու բացուեց յանկարծ միգամած հեռուն՝
ֆո ջինջ աչէերում — պայծա՜ռ ծիածան...

Փո՛յր իմ, այն մեռնող արե՜ւն էր — ժպտաց,
մի վերջին անգամ բռնկուեց միգում,
որ ծիածանէ ֆո աչէերը քաց
ու տրտում հոգիս մանուշակագոյն...

4

Իրիկուն էր: Իրիկնային տրտմութեան
յուշն էր հիւսուում — մայրամուտի մի երազ:
Դու հառագաս ու մօտ էիր ինձ այնքան՝
ֆո աչէերով իրիկնային, ցօղաքաց...

Փո աչէերի ու երկնքի կամարում
նառագայթներդ, այնքան հե՜զ, այնքան ջի՜նջ,
նախրում էին, հոգեվարում ու մարում՝
համբուրելով ծիածանը ամոքիչ...

Եւ լոյսերը, որ նախրեցին ու անցան,
իրիկնային ժպիտի մէջ այն վերջին —
անրջացած, երազ դարձած սրբացան,
որպէս դէմքը ֆո լուսաւոր — իմ հոգին...

5

Աղօթքի պես, երգի պես
հոգիս ճախրեց դաշտերում.
միայն զգում էի ես
ֆո հմայքն ու ֆո հեռուն...

Միայն զգում էի, որ
երկինքներում կուսական
բռնկումները բոլոր
ցուաղեցին ու հանգան:

Հաշտութիւն էր ու ներում
ֆո ժպիտը արքազան —
ֆո արցունքոռ աչքերում
անրջացա՜ծ ծիածան...

6

Ֆո՛յր, երազներն այրուեցին ու անցան,
եւ չի՞նչ մնաց ֆո աչքերում, իմ հոգում —
մի արբացած, անրջացած ծիածան՝
վերջի՞ն սիրոյ մի լուսաւոր ամոռում:

Ու յիշում եմ առաւօտը գունաթափ,
ու կապոյտը այն սփրթնած ու անհուն.
ու յիշում եմ, որ ես կանչեց մի կարապ,
երբ արթնացար առեւծգի դղեակում...

Ու յիշում եմ ես երկինքը վարդագոյն,
ոսկի վարդեր, որ բացուեցին ու չկան...
Ու յիշում եմ իրիկնային երկնքում
հրաժեշտը ոսկեժպիտ կարմրութեան...

Ու յիշում եմ հուր արեւը — մի բիբեռ, —
ճախրեց, անցաւ, աննիւթացաւ ու չկայ.
իսկ իմ հոգին այնքան յստակ, չինչ է դեռ—
մի լո՜յս ժպիտ լուսաժպիտ աղջկայ...

Իսկ երազներն այրուեցին ու անցան:
Բայց չինչ մնաց ես աչքերում, իմ հոգում —
մի սրբացած, անրջացած ծիածան՝
վերջի՜ն սիրոյ մի լուսաւոր ամոքում...

ՀՐԱԺԵՇՏԻ ԵՐԵԿՈՆ

1

Ջիլջ ճախրում են ղօղանջներն հորիզոնից հորիզոն.
—ինչ տրտո՞ւմ է, կապո՛յտ ալջիկ, հրաժեշտի երեկոն...

Տրտմութիւն ու լոյս է իջել ես աչքերում, իմ հոգում.
օրհնեմ, օրհնեմ այս երկրային հրաժեշտի երեկոն...

Եւ քող հալուե՛ն, ձուլուե՛ն, մարուեն իրիկնային կապոյտում
մեր կոյս հոգու իրիկնային սպասումներն տրտում:

Եւ գանգերը աներջօրեն, հորիզոնից-հորիզոն,
օրհներգելով քոյ օրօրեն հրաժեշտի երեկոն...

2

Դու մօտեցար որպես էոյր — ու հեռանում ես ահա.
աղօթք դարձած, խնկաբոյր — դու հեռանում ես ահա:

Ինչո՞ւ եկար, եւ ինչո՞ւ անրջացար ու չկաս.
հրաժեշտի մի համբոյր — ու հեռանում ես ահա...

Գուցե սո՞ւս է սերը այս — հրաժեշտի մի երազ,—
էո՛յր, յո՞ւշ դարձած հեռաւոր, դու հեռանում ես ահա...

3

Դու գնում ես, բայց հոգիս սպասում է ձեզ.
—կապո՛յտ աղջիկ, ո՛ւր իմ հեզ, դու յետ չե՞ս գալու...

Ես ժպտում եմ, որ երկար ճանապարհին չտրտմես.
հոգիս մնաց ո՞րբ այնպես — դու յետ չե՞ս գալու...

Դու գնում ես, բայց կարծես կայարան եմ եկել ես,
որ հանդիպեմ, ոյր իմ, ձեզ, — դու յետ չե՞ս գալու...

4

Կ'անցնեն օրերը բոլոր
եւ տրտմօրեն խոնարհ, գոհ, —
այն Կայանը հեռաւոր
կը հասնենք մի երեկոյ:

Եւ ցուրտ հովը, որպես ոյր,
կարօտակէզ ու գթոտ,
կը համբուրէ սիրալիր
մեր աչքերը արցունքոտ:

Եւ զանգերը կարկաչուն,
հորիզոնից-հորիզոն,
տրտո՞ւմ կ'օրհնեն մեր վերջին
հրաժեշտի երեկոն...

ԳԱԶԷԼՆԵՐ

1

Կապոյտ բաժակը հոգեթով դու խմի՛ր,
սիրտդ լցուի քող հեքեաթով — դու խմի՛ր:

Իրիկնային երկինքը բիլ քող ացվերջ
հոգիդ լցնի կապոյտ կաթով — դու խմի՛ր:

Քող յո՛ւռ լինի. ացրջավար ու տրտում—
կապոյտ բաժակը հոգեթով դու խմի՞ր:

2

Իմ խօսքերը կարկաչում են կապոյտում,
կարկաչում են ու կանչում են կապոյտում:

Կարօտներ կան, որ ացմարմին ու տրտում—
միայն ծռուկ ու ինչիւն են—կապոյտում:

Երազներ կան, որ կարօտներ են միայն,
յո՞յս կարօտներ, որ կանչում են կապոյտում...

3

Ո՞ւմ եմ երգում. ի՞նձ թէ էեզ—չգիտեմ.
իմ երգում ինձ կը գտնե՞ս—չգիտեմ:

Թէ՞ ես ինձ եմ որոնում, բայց գտնում եմ էեզ.
կորցրե՞լ ենք արդեօք մեզ—չգիտեմ:

Գուցէ է՛ս եմ՝ ես երգում, գուցէ ի՛նձ ես դու երգում.
ո՞ւմ ես երգում. ի՞նձ թէ էեզ—չգիտեմ...

4

Կայ հոգու մեջ ու աշխարհում — մի ոսկի օդակ:
Բռնկուում է ցա ու մարում — մի ոսկի օդակ:

Ո՞վ չի գտել — ժպտալո՞վ, ժպտալո՞վ —
անդուլ վազքի ճանապարհում — մի ոսկի օդակ...

Բայց ես ինչո՞ւ, ո՛չ իմ, ինչո՞ւ տրտմեցի այնքան,
երբ բռնկուեց ո՛ւ աչքերում մի ոսկի օդակ...

5

Դու կապոյտը սիրեցիր — չգտար,
սիրտդ դարձաւ ձիւնածիր, — չգտար:

Երկինքներին՝ հեռաւո՞ր, հեռաւո՞ր՝
դու մանկօրեն ժպտացիր — չգտար:

Կո՞յր աչքերից՝ աղօթքո՞վ, աղօթքո՞վ՝
մի ինչ կապոյտ մուրացիր — չգտար...

6

Քո՛յր, գանգերի տխրութեան մի ղօղանջ է ո՛ւ հոգին:
Կղեակի մեջ մեռնութեան — բախտի կանչ է ո՛ւ հոգին:

Եւ մենակ է, քոյր-աղջիկ, այնքան մենակ ու տրտում.
իրիկնային կապոյտում մի նանաղ է ո՛ւ հոգին...

Ո՞ւմ ես կանչում եւ ինչո՞ւ. գանգերը ո՞ւմ են կանչում.
բայց չե՞ս գտնի, ո՛չ քոյր-աղջիկ, քող չկանչէ ո՛ւ հոգին...

7

Բոլոր խօսքերն իմ երգում — ճաճանչներ են լոկ:
Կանգոյս միգում — ոսկեգոյն ճաճանչներ են լոկ:

Քո աչքերից, ֆո դեմքից, ֆո լուսե երկրից
ճառագայթուած իմ հոգում — ճաճանչներ են լոկ...

Իմաստ չկայ, միտք չկայ խօսքերում այս հին,
բայց ինչո՞ւ են ամոխում — ճաճանչներ են լոկ...

8

Քո՛յր, իմ հոգին լուռ ու տարտամ — մի սուտեր է լոկ,
դդեակի մէջ ֆո մեծուքեան — մի սուտեր է լոկ:

Եթէ ճայես կը ճաճաչես, կը տեսնես յանկարծ,
որ ձեւերիդ այնքա՜ն նման — մի սուտեր է լոկ:

Գուցէ ժպտաս, գուցէ տրտմես, երբ զգաս, որ ես —
եղերակա՜ն երկուութեան մի սուտեր է լոկ...

9

Կը դողանջեն օրերը ֆո — կը մարեն.
կը կարկաչեն — մի երեկոյ կը մարեն:

Ու դողանջող օրերիդ մէջ երգուած
երազները ֆո լուսանեմ — կը մարեն:

Ե՞ս կը ճայես ու կը նչաս կարօտից.
չի՞նչ արցունքներ կը ճաճանչեն — կը մարեն...

10

Մենք չգիտենք, էո՛յր իմ, մեզ կապոյտը ո՞ւր կը տանի.
թէ լուռ լինենք, լուռ ու հեզ—կապոյտը ո՞ւր կը տանի:

Նա — տրտմութնակ մի կաոս, նրա անութը սակայն
ո՛չ դու գիտես, էո՛յր, ոչ ես, — կապոյտը ո՞ւր կը տանի...

Կորցրել ենք աչխարհի ճամբաները հին.
իմ ո՞րբ ընկեր, էո՛յր իմ, մեզ կապոյտը ո՞ւր կը տանի...

11

Ւո՛յր, ղօղանջի՞ պես ճախրել ու գնալ, —
հմայուած ու հեզ — ճախրել ու գնալ...

Երկնէից-երկիրէ, իրիկուայ մովում,
անմարմին, անտես — ճախրել ու գնա՞լ...

Դեպի Ամենի եզերքը կապոյտ
էո՛յր, ղօղանջի պես ճախրել ու գնալ...

12

Ինչ տրտում են զանգերը, էո՛յր, մայրամուտի, —
զանգերը թաց ու ցօղաբո՞յր մայրամուտի...

Ահա կոյսերը գնում են աղօթելու.
սգահանդես, տրտում բափօր մայրամուտի...

Լուսամփոփի պես կախուել է երկինքը բիլ
հոգուս վրայ — օ, ստո՞ւրք անդորր մայրամուտի...

13

Մահը, գիտե՞ս, մի լուսաւոր առաւպել է, ֆո՛յր:
Կեանքը այնքան մեղկ ու անգոյն ու անբեր է, ֆո՛յր:

Մահը անուշ, անրջալոյս տրտմութիւն ունի.
Կեանքը սակայն ծաչող, փախչող, անհամբեր է, ֆո՛յր:

Կեանքի կանչը անկումների ազդարար է յոկ.
Մահը սակայն կապոյտ երկրի մի բանբեր է, ֆո՛յր...

14

Իրիկուն է, ֆո՛յր, — աչերդ փակի՛ր,
յոգնաբեկ, տխուր, — աչերդ փակի՛ր:

Թարթիչներդ քող չքարքեն միգում.
միգամած ու խոր աչերդ փակի՛ր:

Կոպերիդ տակ քող երազս քաղեմ.
իրիկուն է, ֆո՛յր, — աչերդ փակի՛ր...

15

Դիր մատներդ կոյս աչերիս վրայ,—
հոգեվար հոգուս — աչերիս վրայ...

Ցոգնեցի կապոյտ մշուշից, մոլից.
դի՛ր մատներդ լոյս — աչերիս վրայ...

Մանու պես ճերմուկ դի՛ր մատներդ սուրբ —
խոնջացած, անյոյս աչերիս վրայ...

16

Իրիկունը ու կապոյտը կաճչեցին, ֆոյր, —
ճամբայ ընկաճ ոսաբոպիկ, երկնայի՞ն ֆոյր...

Ու գնում եմ դեպի ցաւերժը աւոֆիչ.
մահն է թեթե՞ւ, մահն է բարի՞, անմարմին ֆոյր...

Ցեռ չնայե՛ս, յեռ չնայե՛ս թաց աչերով,
դու իմ վերջի՞ն, իրիկնայի՞ն, աստղայի՞ն ֆոյր...

17

Որճան ցաւ կայ, որճան ցաւ կայ այս կարոսում իրիկնայինն,
ինչ տեղչում եմ մի՞թե կը տայ այս կարոսը իրիկնայինն...

Թաց աչերդ հովն է շոյում շիրիմների փսփսուկով.
թաց աչերի՞դ գուցե գթայ այս կարոսը իրիկնայինն...

Հսկումների պահը սուրբ է. ժպտա՛, ժպտա՛, մահացող ֆոյր,
որ չհանի՞ էեզ Գողգոթա այս կարոսը իրիկնայինն...

18

Թող ապրի հոգին — կապոյտ վանդակում.
կաճ գանձեր անգին — կապոյտ վանդակում:

Դու — ծարաւ աղջիկ, կապոյտը — գինի.
դու — արբած մի կին — կապոյտ վանդակում:

Ի՞նչ պիտի անես, ի՞նչ պիտի անես,
երբ բախտի գինին կապոյտ վանդակում...

19

Մարում է հոգիս, հո՛յր, հո աչքերում ու մեռնում է նա:
Մթնում է աճա հո կապոյտ հեռուն — ու մեռնում է նա:

Մեռա՛ծ, մարած ասղ՝ նա ինչո՞ւ ընկաւ երկինքները հո.
նա ինչո՞ւ վառուեց երկրի խաւարում — ու մեռնում է նա:

Շողի պես վերջին, ասղոս երկնից ընկած շողի պես՝
աչքերիդ վնիս ցո՛ղն է համբուրում — ու մեռնում է նա...

20

Իրիկնային հո՛յր իմ հեզ, մեռելի՞ պես դու անցի՛ր,
բոլ զանգերը օրհներգեն ու օրհնեն ինձ, — դու անցի՛ր:

Վարդե՞ր բափեմ արծաթե, արծաթե ասղեր՝
դիակարդիդ, հոգո՞ւդ մէջ, դագաղիդ մէջ, — դու անցի՛ր...

Մահաեսիլ ու անդարձ, օրերիս պես մի՞ն դարձած,
անվերադա՞րձ, յաւերժաբա՞ց, սպահանդե՞ս դու անցիր...

21

Կապոյտ կարոսը գուրգուրեմ ու լռեմ.
աղօթք անեմ, խունկեր բուրեմ — ու լռեմ:

Այն կարոսը, որ աչքերդ տուեցին,
հո՛յր, հոգուս մէջ ողջագուրեմ — ու լռեմ:

Այն կարոսով իրիկնային ու անուշ —
բոպիկ ոտքերդ համբուրեմ ու լռեմ...

22

Շրթունքներիդ հոգեվարքն է, հոյր իմ, — ինձ
աղօթք արա, որ ասղերի մէջ քաղեմ:

Ո՛յր, շրթունքներդ արեւին չերկարե՞ս.
ծունչդ սուրայ, որ ասղերի մէջ քաղեմ...

Շրթունքներիդ դիակառքով, հոյր իմ, ես
հոգի՞ս տարայ, որ ասղերի մէջ քաղեմ...

23

Սիրոյ երգի կորած տողն ես հոգուս համար,
սո՞ւրբ է կաթոգի՝ մոխրագոյ հոգուս համար:

Դու մի՞ն դարձած ու սրբացած մեռելներէ
սուգը տօնող տրտում ծո՛ղն ես հոգուս համար:

Իրիկնայինն մեռելոցի այս սուրբ պահուն —
ին՞ն կարօտի վերջին դողն ես հոգուս համար...

24

Քեզ կը հասնեմ, հո՛յր իմ, ես — Ամենուն երկրում,
երբ յուշ դարձած կը ճնես — Ամենուն երկրում...

Կը համբուրեմ, չի՞նչ այնպէս, շրթունքներդ ես, —
կը համբուրեմ, հո՛յր իմ, ինձ — Ամենուն երկրում...

Մեռած ասղի լոյսի պէս, որ ժպտում է մեզ —
դու իմ հարսը կը լինես — Ամենուն երկրում...

Կը մօտենանք մի իրիկուն ցաւերժական կապոյտին...
Կը մօտենայ երկրի հետուն ցաւերժական կապոյտին...

Վերջին սիրով կը համբուրեմ ես ծնողքը յոգնաբեկ.
դուն կը մնաս՝ նայուածդ հետուն՝ ցաւերժական կապոյտին...

Եւ մարմինը ես խնկաբոյր — ննջամեցի խունկեղէգ —
կ'պայթեմ, որպես զոհաբերում — ցաւերժական կապոյտին...

Կարս 1916
Մոսկուա 1917

ՈՂՋԱԿԻԶՈՒՈՂ ԿՐԱԿ

ԻՐԻԿՈՒՆԸ

1

Նո՛յնն է կարոտս հիմա՝ անսփոփ ու որբ.
նո՛յնն է ափսարիը վառուող ու արեւը բորբ:

Նոյնն է երկինքը կապոյտ ու լճակը ջինջ —
եւ չի՛ փոխուել իմ սրտում, իմ հոգում—ոչինչ:

Նոյնն է սերը՝ կրակուած իմ սրտում հիմա՝
նո՛յն կարօտը անսփոփ ու անուրը — Մահ:

2

Հուրը լափում է հիմա սուրբ մարմինը Ֆո:
Շուրջդ մութ է, շուրջդ — մահ, — երեկոյ:

Կապերի տակ Ֆո փակուած, կրակուն,
այրւում է Ֆո հոգին կրակում:

Հուրը լիզում է տարփոս շրթերով դեղին
Ֆո երկնագոյն աչքերի, Ֆո սրտի ուղին:

Հուրը լափում է հիմա սիրտդ աղջկայ —
շուրջդ մութ է, շուրջդ — մահ, — ու փրկում չկայ...

3

Դեպի երկինք է տանում ճանապարհը հին:
Ֆո հմայքն եմ ես երգում այս երգում կրկին:

Ֆո հմայքը հեռաւոր, Ֆո հմայքը կոյս, —
ընո՛ր ժպտում ես ահա կարօտած հոգուս:

Քո ժպիտն եմ ես տեսնում արեւի հոգում,
ո՛ւր ժպիտը վարդագոյն — իրիկուայ միգում:

Հո՛ւր է դարձել ու կրակ ո՛ւր ժպիտը ինձ —
ե՛ւ եմ ինտում ես ոտից սիրտս ոչ̣ակիզ:

Թող բորբոքուի՛, թող վառուի՛ կրակում —
ո՛ւր արեւաշաղ, ո՛ւր կարմիր կրակում: —

4

Հրափրիր վարդերի ոսկեշաղ, մաքուր,
գարնանային երեկոյ է ո՛ւր մարմինը, ո՛ւր:

Գարնանային երեկոյ է, ուր արեւը հիր
մայր է մտնում՝ արեւաշաղախ ու կարմի՜ր, կարմի՜ր:

Ու սուրում է, կարծես հետու աշխարհից ուրիշ
ո՛ւր մարմինի բոյրը, որպես այրուած հաշիշ:

Հովը սուրաց, գիշերն բնկաւ... Ու դառնում է, ախ, —
ո՛ւր մարմինը — հրափրիր վարդերի դազաղ...

5

Օրերը, որ գնացին, չեն դառնա հիմա:
Օրերը մեզ բերեցին մենութիւն ու մահ:

Տխրութիւններ, որ կեանքում այս անուն չունին.
— մո՜ւր եր տագնապը հոգուս, ու կարոտը՝ հին:

Դատերի մէջ երկրային, հետաւոր ու մօս,
մեզ չեր ժպտում ո՛չ մի լոյս ու կրակ աղօս:

Չգիտեիր, սի՛րս իմ, որ՝ խաւարում հեռուի
պետ է երկրի՛ կրակով ֆո հեռուց վառուի:

Բռնկուել է, սի՛րս իմ, տե՛ս, ֆո հեռուց հիմա —
շուրջդ խաւար է սակայն, ու մշուշ, ու մահ...

6

Կապոյտ աչքերդ ահա — աներուզ ու պաղ,
երկինքնե՞ր են — աներեւ, աներուրախ:

Երկինքներ են, ուր արեւ ու կրակ չկայ —
կապոյտ աչքեր մի մեռած, մարած աղջկայ:

Ու խաչել են ֆո կրծքին ներսակ ձեռքերդ շուշան.
ծաղիկներ են — արեւին չհասան...

Էլ աչքերդ երկնագոյն չե՛ն ժպտում հիմա.
դու պառկել ես դագաղում, ֆո՛յր իմ, Մահ...

7

Կապոյտ կարօտը մեռաւ: Խառնուեց հոգին:
Արեւի շողքը ահա զարկել է սարին:

Որպես հսկայ ադամանդ, տե՛ս, գագաթը ձիւն
բռնկուել է իրիկուայ կապոյտի միջում:

Ո՛չ է դարձել ոսկեգոյն — չի՛ հալչում սակայն.
գագաթներում յուշ դարձող երազներ չկան:

Ցուշ չի՛ դառնայ ձիւնը՝ ջինջ գագաթի վրայ՝
սիրտս — սառոյց, սիրտս — ձիւն, կրակի ֆուրա...

8

Այս աշխարհում իրիկնային, ուր ապրեցիր միայն մի ժամ,
հրա՛շք էր սիրտ, հրափրիր ծաղկումը էս հրաշուշան:

Բայց որք հոգիս, կարոշիս պես աստեղաձեւ ու խելագար՝
մի՛ այլ կեանքի փայլ էր կարծես, փայլ էր կարծես, կարծես չկար:

Փայլ էր հոգիս՝ շառագունուած իրիկնային էս երազում
ու կարոսով անմխիթար լոյսի մասին երգ էր ասում:

Ու որք հոգիս էս կարոսում յաւերժորեն միա՜ց, միա՜ց,
որպես կարմիր մի ողջակէզ՝ արիւնոտուած, հրե մի խաչ:

Դու ծաղկեցիր, սիրտ իմ, որպես հրափրիր, կարմիր գարուն —
ցա յո՜ւշ դարձած ցնդե՜ց, կորաւ իրիկնային այս աշխարհում...

9

Կապոյտ կարոսը ոչինչ, մեզ ոչինչ չտուեց:
Մութ է խորհուրդը կեանքի, ու անհուն, ու մեծ:

Մութ է խորհուրդը կեանքի, բայց կեանքի մթում
հազա՜ր հրդեհ կայ հոգու ու հազար խնդում:

Ես հասկացայ ու գիտեմ, որ աշխարհը մի
ե՛րգ է հնչեղ, հրաշունչ — հրաշունչ համի:

Չե՜րմ խլում է մեր հոգու շրթերին պապակ.
որքա՜ն դուներ կան հոգում՝ հեռաւոր ու փակ...

Երկինքնե՜ր կան մեր հոգում՝ անապակ ու չինչ —
կապոյտ կարոսը սակայն չտուե՜ց ոչինչ...

10

Կապոյտ լճի վրայ, բացերի մէջ պարապ,
օրօրւում է ահա մի սպիտակ կարապ:

Վարը, որպես երկինք, լինն է ծփում օրօր, —
վերը, որպես մի լիճ, կապոյտ երկինքն է խոր:

Ծի՜ր ու սահմանն չկայ, չկայ երկինք, երկիր, —
հոգիդ փուի՜ր առնակ, ո՛ղջ աշխարհը գրկիր...

Անրջօրեն ապրիր տիեզերքում հրապի —
որպես անդառն մի երգ, որպես նեռմակ կարապ...

11

Խինդ կայ հիմա իմ յոգնած սրտում.
խինդ կայ հիմա — այս վառուող արտում·

Հեռու հրով կրակուած, երազուն՝
օրօրւում է՝ յոգնաբեկ ու հասուն...

Ո՛ր է հովը՝ անմարմին ու անշուք,
երգը նրա — կարօտի մի շշուկ...

Երգ է ասում հասկերին միգամած,
երգ է ասում՝ խաղցրածայն ու կամաց: —

Արտը հրա՜շք է կարծես երազում —
ու ծփում է՝ յոգնաբեկ ու հասուն...

12

Իմ հետաւոր, իմ հետու եզերքում
կարծես գնում եմ հիմա ու երգում:

Հովը ծոյում է թեթեւ իմ աչքերը, բաց
ու բռչում է՝ սրաթեւ, արագաց:

Սիրոյ խօսք է իմ սրտին փսփսում,
ժամանակն է՝ երազուն ու հոսուն...

Ժամանակն է, որ անցաւ — ու չկայ.
տրտմում է, որպես սիրտ աղջկայ:

Քա՞ղցր կանչում է դեպի օրերի հետուն. —
որքան խի՞նդ կայ այս հետու դառներում...

13

Ցորենների արտի վրայ, հրաբորբոք,
անցնում է մի իրիկնային կարմիր մորմոք:

Հով է կարծես, կարմիր մի հով, հրե մի սիւք,
որ անցնում է հրաբորբոք, հրաշտուկ:

Վերը, հետուն, արիւնաման հորիզոնում,
մեկը կարծես — հրե մի մարդ — զո՞հ է անում:

Երկնից իջած հորիզոնի գծի վրայ —
վառել է մի ոսկեբոսոր, կարմիր ֆուրա:

Ու ֆուրայից կարմի՞ր, կարմի՞ր հոսում է վար՝
արտի վրայ՝ մի խնդուքիւն արեւավառ:

Ջերմ ծփում է արտի վրայ հրաբորբոք,
որպես հետո՞ւ մի խնդութեան կարմիր մորմոք...

14

Տուֆս դաշտում հեռու սպասում է հիմա:
Շուրջը մութ է ու մուժ — կարմիր մշուշ ու մահ:

Տուֆս բողած հեռուց, բողած խոնջեցիլ ու սեր —
Ես գնում եմ դեպի մահացում ու գիշեր:

Բայց կարոտս հիմա — հրափթիթ մի վարդ —
բռնկուել է միգում ու վառւում է զուարթ:

Ու վառւում է հոգիս տառապանքով աշուշ,
տուֆս բողած հեռուց, որպես ցնդած մի յուշ:

15

Դեռ մայր չի մտել երկնքում
արեւր՝ արիւնոտ ու կարմիր,
դեռ չի՛ մոխրացել իմ հոգում
ես վերջալոյսը կարմիր:

Վառւում է՝ արիւն ու կրակ,
փռել է արնահոտ մի փոշի.
վառւում է ու իջնում աւրագ —
աշխարհը բողնելով ուրիշի:

Գնում է, բայց կրկին պիտի գայ՝
ա՛յլ կեանքի ժպիտով ու երգով,
գնում է — ու կրկին պիտի գայ —
բայց մի այլ — մի ուրիշ կրակով:

16

Ես լռել եմ հիմա, խոնարհուել եմ հլու —
սի՛րս գիտէ միայն՝ արցունոյս է գալու:

Սիրս գիտէ հիմա՝ պիտի իջնի գիշեր,
պիտի մեռնի, մարի ամէն կարօս ու սեր:

Մութը պիտի իջնի ու աշխարհը այս հին
պիտի ցնո՛րէ դառնայ, պիտի գգուի մաճին:

Պիտի ցնդի, մարի, որպէս հեռու մի յուշ —
միմչեւ կարմիր վառուի արցունոյսը աննուշ:

Միմչեւ վառուի մուժում արեւը հուր, հզօր —
ու ո՞ր փայլով խնդայ հորիզոնը բոսոր:

Սիրս գիտէ հիմա, որ արեւը մեր այս —
փայլ է ուրի՞շ կեանքի, ուրիշ կեանքի երազ:

Պիտի իջնի, մարի երկիմքներում բոսոր —
որ արթնանայ նորից՝ հեռաւոր ու հզօր:

17

... Մայրամուտի այս սուրբ, հրակարմիր միգում,
բորբ արեւի վառուող, ողջակիզուող հոգում,
որպէս անդարձ երազ, որպէս անցած մի յուշ —
մոխրանում է ահա էն մարմինը անուշ:

Որպէս կարմիր մի վէրք, մի արնագոյն ճուրա,
բռնկուել է ահա հորիզոնի վրայ,
այրւում է, որպէս իրիկնային մի սեր,
ու գնում է դէպի մայրամուտ ու գիշեր...

Սիրտս է կարծես մխում,
սիրտս — մաֆուր, գուարթ,
սիրտս — երկնի մովում
կարմիր բացուած մի վարդ:

Այրում է, բոսոր,
վա՛ր է իջնում աւազ —
հրաբորբոք, հզօր
սիրտս՝ կարմիր կրակ...

Սի՛րտս — արեւ, սիրտս — գարուն,
հրի՞ բաժակ ու սիրոյ, —
իրիկնայինն այս աշխարհում —
ֆա՞յդր գոն...
. . . . . .

Յերեկների բոյնը բոսոր
սիրտ իմ, տա՞ր, սի՛րտ իմ, տա՞ր, —
բոդ տարածուի գիշերը խոր
ու արդա՞ր:

Մա՛յր մտի՛ր, սի՛րտ, ու ծածկուիր —
խաւարո՞ւմ, խաւարո՞ւմ.
յո՛ւշ է կեանքը, ոսկի՞ մոխիր
ու մարում:

Մա՛յր մտի՛ր, սի՛րտ, կարմի՛ր երազ,
երկինքներում ցուրտ ու սին, —
որ վայրը, սեգ, դու բարձրացաս
արեւի՞ հետ միասին...
. . . . . .

Արեւն իջաւ: — Մօս է ծիրին: —
Փա՞ռք հրաշեկ երկնաւորին:

Նա չի տանի դեպի կորուստ.
զո՛հ է նա մեզ՝ վառուած վերուստ:

Արեւը — մի ոսկի հրաբէ,
հրէ մի սիրտ, հրէ մի աչք:

Արեւը, որ խե՞նթ է հիմա,
արեւը — կեանք, արեւը — մահ:

Նա՛ է տալիս թախիծ ու թոյն,
կարմիր ժանտախտ, հիւանդութիւն: —

Բայց զո՛հ է նա՝ վառուած վերուստ –
ու չի տանի դեպի կորուստ ..

1918 2–3

ՎԵՐԱԴԱՐՁԸ

1

Երբ երկնքի մոլուժ վերջին աստղը հանգաւ՝
ճա իր տուընք բոլոց ու ճանապարհ ընկաւ։
Դեմը՝ դաշտ էր ճերկած՝ արգաւանդ ու խոնաւ,
վերը, հեռո՜ւ-հեռուն, որպես հրէ մի ճաւ,
առագաստը փռած, հրամանուած ու հիր՝
բարձրանում էր հեռու արեգակը կարմիր։
Զով էր դաշտում, չկար դեռ տագնապ ու կրակ,
ու խլլերով բերեւ ճա գնում էր արագ,
հեռանում էր անդարձ, անսփոփ ու լռին
ու ճայում էր հեռու հորիզոնի ծիրին։
Տարօրինակ, մեծակ, արտում կարոս ու հուր՝
ճա գնում էր արագ ու՝ երգում էր տխուր,
ու ճայում էր հեռու հորիզոնի ծիրին
եւ լսում էր մի ձայն, որ կանչում էր լռին։
Հեռուներից կապոյտ մեղմ կանչում էր ճրաճ
մի հեռաւոր ընկեր, կարօտակէզ մի ձայն, —
մեղմ կանչում էր ճրաճ դէպի երկնի հեռուն
ու սուրում էր ճրաճ մոռացում ու գարուն։

2

Ու խլում էր անուշ հովը ճրա դէմքին,
համբուրում էր ճրաճ, որպես սիրող մի կին,
գուրգուրում էր ճրաճ, անհեւոյթ ու մութ,
ու կանչում էր դէպի հեռուներր կապոյտ։
Նա գնում էր բերեւ, որպես անփոյթ — ուրու
ու ձգում էր ուղին դաշտում — հեռո՜ւ, հեռո՜ւ,
ոլորում էր անվերջ, որպես անդարձ մի՜ երգ,
որ դաշտերը բողած, բողած հովիտ ու հերկ,
սեգ լեռների միջով, ոլորտներով վերին
խառնում է հեռու հորիզոնի ծիրին։ —

Ու կանչում էր նրան կարոտակեզ մի ձայն,
ծուկներով աննւշ նա ասում էր նրան.
«... Ամեն տագնապ ու հոգս թողած երկրի հողին՝
բայլի՜ր, բայլի՜ր անվերջ կարոտներիդ ուղին.
մի կարոս է հոգիդ, հեռու ասղի մի փայլ —
բայլի՜ր, բայլի՜ր անվերջ, յաւերժասե՜ր եղբայր...
Արեգակը, կարմիր, կը բարձրանայ հիմա
ու կը վռե հովտում կարմիր տագնապ ու մահ,
խե՜նք կը խնդայ վերից՝ տուիասեր ու զազիր
բայլի՜ր, բայլի՜ր անվերջ ու լեռները հասիր:
Հովիտներին թողած ամեն տագնապ ու յուշ՝
տա՜ր լեռների հովին կարոտներդ անուշ,
որ դաշտերի կարմիր, աղեսաբեր մուժում
չխառնուի հոգիդ ուղիների փոշուն...»
Ու բայլում էր շտապ, սրտում ուրի՜շ մի հուր,
հեռանում էր անդարձ ու երգում էր տխուր,
ու խլում էր ամին նրա տխուր դեմքին,
համբուրում էր նրան, որպես սիրոյ մի կին...

3

Իրիկունն էր արդեն փռուել շուրջը նրա,
երբ նա նստեց ձիւնե նաւապարհի վրայ:
Ճանապարհը՝ կապոյտ՝ ոլորում էր առաջ
ու լեռնային մաքուր պտոյտներով սառած՝
վե՜ր էր ձգում անվերջ՝ խորհրդաւոր ու մութ՝
ու կորչում էր հեռու երկնքի մեջ կապոյտ:
Լո՜ւռ էր շուրջը այնպես: Չկար շունչ ու ձայն:
Իրիկուն էր ու զով լռութիւն էր միայն:
Հովը խլում էր պաղ նրա յոգնած ուսին
ու պատմում էր հեռու երկինքների մասին...
Բայց չէր լսում կարծես նա խօսքերը նրա —
յոգնութիւն էր իջել նրա հոգու վրայ:
Ու թւում էր նրան, որ խլել է մի դար...
Լո՜ւռ էր շուրջը այնպես, շուրջը ոչ ոք չկար:

Ու բուում էր նրան կեանքը հեռու մի յուշ,
որ ցնդել է արդեն ու դարձել է մշուշ...
Ցուրտ էր շուրջը այնպես, լուռ էր շուրջը այնքան —
ու վար նայեց յանկարծ նա աչքերով տարտամ:
— Վարը, որպես հեռո՞ւ, անդարձ կեանքի մի յուշ՝
տարածուել էր մի նուրբ ու թափանցիկ մշուշ.
մայր էր մտնում հեռուն արեգակը բոսոր
ու ժպտում էր կարմիր, հեռաւոր ու հզո՜ր...
Ու կարմրածոր վառուող, կարմիր արտից նրա
վար էր ծորում՝ բմրած հովիտների վրայ՝
ջերմ արիւնը նրա կաթիլներով հրկէզ —
ու վառւում էր դաշտում, հրդեհւում էր կարծես:
Ու արիւնը նրա իրիկնային մուժում
խառնւում էր հեռու ուղիների փոշուն...

4

Նա նայում էր մեռնող արեգակի հրին
եւ, չգիտեր ինչո՞ւ, արտասուում էր լռին:
Սի՛րտը զարկում էր խուլ, որպես ջարդած մի զանգ
ու անցնում էր հոգուց մի հրաշունչ հոսանք:
— Որպես վառուող մի սիրտ, ողջակիզուող կրակ,
մայր էր մտնում հեռուն արեգակը հրակ,
որ գիշերից յետոյ, որպես հրէ մի վարդ,
նորից վառուի ծիրում ու բարձրանայ զուարթ —
եւ յափուելով անվերջ իր կարմրակէզ հրից՝
երկինքները մովում ողջակիզուի նորից —
որ դաշտերին խոնաւ, ճաճիններին նրնիմ
տա՜յ իր վառուող հոգու ոսկիները վերջին...
Նա լալիս էր անօգ, երբ արտաբեկ զգաց,
որ բռնկուեց արտում արնաշաղախ մի կայծ:
Ոտի ելաւ յանկարծ, շուրջը նայեց մի պահ —
լո՜ւռ էր շուրջը այնպես, լռութիւն է ու մահ:
Հովը նորից խռնեց նրա յոգնած ուսին
ու փսփսաց հեռու երկինքների մասին...

Բայց չլսեց նրան: — Սրբեց աչքերը թաց
եւ արեւի հրին կարօտակէզ ժպտաց:
Եւ հայեացքը յառած արեգակի օղին —
նա ժպտալով բռնեց վերադարձի ուղին...
Եւ վայր իջաւ արագ նեռուներից պարապ --
ու նչում էր հոգին, որպես մեռնող կարապ.
սեգ լեռների վրայ, լուրթ երկնքի միջում
գովքն էր երգում մանի, որպես մեռնող թռչուն:
— Մայր էր մտնում նեռուն արեգակը նրակ —
ու խայերով թեթեւ նա իջնում էր արագ,
որ համբուրե այնտեղ, հովիտներում նոճիմ,
բորբ արեւի թողած ոսկիները վերջին...

1918 Յուլիս

ԱՌԱԻՕՏ

1

Իմ անցած օրերի պես,
հնացած օրօրի պես,
ես արդեն հեռացել եմ,
հնացել եմ ես.
ես արդեն հնացել եմ,
ես արդեն հիմա ծե՜ր եմ,
հեռացել ու անցել եմ —
ծերացել եմ ես:

Բայց այս վառ օրերի մեջ,
երբ հողմերն ալմկում են,
ալմկում ու երգում է
անցած սիրտը իմ.
ես կարծես դեռ ջահել եմ,
ինձ կարծես հմայել են
եւ իմ սիրտը պահել է
կրակները հին: —

Ախ, գիտեմ, որ այդ դո՛ւ ես,
որ այդպես հմայում ես,
հմայում ու ճայում ես
օրերում այս հուր.
դու անուշ կարկաչում ես,
դու կանչող մի հնչիւն ես,
կարկաչում ու կանչում ես
չգիտեմ, թե ո՞ւր:

Եւ հիմա ես լսում եմ,
որ վերջին երազում իմ
ես կարոտն սկսում է
իմ հոգին յուզել —

ես կարծես ծերացե՞լ եմ,
ծերացել ու դարձե՞լ եմ
ու ցորի՞ց երազել եմ
կարոտաճիճ ու սեր...

2

Օրերը հուր են հիմա,
օրերը հողմ են հրե.
խաղցր է կեանքը, որպես մահ,
խաղցր է աշխարհը հրե:
Ո՞վ գիտե՝ ո՞վ է վառել
հուրը, հրդեհն այս հսկայ.
ես գիտեմ՝ դո՛ւ ես վառել
հուրը, հրդեհն այս հսկայ: —

3

Հնչում են խօսքերը, բառերը,
յանգերը, վանկերը բոլոր,
երբ խաղցր կարոտդ վառել է
սրտիս մէջ ցոր սեր ու օրօր:

Սրտիս մէջ վառուել է, վառւում է
կարոտդ աննուճ ու հրկէզ —
իսկ դուրսը հողմի պես տարւում են
օրերը շեշտով այս երգիս:

Օրերը փրփուր են, ալիք են,
ծփում են փրփուր առ փրփուր,
հողմի պես թռչում է գալիքը —
յուզւում են օրերը պուրպուր:

Յուզւում ու ծփում են օրերը,
ինչպես իմ երգերը բոլոր,
երբ խաղցր կարոտդ վառել է
սրտիս մէջ ցոր սեր ու օրօր:

4

Հնչում են օրերը, կանչում են,
օրերը — կարմիր ու բոսոր.
օրերը դողացջ ու ինչիւն են,
զնգում են՝ ձրե ու ձգօր:

Ու սիրտս զնգո՛ւմ է, զնգում է,
թռչում է՝ կրակ է ու բոց.
լսո՞ւմ ես սրտի իմ զնգունը,
լսո՞ւմ ես, լսո՞ւմ ես, թե ոչ...

Կրակ կայ սրտիս մէջ, կրակ կայ,
ձրդեհ է՝ վառւում է ձրկէզ.
գալիքը կ'ուզեմ որ արա՛գ գայ —
անդարձ է կարոսը երգիս:

Կ'ուզեմ որ կեանքի մէջ գալիք այն
երգերս զնգան ու ինչեն —
կ'ուզեմ որ լսե, ախ, գալիքը
երգերս այս վառ ու ինչեղ...

5

Նո՞ր է կարոսս ինքա. նուր է կարմիր ու ձրդեհ:
Նո՞ր է ինքայքը, որով դու ուզում ես կախարդել:

Հո՛ւր ես դարձել ու կրակ, փայլ ես կարմիր ու փրփուր,
ինչպես օրերը այս տաք, ինչպես օրերը պուրպուր:

Շուրջդ օրերը վառւում ու նոլովւում են արագ՝
օրերը տո՞ք ու այրող, ինչպես ցայտաձէդ ձրակ:

Ի՞նչպես երգեմ, չգիտեմ; կարմիր ինքայքը ես այս,
ի՞նչպես ասեմ աշխարհին, որ աշխարհում արդեն կաս...

6

Կանչում են՝ դարձի՛ր, դարձի՛ր –
օրերը՝ անցած, լազուր –
բայց ո՞ր է մի դեմ անձիր
աշխարին հրաիզօր...

Ու շուրջս արդեն հիմա
շեփո՞ր է հնչում ու շե՛ր.
շեփո՞ր է ամեն մի մահ,
ամեն վերք – հրե մի սեր:

Կանչում են՝ դարձի՛ր, դարձի՛ր,
օրերը – իզո՞ւր ու զուր.
բացուե՞լ է իմ դեմ անձիր
աշխարին հրաիզօր...

7

Դու հրե մի ուրու ես, աղջիկս,
դու մօտիկ ու հեռո՞ւ ես այնպես:
Դու փրփուր ու պուրպուր մի աղջիկ ես –
ու մօտիկ ու հեռո՞ւ ես այնպես:

Քո փայլով դու վառել ես երկիրը,
կարոսով ու փայլով ֆո անուշ.
ֆո կարոսը վաղո՞ւց ես երգել եմ –
ֆո կարոսը ու փառքը անուշ:

Դու հիմա կարկաչում ես, կանչում ես,
երերում ես հրե օրերում.
դու կարմի՞ր ֆայերգի մի հնչիւն ես –
կարկաչում ու կանչում ես հեռու...

8

Ես յանախ մտածել եմ, զգացել եմ.
օրերում այն անգոյն ու անել –
որ ֆո փայլը անհուն ու անձիր իմ
տխրութիւնն ու կարօտն է ծնել:

Ահ ես փայլն յղացել է օրերում այն,
երբ ամեն փայլ մեռնում էր հրում.
իսկ հիմա այն օրերը հեռո՞ւ են,
այն օրերը տամուկ ու տրտում:

Եւ հիմա ոսկեփայլ դու շիկնե՞լ ես
օրերում այս այրող ու աճգին —
ու տալի՞ս եմ ահա ջռուկներս
ես այրող, ես աճուռ կրակին...

9

Բրոնզ ես, հուր ես,
բրոնզե սուր ես,
բրոնզե փառ ես,
բրոնզե փայլ —
բայց դու զո՞ւր ես,
ախ, ի զո՞ւր ես
կոտրում սուրս
արեւառ:

Ինչպես խաղցր
մեր երգերը —
մեր վերքերը
հրաբոյր —
դու միշտ ցո՞ր ես,
ու հզո՞ր ես,
ու բոսո՞ր ես,
խաղցր ոյր...

Բրոնզ ես, հուր ես,
բրոնզե սո՞ւր ես,
բրոնզե փառ ես,
բրոնզե փայլ —

բայց ափսո՞ս որ
դու հեռո՞ւ ես —
դու ուրու ես
արեւառ...

10

Ու վառւում է օրերում սիրս, որպես ողջակէզ.
ջե՞րմ հողմերում ու հրում ես՞զ եմ տեսնում հիմա ես:

Փռել ես հուրդ ոսկի, վառել ես կեանքը մբար,
վառել ես սիրս՝ խօսքի կարկաչներով արեւառ:

Քա՞ց ես բողել հողմային ես ցժոյգները կարմիր,
որ հրդեհներ կեանքը հին ու հաղաքներ մարմար:

Ու թռչում են արընթաց ես ցժոյգներ հիմա —
ֆա՛ղցր է աշխարհը արտիս, հալցր է կեանքը, որպես մահ...

11

Կարմիր ցժոյգներ թռչում են արընթաց,
կարմիր ցժոյգներ՝ բաշերը փրփուր:
Վառւում, բոցկլտում են պայտերը հրանց —
պայտերը սփռում են բոցկլտուք ու հուր:

Վառուե՞լ է երկիրը կարմիր կրակով —
կարմիր ցժոյգներ վառե՞լ են երկիրը, —
թռչում են — հողմի՛ պես — աննըդհատ շարժով,
ամէն տեղ — երա՛շս է, տագնա՛պ է, գրգի՛ռ է:

Դոփում են պայտերը, կայծկլտում են վառ —
կայծերը նետի՛ պես նետում են գալիքը.
հողմի մէջ փչում են շչիկներ մարմար.
ամէն տեղ հրդեհ է, ու հուրը — բարիք է:

Թռչո՞ւմ են, թռչո՞ւմ են անվերջ, արընթաց
կարմիր ցժոյգներ, բաշերը — փրփուր,
վառւում, հրդեհւում են հետերը հրանց —
կարմիր ցժոյգներ հրդեհ են ու հուր...

12

Սրտիս մեջ մղկտում է կարոտը,
սրտիս մեջ մորմոքում է մարմանդ.
— աշխարհը հեկեկացիլ է, կարոտ է,
սրտիս մեջ մորմոքում է մարմանդ:

Նայում եմ՝ օրերի մեջ, հրի մեջ
երում է, երերում է պատկերդ.
այնպես դու հեռացել ես, հեռո՞ւ ես,
հեռո՞ւ է, հեռանում է պատկերդ:

Օրերը թեւաւոր են, թռչո՞ւմ են.
թռչում ես՝ թեւաւոր ես, ուրու ես: —
կարոտս օրերի հետ թռչում է —
բայց միշտ դու հեռանում ես, հեռո՞ւ ես...

13

Ձամբայ եմ ընկել ես մենակ,
հայրել եմ՝ դարե՞ր ու դարե՞ր:
Երգում է սիրտս մանուկ —
փլչում են շենքերը քարէ:

Հեռո՞ւ է տունս: — Հեռո՞ւ:
Ո՞ւր է, ինչո՞ւ է... Հիմա
շուրջս գալարէ է հրի,
շուրջս մոխիկ է ու մահ:

Հոգիը ոռնում է հեռուն.
հուր է՝ թռչում է արագ:
Սիրտս տուե՞լ եմ հրին —
սի՛րտ իմ, կարոտ ու կրակ...

Գնում եմ: Ո՞ւր եմ... Ինչո՞ւ: —
Շուրջս գալարէ է հրի:
Շուրջս հայրերգ է ինչում: —
Հեռո՞ւ է տունս, հեռո՞ւ...

14

Ծուխի պես բել մի բարակ
կապում է սիրտը իմ ես.—
Երկի՛ր իմ, սիրտդ արդեօք
զգո՞ւմ է հուրը երգիս:

Զգո՞ւմ է տեղդը հոգուս,
երկուսս կարմիր ու մառ.
երկնո՞ւմ է այսօր հոգիս,
երկի՛ր իմ, հոյր իմ ու մայր...

Հեռո՞ւ եմ, — ո՞ւր եմ հիմա...
Երգում եմ: Երգս — կրակ:—
Մորիկ է կեանքը այս մի,
թռչում է՝ հողմից առագ...

15

Ինչպես երկիրս ացսփոփ, ինչպես երկիրս բախտազուրկ,
ինչպես երկիրս աւերակ ու արնաներկ —
մխում է սիրտս հիմա որբ, մխում է սիրտս բախտազուրկ,
մխում է սիրտս՝ աւերակ ու արնաներկ...

Եւ այս երգերը իմ կարմիր, ախ, այս երգերը իմ կարմիր,
որ երգում է ացսփոփ սիրտս կրակուն —
ինչպե՞ս պիտի արդեօք ինչեն ախ, այս երգերը իմ կարմիր —
իմ աւերակ, իմ ո՞րբ երկրում...

Ինչպես երկիրս ացսփոփ, ինչպես երկիրս աւերակ —
այնպես էլ սիրտս — ացսփոփ, այնպես էլ սիրտս — ացուրախ,
վե՞րբ է դառնում արեիս խորհում օրերի փա՛յլը այս հրակ —
ախ, սի՞րտ իմ՝ բո՞րբ ու ացսփոփ, — երկի՞ր իմ՝ ո՞րբ ու ացուրախ...

16

Վառւում եմ՝ մարմա՜ցդ, մարմա՜ցդ,
սրտիս մէջ դառնում եմ հուր:
Վառւում եմ մարմա՜ցդ, մարմա՜ցդ
հրով ես՝ շարմաղ, մաքուր:

Անբախտ եմ, ո՜րբ եմ ու խեղճ,
ինչպէս իմ երկիրը, որ —
կորե՜լ է աշխարհի մէջ,
լռե՜լ է՝ անտեր, անօր: —

Ես ի՞նչպէս կանչեմ հիմա,
որ տաս ինձ օրթերդ կաս. —
ախ, ի՞նչպէս կանչեմ հիմա,
որ ձայնս լսես ու գաս...

17

Տեսնում եմ՝ վառ օրերում, օրերի հրում
դեմդ ժպտում է ահա աշխարհիս ամբողջ.
բացուել է դեմդ ահա աշխարհի հեռուն,
շիկնել է դեմդ ահա տիեզերքը ողջ...

Դու, որ ժպտում ես հիմա, որ վառել ես այդ
խնդութիւնդ հրեղէն — ամենի՜ համար, —
նայի՛ր մի պահ էս հրէ աչքերով զուարթ
դեպի երկի՛րը իմ մութ, իմ երկիրը մառ...

Վառի՛ր երկիրս էս դեմ — մի կարմիր կանթեղ,
նետի՜ր ժպիտդ վերջին իմ աւե՜ր երկրին.
տո՜ւր վերերին նրա մառ, վերերին անդեղ
կարմիր ժպիտը էս սուրբ, էո՛յր իմ, Սո՛ւմա, կի՜ն...

18

Դու — հողմային մռուշ ու մահ,
դու — կրակի դուստր բարի,—
ես՞ զ է կանչում սիրտս հիմա,
ես զ է կանչում սիրտս՝ արի՞:

Հասե՞լ է փառդ արդեն վառ
մինչեւ Հաբաշ ու Հնդուչին.
ես՞զ եմ ճեռում եղբայրաբար
իմ արիւնի ճիչը վերջին:

Բո՛ր աչերիդ ցայուածքը բող
արիւնոտ սիրտս հիմա —
եւ բո՛ղ տեսնի սիրտս վառուող
մահուան մէջ — սեր, սիրոյ մէջ — մահ...

19

Վառում է հեռու մի սեր
սրտիս մէջ, դառնում մոխիր.
մխում է յուզմունքիս զուր—
հարբե՞լ եմ բոյրով հողի:—

Վառել եմ, տուել հրին
բոլո՛ր այն երգերը, որ
սրտիս մէջ փռել էին
յոգնած սեր, յոգնած օրօր...

Երկունքի կայ սրտիս մէջ մի,—
վառե՞լ եմ ջնջերը բիլ.
օրհնում եմ կեանքիս հիմի
ամե՞ն հուր, ամեն մոխիր:

Հողմի պես ինչեղ երգեր
ինչում են սրտում իմ ջինջ.
տեսնում եմ — մի նո՞ր երկիր
բացւում է իմ դեմ ինչ-ինչ...

Ելե՞լ են ցորից...
Լսո՞ւմ ես երգերը ինչեղ...
Շիկնել է աշխարհը հրից:—
Պատրա՞ստ ես, երբ ինձ կանչեն....

Աշխարհը — զգո՞ւմ ես.
ջեփո՞ր է. զնգում է անուշ...
Շիկնե՞լ է, շիկնե՞լ է հսկումս
եւ սիրտս — կրակ է եւ ուժ:

Չգում եմ՝ սրտիս մեջ
ծփում է ալիք առ ալիք
արիւնը ցրանց, որ ելել սեզ՝
գնում են դեպ կեանքը գալիք...

Օ, ե՛րգ իմ, թռչո՞ւմ ես.
գիտեմ, որ — ուր է՛լ որ թռչես —
երգիս մեջ կը զգայ ջերմ ողջոյնս
ընկերը, կամ ընո՛յրը հրկեզ...

— Օ, ե՛րգ իմ, օ, ընո՛յր իմ հրկեզ...

21

Որքան դաշտեր որ կան,
որքան որ կան լեռներ,
որքան գիւղե՜ր, ձիւղե՜ր
ու խալաքներ հսկայ — .
կ'ուզեմ ողջոյն այնքան
հոգուս խորէից թեւե՜ր.
կ'ուզեմ ամէն ժխոր
հոգիս ապրի, զգայ: —

կ'ուզեմ երգում իմ այս
հոգիս հրթի՜ռ դառնայ,
թռչի հեռուն՝ հրկէ՜զ. —
ամէ՛ն անցորդ ապրի,
ամէ՛ն անցորդ զգայ
խենթութիւնը երգիս...

կ'ուզեմ ծնչում երգիս
ամէ՛ն անցորդ զգայ —
խենթութի՛ւնս հրկէզ,
խենդութի՜ւնս հսկայ...

1919–1920

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՏԻԴՐԱՆԵԱՆԻՆ

ԷՄԱԼԷ ՊՐՈՖԻԼԸ ՁԵՐ

(ԳԱԼԱՆՏ ԵՐԳԵՐ)

ՍՈՆԷՏ

Ես ի՞նչպես Ձեզ չսիրեմ։— Դուք արուեստ եք ու հոգի։
Օ, կարելի՞ է արդեօք պոռթիլը ձեր չսիրել։
Ով երգ ունի իր սրտում ու սովոր է գեղեցկի՝
Ցա պարտաւոր է Ձեզ բիւր, հազա՛ր սոնետ ցուիրել։

Դուք այնպես մե՞ղմ եք խօսում։ Երբ դուք կարդում եք, տիկի՛ն,
Ձեր շրթունքները գունատ նմանւում են յասմիկի։
Եւ Ձեր աչքերը, գիտե՞ք, առանց ներքին կրակի,
լուսաւոող են՝ Ձեր կրծքի խարերի պես թանկագին։

Իսկ երբ ականջ եմ դնում ես Ձեր թեթեւ խայլերին —
թւում է ինձ, թէ ոսկա տրիոլետներ են երգում
եւ այդ երգով հմայուած՝ սիրտս տխրում է լռին։

Եւ Դուք գիտե՞ք, որ սիրուց հիւանդացած իմ հոգում
ես միշտ լսում եմ թեթեւ, քաւ թրթիռներ չուքակի—
երբ համբուրում եմ ես Ձեր բարակ մատներն ապակի։

❁

Էմալէ պոռթիլը Ձեր,
Ձեր յակինթ աչքերը բիլ
ես այսօր կ'ուզեմ երգել,
որպես մի անյայտ դը Լիլ։
Արդեօք ո՞ր վարպետը մեծ
յօրինել է դեմքը Ձեր.
արդեօք ո՞ր ոգին տուեց
Ձեր դեմքին լուսե գծեր։
Կ'ուզեի երգեր կապել
եւ գովել երգով անծիր
էմալէ պոռթիլը Ձեր,
Ձեր յակինթ աչքերը բիլ։

❁

Որպես մի ցնդած պոետ՝
ես այսօր կ'ուզեմ երգել
հմայիչ պրոֆիլը Ձեր—
եւ երգով լինել Ձեզ հետ:
Կ'ուզեի յոյսով արեգ,
աչքերում Ձեր բիլ ու խոր
գուշակել երգերը, որ
դուք մի օր պիտի գրեք:
Ձեր կապոյտ հրով վառուած՝
կ'ուզեի լսել ես յար
Ձեր վճիռ երգերը վառ,
որ այսօր դեռ չեն գրուած:
Եւ որպես ցնդած պոետ—
կ'ուզեի անվերջ խմել
լազուրէ երգերը Ձեր—
եւ երգո՞վ լինել Ձեզ հետ:

❁

Ես այնքան փո՞քր եմ դեռ,
երեխայ եմ կարծես,—
բայց ես սիրում եմ Ձեզ
ու ջինջ երգերը Ձեր:

Գիտե՞ք արդեօք, որ ես
վախենում եմ, երբ Դուք
նայում էք աչքերիս
հայեացքներով բորբոք:

Սիրում էք Դուք երգել
սիրոյ երգեր յուզիչ.
— վախենո՞ւմ եմ ես Ձեր
հմայքների ուժից:

❋

Երազի պես աննուշ
ինչ որ բան կայ, գիտե՞ք—
երբ Ձեր գլուխը լոյս
Դուք մերթ բռնում եք թեք—
եւ գլխարկի կապոյտ,
բաւեք Ծոնի տակից—
ուղարկում եք աննոյթ
ժպիտներ Ձեր ինձ:

❋

Երբ ես տեսնում եմ Ձեզ—
անդարձ անցած մի սեր
սկսում է իր հեզ
հեբեաթներ հիւսել:
Ցիտում եմ ես յանկարծ
կապոյտ լամպեր գազի,
որոնք վաղո՜ւց հանգած
սպասում են լոյսի:
Ցիտում եմ չինչ, մաքուր
ապակիներ կորած,
կապոյտ ծովի փրփուր՝
փխրուն գիպսից փորած:
Ինչ-որ մի տեղ գնած
Ծոլիանցի բերթեր—
ու թիթեղից շինած
դիակառքի վարդեր:

❋

Ցնծակ հոսում են իմ
երգերը Ձեր մասին.
տուե՞լ եմ Ձեր բոյրին,
Ձեր մեղմաճոս լոյսին:

Ցնծա՞կ, յուսա՞կ է այս
տխրութիւնը իմ ցոր,
որպես մանկան եռաց,
որպես մանկան oror:

Սրտիս վրայ մի հեզ
ինքնութիւն է իջել—
թեթե՞ւ, թեթե՞ւ, որպես
կապոյտ վուալը Ձեր:

❋

Առել եմ գիրքը Ձեր
ու ցայում եմ ցրաց:
Ձգւում են բիլ գծեր
գրից՝ հոգուս վրայ:

Նայում եմ թերթերին
եւ ապաում եմ, որ
երգերը բրռաց,
որպես լոյսի oror—

եւ անսահմա՞ն, անծի՞ր
բրիռնեերից երգի
հիւսուի պրոֆիլը Ձեր
եւ ursամոf երգի:

❋

Որպես հեռու բոյրի,
հրապոյրի կարոս –
թողե՞ք, որ գուրգուրի
սիրտը իմ մեզ ու մութ –
ճնճղուքիւնը ածիր
Ձեր արտամոխ յուշի՝
կապոյտ վուալը Ձեր
ու վսւալի փոշին:

Ձեր դեմքի կարոսը վես
իմ հոգում հեռու հրի
մի կապոյտ փայլ է վառում.
կարծես ես տեսնում եմ Ձեզ
մոգական մի լապտերի
լուսազարդ, բիլ ճկարում:

Մոգական մի լապտերի
կապտաւուն լոյսի ճամճ
այս գիշեր կարոսս ածիր –
Ձեր հեռու հրին գերի
ուղեղիս լաքի վրայ
ճկարում է դեմքը Ձեր:

❁

Էլեկտրական լամպի
Ֆոսֆորագոյն լոյսում
Ձեր եմալէ դեմքի
տխրութիւնն է հոսում:
Հոսում է լոյսը Ձեր
փողոցների հեռուն—
ու մի անծի՛ր, անծի՛ր
թովչութիւն է փռում:

❁

Կարդում էիք Դուք բաւ ձայնով
տարօրինակ ու կանացի
երգերը Ձեր մարմանդ ու մով:

Երբ բարձրացայ ու գնացի—
լռել էր ձայնը Ձեր երգուն,
բայց իմ սրտում, իմ որբ հոգում
թաւջութակնե՛ր էին երգում:

❁

Երբ ես տեսնում եմ դեմքը Ձեր
եւ Ձեր մատները ապակի,
եւ Ձեր դեմքին լուսե գծեր
ինչ-որ հեռու արեգակի—
սիրտս զգում է ցաւը նուրբ
Ձեր ուսերին նիրհող շալի,
մեռածի վիշտը անսփոփ,
անբառ թախիծը ոռեալի,
ու բաժակում նիրհող թէյի
անմահ ձանձրոյքը յօրանջող —
ու ջահազարդ սենեակներէ
մարմանդ մորմոքը մեզ տանջող:

❋

Թղթից շինած ծաղիկների պես հիւանդոտ,
բոխխսաւոր սեղների պես ոռեալի,
փոշուց կեռած նկարների նման աննպաստ,
որպես մեռած գեղեցկուհու մի հայելի—
հոգիս տխրել է անբարբառ ու չգիտէ
ինչո՞ւ է օրն իրիկնանում ու լուսանում—
երբ ոչ մի լոյս դրսից ընկած, ճառագայթի
չի՞ ամոռում նրա կարօտը անանուն:

❋

Երբ ես յիշում եմ Ձեզ—
հաւատացէ՛ք, որ ինձ
համակում է մի հեզ
ու մեղմանուշ թախիծ:
Սիրում է սիրտս բիլ,
երազանքով անյոյս,
կաթի՛լ-կաթի՛լ խմել
տխրութիւնը Ձեր լոյս:
Օրերում այս հրէ,
յորձանքներում վարար,
երբ որ ամեն ֆարի
զարնւում է մի ֆար—
հեռուներից Ձեր կոյս
թող շիթ առ շիթ սուրայ
տխրութիւնը Ձեր լոյս
վառուող հոգուս վրայ:

❀

Ես հիմա օրհներգում եմ
մի ացուբ տխրութիւն, որ
իմ հոգին ամոխում է
Ձեր հետս կարոսն՛ի ցոր:

Ես երգով միշտ Ձեզ հե՞տ եմ՝
Ձեր բոյրից յաւիտեա՞ն գոհ.
ես հիւանդ մի պոռն եմ:
— օգնեցէ՛ք, օգնեցէ՛ք, օ՛...

ՏՐԻՈԼԷՏՆԵՐ

❁

Իմ երգը միշտ Ձեզ է երգում՝
Դուք երգ ու հմայք էք, տիկի՛ն.
լսէք, ախ, լսե՛ք իմ երգին—
իմ երգը միշտ Ձեզ է երգում:
Օ, թող իմ ամէ՛ն մի երգում
իր փայլը զգայ Ձեր հոգին —
իմ երգը միշտ Ձեզ է երգում,
Դուք երգ ու հմայք էք, տիկին:

❁

Երէկ Ձեր պրոֆիլը այնքան,
այնքան հմայիչ էր, գիտէ՞ք,
եւ Ձեր սանրուածքը թեք
երէկ հմայիչ էր այնքան:
Դիւթի՞չ էր Ձեր ժպիտը մանկան,
Ձեր խաղցր ժպիտը՝ արտաբեկ.—
երէկ Ձեր պրոֆիլը այնքան,
այնքա՞ն հմայիչ էր, գիտէ՞ք...

❁

Ձեր դէմքի եմալը երէկ
յստակ էր, որպես ապակի.
կարօտ էր ձրի, կրակի
Ձեր դէմքի եմալը երէկ:
Արդեօք ո՞վ պիտի կրակի,
արդեօք ո՞ւմ պիտի ցուխրէք
Ձեր դէմքի եմալը, որ երէկ
յստակ էր, որպես ապակի...

❁

Այսօր Ձեր մատները, տիկի՛ն,
նման են հեռու մի յուշի.
մաղում են կապոյտ մի փոշի,
այսօր Ձեր մատները, տիկին:
Հին բոյրն եմ զգում ես կրկին,
հին բոյրը անցած, ուրիշի,—
այսօր Ձեր մատները, տիկի՛ն,
նման են հեռու մի յուշի...

❁

Գիտե՞ք, որ գարուն է արդեն,
բոլորը թափուել են փողոց.
լսո՞ւմ էք անուշ մի զնգոց—
գիտե՞ք, որ գարուն է արդեն:
Դիւթում են երթերը վարդեր,
արտերը կրակ են ու բոց—
գիտե՞ք, որ գարուն է արդեն,
բոլորը թափուել են փողոց:

❁

Շրջում են իմ տուրջը, շրջում
տարեր ու տարեր կանացի.
անցնում եմ մայթով փողոցի—
շրջում են իմ տուրջը, շրջում:
Լսում եմ գարնան մի շրիւն,
կարծես թէ անտառ գնացի—
իսկ տուրջս շրջում են, շրջում
տարեր ու տարեր կանացի...

❋

Երգում է ծովը, դաշտը, հովը,
ամէ՛ն ինչ երգ է ու շշուկ,
երբ սիրտը խեղճ է ու գինով է:
Երգում է ծովը, դաշտը, հովը.—
գիտէ՞ք, որ սիրտը դաշտ է, հով է,
եւ երբ զարթնում է սէրն աշխարհ—
երգում է ծովը, դաշտը, հովը—
ամէն ինչ երգ է ու շշուկ...

❋

(Տրիոլէտ ինտիմ)

Հիմա ամէն ինչ անիմաստ է,
իզուր այդպէս դու ծիկնեցիր.
ինչի՞դ է կեանքը, իր իմաստը:
Հիմա ամէն ինչ անիմա՜ստ է.
թողել եմ ցաւը, դեկը, յաստը,
իսկ ծովը մո՜ւր է ՛ու՜ անծիր.—
հիմա ամէ՛ն ինչ անիմաստ է—
իզո՜ւր այդպէս դու ծիկնեցիր...

❋

— Ես անդարձ Ձեզ սիրել եմ եւ իմ սիրտը հուր է՝
թող գրէ՛ իմ հուրը տխրութիւնը Ձեր.
տխրութիւնը թոյն է, ժանգոտած մի սուր է:
Ես անդարձ Ձեզ սիրել եմ եւ իմ սիրտը հուր է.—
օ, թողէ՛ք որ, ֆոյր իմ, մորմոքող իմ հուրը
բռնկի յոյսով ցոր մշուշում անծիր.—
ես անդարձ Ձեզ սիրել եմ եւ իմ սիրտը հուր է—
թող գրէ՛ իմ հուրը տխրութիւնը Ձեր:

Զրնգում է շուրջս աստղազարդ գիշերը
ու պարում են շուրջս լուսազարդ յուշեր—
այս գիշեր իմ սիրտը Ձեզ նորի՞ց յիշել է...
Զրնգում է շուրջս աստղազարդ գիշերը.
օ, ինձ ի՞նչ, որ երգն իմ ու գինով իմ սերը
շարժելու են ծաղրը ու ծիծաղը Ձեր—
զրնգում է շուրջս աստղազարդ գիշերը
ու պարում են շուրջս լուսազարդ յուշեր:

Երեւան, 1920, II

ՓՈՂՈՑԱՅԻՆ ՊԶՐՈՒՀՈՒՆ

(ԵՕԹԸ ԲԱԼԼԱԴ)

1· ԽՐԱԽՃԱՆՔ

Ջաներն այնտեղ կասկածոտ
ակնարկում են ու բարբում
գիշերային, սակայն տօթ
հմայքներին թակարդում:
Այնտեղ ծեղ ու փարթամ,
մանըկհեի պես կիներ
ծախում են սուտ խենթութեան
թիթեղածայն՝ոսկիներ:
Ու մեռելի նման պաղ
մարդիկ յոգնած ու դեղին
այնտեղ լցուում են ուրախ
խենթութիւնով հրեղեն:
Անցի՛ր մեծակ:— կես մթում,
ակնարկներով հրակէզ,
հմայքներով անպատում
կը հմայեն նրանք էեզ:
Նսի՛ր այնտեղ: Թող նրանք
սրահներում իրենց մութ
վառեն կարմիր մի կրակ՝
անհրապոյր ու աղօտ:

Անհարազատ բող լինին
կարօտակեզ֊էո հոգուն—
թէ՛ երգերը ցրանց հին,
թէ ժպիտներբ բեկուն:
Հառոզի՛ր ինձ, որ վաղուց
դու երազել ես սիրով
ծախուող հմայքը այդ ուր
խրախճանքի ու սիրոյ:
Ու կը դառնայ ողջը — սուտ,
ու գինու պես էո հոգին
յորդ՝ կը թափուի ցրանց մուր
ու մահահոտ յատակին:
Ու էլ մինչեւ առաւօտ
պիտի մնաս ցրանց հետ՝
խրախճանքում ցրանց տօր,
անիմաստ ու անհեթեթ:
Էլ յանձնուի՛ր մինչեւ յոյս,
որպես գերի մի անկամ—
խրախճանքին ցրանց ուր,
անուրախ ու առնաքամ:—
Ո՛չ մի վայրկեան չկասէ
բող յորձանքը ժրաջան—
հարքի՛ր սիրով ցրանց սեւ,
որ շրթերդ չճչան...

2. ՇԱՄԻՐԱՄ

Նորից՝ անմար կարոտով զգուաճճերի ու հրի՝
դու եկել ես տեսնելու բաղաճճերը Նաիրի:

Անհրապոյր ու կանաչ ես այբերը մեռելի
ցանկութիւնով հրահրած՝ անյագ վառուել են հլի:

Դու անցնում ես ու տեսնում բաղաճճերը հիմա պյն,
որոնց տեղ խոս էր բուսնում, երբ դեռ ապրում էր Արան:

Ա՛յլ է աշխարհը հիմա, ա՛յլ է հիմա Նաիրին.
ո՛չ մի արեայ էլ չկայ, որ չտուի ես հրին:

Մի՛ր ակումբը հիմա, մի՛ր թատրոնն ու կաճեն՝
հազա՞ր արեայ ու Արա կը հանդիպեն ժպտադեմ:

Ո՛չ վեն է էլ հարկաւոր, ո՛չ պատերազմ մահառիթ.
արեաների համար նոր — բաւական է մի ժպիս.—

Միայն ակնարկ մի թեթեւ — եւ կը տրուեն նրանք ես,
ես հմայիչ ու անթեւ տարիաճճերին հրակեզ:—

Կը գաճ մեկ-մեկ ու սիրով — ու կը տանջես նրանց դու
անյագ կրքի ու սիրոյ նիզակներով ես հատու:

Եւ այնպիսի՞ տարփանքներ նրանք կը տան հիմա ինձ,
որ կ'ամոքուի ես հոգիս կարոտանքից սիրակիզ:

... Բայց կը լինի մի գիշեր — ու հմայքով նախրեան
կը բարձրանայ մեռուցից մանկամտիս ես Արան:

Նորի՞ց հոգիդ անսփոփ կարոտանքով կը վառուի—
ու սարսափով մի անօգ՝ նորից կ'ելնես դու կռուի:

Եւ որպեսզի չտրուի նա ախտաժես ես հրին—
ոտի կ'ելնէ նրա հազարամեայ Նախրին:

Եւ դաշտերում Նախրի կը պարտուի նորից նա,
կը նահանջէ զօրքը ես, երկիրը ինձ կը մնայ:

Նա կը մեռնի, որպես զոհ — բայց չե՛ս յաղթի դու նրան.
— դա՛ռն է խորհուրդը սիրոյ, շամբռնատո՛ւրք Շամիրամ...

3. ԱՆԿՈՒՄՆԵՐԻ ՍԱՐՍԱՓԻՑ

Ե՛ս եմ հիմա — մի պոեմ. եւ իմ աճումը — Չարեցց —
պիտի վառուի դարերում, պիտի լինի բա՜ձր ու մեծ:

Ես եկել եմ դարերից ու գնում եմ յաղթական
դեպի դարերը նորից՝ դեպի վառուող Ապագան:

Ի՞նչ է ուզում ինձանից կապոյտ մորմոքը հրի.
ի՞նչ է ուզում էս հոգին, հազարամեայ Նաիրի՛:

Եւ ինչո՞ւ ես դու փռել իմ դեմ էս բոյրը բոլոր
եւ իմ մորմոքը վառել թախիծներով անասուր:

Եւ ինչո՞ւ է իմ առաջ եկել աղջիկը էս հին՝
բորբ աչքերով իր կանաչ ու հմայքով իր դեղին:

Ուզում է մե՞րկ լինեմ ես, ու անսփոփ, ու անօգ,
որպես մեռել մի հրկեզ, որպես կորած մի մանուկ:

Եւ չարձակած ո՛չ մի նետ, անկումների սարսափից
ես փախչում եմ աճա ես — ես ճահճոտում եմ նորից:

Եւ աչքերս, որոնց դեմ կանգնել է բիլ մի նկար—
Ցորի՞ց յառնում են դեպի ամբոխները խելագար:

Նրանք եկել են ցորից, նրանք ծաս են, նրանք վատ,
ու աւերե՞ն պիտի ձեր հաղաքները լուսնահար:

Ո՛չ մի հմայք էլ պիտի ձեր աշխարհը չուներայ՝
Նրա տեղ մահ ու աւեր, վերք ու մոխիր կը մնայ:

Ու չի երևի մոխիրից տխուր հմայքը ձեր տան,
ու չի լինի էլ սիրոյ հաղցր ու կապոյտ ձեր ծղրան:

Չեն վառուելու տափակեզ կանանց աչքերը էլ ձեր—
Նրանք մոխի՞ր կը դառնան, չե՛ն բորբոքուի նրանք էլ:

Եւ չի՛ յիշի, ո՛չ մի սիրտ, որ դարերի մէջ մի օր
սիրտս եղել է գերի անկումներին ահաւոր:

Որ եղե՞լ է դարերում մի սարսափի նման կին,
որը նետել է հեռու աստղանկար իմ հոգին:

Նրանք կը գան, կ'աւերեն, եւ չի մնայ էլ ոչինչ՝
ո՛չ դրախտը ձեր գեհենը, ո՛չ թախիծը ձեր դիւթիչ:

Եւ չի լսի ո՛չ մի կին իմ անկումի մասին այս,
որ դարձրեց իմ հոգին թարախակալ մի երազ:

Եւ չի մասնի ո՛չ մի բառ ցնչում իմ տօթ երգերի,
որ եղել եմ ես ցկար, որ եղել եմ ես գերի...

Ես պոռնկ եմ — եւ հիմա իմ վառ երգերը պիտի
դեպի գալի՞ք թռչեն սլաքների պես նետի:

Ես եկել եմ դարերից ու գնում եմ, յաղթական,
դեպի դարերը նորից, դեպի կարմիր ապագան...

4. ՎԱՐՍԱՎԻՐԻ ՀՄԱՅՔՆԵՐ

Վարսավիրի մոս հիմա ճա լուռ ճսել է էլի.
դեմը փայլում է հսկայ արծաթափայլ հայելին:

Դեմը ճսել է մի կին ու աչերով մեռելի
ճայում է պաղ աչերին՝ անվերջ, էլի ու էլի:

Թափել է վար, ճակատին դեղին մազերը հիմա
ու ակնարկում է մթին տագնապներով ակամայ:

Այնպես օտա՞ր է, այնպես անսիրելի ու հեռու.
ի՞նչ են գտել նրա մեջ գուրգուրելու, սիրելու:

Տխո՞ւր, տխո՞ւր, որպես մահ, ակնարկում է հայելին.
սանրում է սակայն ճա, դեմքը ժպտում է էլի:

Ու կանգնել է իրեն մոս — մոսի՞կ, մոսի՞կ, որպես սեր —
մի բարեկամ անծանօթ, հրաշագործ մի ընկեր:

Դեմքին՝ տաղտուկ մի ժպիս, ձեռքին սրուակ ու փոշի՝
թափում է ո՞ւրբ հմայքներ, ծախուող բոյրեր ուրիշի:

Հարազատ է այնքան այդ զրնգունը մկրատի.
ի՞նչ է ուզում սակայն ծեր, չար ժամացոյցը պատի:

Նա ինչո՞ւ է ալմկում, որպես տաղտուկ բզեզաքի՝
սուր զարկերով իր բեկուն՝ հարուածներէ պես գամի:

... Մոգ-վարսավիրը սակայն թափում է նուրբ հմայքներ—
ու էլ դեմքով դիւթական ահա երևում է նա վեր:

Ո՞ւմ ինչ, որ նա էլ հիմա ինքն իրեն չի ճանաչի—
ու ժպիտով ակամայ պիտի գերի ու խաչի:

Ես պոետ եմ ու գիտեմ, որ աշխարհում այս նսեմ
ճշմարիտ է միայն այդ ամոքող սուրը յուսի:—

Սուրբ է կեանքում միայն դա՛ — ամոքող փայլը սրի.
— օ, պյռուհի՛, հաւատա՛ երազներին պոետի...

5. ՀԱՅԵԱՑՔՆԵՐԻ ԹԱԿԱՐԴՈՒՄ

Ո՞վ է ացցնում բուլվարում.
— Նա՞:—
Նայում են, շաս են ցայում:
Ահա՛:—
Սո՞ւր տեգերով ու հրով
չարչարում են, տանջում.
համբուրում են աչերով—
անյագ, ծարաւ — պահանջում:

Թափում են ցուրբ մի կրակ—
աչերով:
Մերկացնում են արագ—
հրով:—
Բո՞րբ աչերի կրակով
հրկիզում են, վառում.
կանչում են ցուրբ ակնարկով
հեդու:

Լցնում են սիրտը սիրով
այրող.
լցնում են սիրտը սիրոյ
բոյրով:
Ու դառնում է ողջը — հուր,
ու կարոտ, ու փայլ:
Ու դառնում է կեանքը — ցոր,
ա՛յլ:

Նիզակների նման ծուռ
հիմա
խոցում են դառն ու անուշ
ու ցա՝
ըհ՜կ տարփուհու նման մի,
հայեացքների թակարդում—
յանձնում է ամեն մի
մարդու...

Անկարելի՞ է կեանքում
այսքան սեր:
Ցերե՞կ է, թե — մի անփուշ
գիշեր:
Տուե՞ք, էլի՞ ու էլի՞—
անվերջ.
ա՞զգր է կեանքը, սիրելի՛ս,
այնպե՞ս...

6. ՇԱՆ ԿԱՐՕՏՆԵՐ

Պատուհանիս տակ հիմա որբ մղկտում է մի ծուռ.
սիրտս լսում է նրան — եւ սիրտս էլ է յիշում:

Նա տխուր է ու մենակ, ոչ-ոք չունի հիմա նա—
ու գանգատը դժնդակ լուսինը չի՛ իմանայ:

Դուրսը ամպ է ու մռուշ, անասող երկինք ու գիշեր.
մղկտում է այսքան ուշ, գանգատւում է առանց սեր:

Հեռուն բարթում է տարտամ գազէ լապտերը բեկուն.
ինչ ո՞ւս մարեց այս անգամ արեւավառ երեկոն...

Ինչ ո՞ւս մարեց ցերեկի զուարթ աղմուկը ու մութ
գիշերն իջաւ՝ անհոգի, անմխիթար ու անգութ:

Ցերեկը լա՞ւ է այնքան, ցերեկը խինդ է բերում—
փողոցների խառնաճաղ, անմխիթար դեգերում:

Խոհանոցի դրան մօս, կամ խանութի մօս հացի—
սպասումներ ու ամօթ՝ խո՞ւլ տագնապներ փողոցի:

Բայց ցերեկներն չունեն մղկտուքը գիշերուայ
ու հոգու ցաւը անհուն ցերեկը չի՛ երեւայ:

Մղկտում է հիմա նա, սիրտը զգուանքէ ուզում,
սիրտը ճչում է հիմա, մղկտում է անդեզու:—

Բայց սիրտ չունեմ էլ ես խեղճ մղկտանքը լսելու.
— քնի՞ր, քնի՞ր, եղիր խե՞ղճ, անօգնական ու հլու:

Չի ուղարկի ո՛չ մի փայլ մեզ լուսինը հիմա էլ—
ծո՛ւռ, կարօտի՞ իմ եղբայր, դառնաթախի՛ծ իմ քնկեր...

7. ԵԵՂԿԱՏԱԿ

Ու գինու պէս ֆո ճոգին
յորդ կը քաւիուի նրանց մութ
ու մահաճոս յատակին:
«Խրախճանք», Բալլադ 1-ին.

Կ'ուզե՞ք — երգեմ՝
ձեզ համար,
հիմա:
Այնպես երգեմ, որ զգաք—
ի՛նչ որ կ'ուզէք՝ կ'ուզէք — սեր,
կ'ուզէք — մահ:
Ես երգում եմ, որ յուզեմ.
տալիս եմ երգս լուսե
ո՛ւմ որ կ'ուզէք. բեկուզ նա
լինի պոռնիկը վերջին.
դուր չի՞ գալիս ձեզ միթե
այս ճնշուքիւնը—
արջի:

Ես երգում եմ ակամայ:
Ի՛նչ էլ երգեմ. կ'ուզէք — սեր,
կ'ուզէք — մահ:—

Բայց չե՛մ կեղծում ես երբեք:
Լսե՛ք երգերս –
ահա –
լսեք երգերս, բայց թե–
չհարբեք:
Ես չեմ ուզում, որ հարբեք.
Լաւ չէ, գիտե՞ք, երբ որ մի
աճիո՞ւն կարոս դառնում է խաղցր
բամի...

Ջե՞ք հասկանում: Իզո՞ւր, իզո՞ւր: Դուք պե՛տք է որ
հասկանաք:
Թուչե՞լ է պետք. սակայն ո՞ւր:–
Ջե՞ք հասկանում. ես կ'ուզեմ,
որ իմ երգերը
լուսե –
ձեզ բուղբ բուաճ ու բաճաք:
Ջե՞ք հասկանում... – Դուք պե՛տք է որ
հասկանաք:

Ուրիշ – ոչինչ:
Ու հիմա –
ճո՛յնն է ճորից. ես երգում եմ, որ յուզեմ:
Ես երգում եմ – ակամայ:
Ի՛նչ էլ երգեմ. կ'ուզե՛ք – սեր,
կ'ուզե՛ք – մահ:

Ես – խեղկատակ եմ հիմա...

Երեւան, 1920

ԱՐՓԻԿԻՆ

ՈՒԹՆԵԱԿՆԵՐ ԱՐԵՒԻՆ

❁

Նեռե՞լ է երկաթէ մի ձեռ
դէպի վեր ոսկի մի ծնծղայ.
բռնկուել է ոսկի ծնծղաց,
դարձել է արևածոր մի վէրք:
Վառուել է երկնքում յակինթ
ու ծորում է արիւնը իւր կէզ,—
զոհուե՞լ է երկնքում վճիռ.—
ինչքա՜ն է հատնումը հրկէզ...

❁

Այն արե՛ւն է՝ կարմի՞ր ու հատուն,
կախուել է, որպէս վառ մի միրգ,
կարօտող շրթեր է ուզում,
բորբոքում է գրգիռ ու կիրք:
Շոգ շրթեր ու կոնքեր է ուզում,
գգուանքներ արևահամ ու տաք,—
այն արեւն է՝ կարմիր ու հատուն.
— ինչքա՜ն է հատնումը յուսակ:

❁

Աղջկայ կոնքերի նման
երազուն, կիզուն ու հատուն՝
վառւում է արեւի ծնծղաց
աշխարհի ա՞նն ու երազում:
Դաշտերից ցժոյգներ են վազում,
վրնջում են կրքոտ ու վառ,—
աղջկներք չար խօսք են ասում—
ու խնդում է արեւը խելառ...

❋

Ինչ որ լաւ է — վառւում է ու վառում,
ինչ որ լաւ է — միշտ վառ կը մնայ.
այս արեւ, այս վառ աշխարհում
բանի կաս՝ վառուի՛ր ու գնա՛:
Մոխրացի՛ր արեւի հետ,
արեւից բող ոչինչ չմնայ,—
այս արեւ, այս վառ աշխարհում
բանի կաս՝ վառուի՛ր ու գնա՛:

❋

Տեսնում եմ՝ արեւի վրայ
վրնջում են ձիեր ոսկեթայլ,
մերկացել են աղջիկները խելառ
ու ծծում են երբերը նրա:
Բորբոքուել են երբերը շոգ,
համբուրում, բուրում են կեզ,
վախենում են — մնան անշող.
— ախ, այնպե՞ս ուզում եմ էլ:

❋

Ինչպես շոգ, նշող ոսկի,
բրոնզեձոյլ, հասուն, հոսուն—
արեւի տապն է հոսում,
ինչպես շոգ, նշող ոսկի:
Ախ, հոգիս մի ցո՛ր խօսքի
արեւոտ շունչ է կիզում—
ինչպես շոգ, նշող ոսկի,
բրոնզեձոյլ, հասուն, հոսուն:

❋

Ես գիտեմ՝ արեւի վրայ
հաւաքուում է վերէ ու ժանգ,
հատնումի տօթ մի հոսանքէ—
անհատնում, ա՛լ մի բուրայ:
Հատնելով լոյսը իրա
արտոսրում է կուրծքէ ու ծիծ.—
ինչ կ'անես — արտով արա՛,
թող լինի վե՜րէ ու երիջ:

❋

Արտակեզ, սուր մի նիզակ
զարկեցի ալ վահանիդ.—
աշխարհում էլ ի՞նչ կ'անի
իմ հոգին փառէ ու պսակ:
Դու արեւ, վառ մի նետաճ,
իմ հոգուն գամուած մի նիշ,—
միայն դո՛ւ, լոյս ու շուշան—
եւ չկայ ո՛չ մի ուրիշ:

❋

Կարծես ես ճամբայ եմ ընկել
երկնքի դաշտերում կապոյտ
ու գնում եմ, զուարթ ու անփոյթ,
եւ ունեմ լուսէ մի ընկեր:
Նա ե՛ւ կին է, ե՛ւ էոյր, ե՛ւ հոգի՝
այրում՝ եւ այրում՝ է խենթ.
խառնուել եմ կեանքին ամենի—
եւ իմ կեանքը հրա՜շէ է ու տենդ:

❁

Իմ ուղեղը բորբոք, կրակուն՝
ալ գծեր ծփծփաց, հուրհուր.
լափլիզում, սրբում է մի հուր
իմ ուղեղը բորբոք, կրակուն:
Ցոլացում են դեմքեր ոսկեման,
գալարւում են կրեր բորբոք,—
ախ, ուղեղս — ա՜րեւ ալլլաց
ու աշխարհը -- ցնորք է մի շող:

❁

Բայց ինչո՞ւ միայն կիրք ու կիր,
միայն շող ու հեշտաճք աճուշ.
վառւում է գոհերի հոգիր,
փււում է տխրութիւն ու մուժ...
Ինչէաճ տա՜ք արիւն է հոսել,
ոսկեծուփ հեղեղներ արեաճ—
ճո՛յճ արեւն է կարմիր ու լուսե,
ճո՛յճ աճուշ աշխարհի վրայ...

❁

Փայլում են ոսկի սուիճներ,
պսպղում է ոսկի մի վահաճ,
ոսկեդեմ արեւի վրայ
փայլում են ոսկի սուիճներ:
Ախ, ինչ լա՜ւ է զինուել ու զինել
արեւով, արիւնով, — ահա
ոսկեդեմ արեւի վրայ
փայլում են ոսկի՜ սուիճներ...

❁

Ու ցորից, եյած խնդալառ,
օրերի կապոյտ բանտում,
ցրում է յո՞յս ու գոհար,
ծփում է ու վառ խնդում:
Ով որ կայ խեղճ ու անտուն,
ով որ կայ մերկ ու վհատ—
օրերի կապոյտ բանտում
բոլ լինի զո՛հ մի զուարթ...

❁

Միայն ծծիր — արնածծիր վերէ ու ծիծ,
արե՛ւ դարձիր — արնանմաճ — ամոթիչ:

Ուրիշ ոչինչ չի՛ կամենայ սիրտ իմ.—
ողջը — հրին, արնանմաճ արեւին:

Սուր սուինները, արնածծեր, վերէ ու քոյն,
տեղը արեան — ճնադարեան խնդութիւն:

Ու ցժոյգներ, ոսկի ու ծափ, ժանգ ու ծիծ.—
ո՞վ է ինչ պես արնանմաճ — ամոթիչ...

❁

Մերկ մի աղջիկ զարկեց ձեռքով իր բաց կոճկին
ու վերեւից խնդաց զուարթ ու ոսկեձայն.—
հազար վարդեր կրակուեցին ծուրջը, կողքին,
հազա՜ր խաբխաբ, ու գարնան օր, ու ծիածան:
Քաղցր ծփաց հեծանիւ ու տապ, թոյն ու գրգիռ,
դաշտերը խաս ծաղիկներով ծփծփացին.—
աբխարհը — ալ, ցարնջագոյն, վառքը — կարմիր,
ողջը — հրա՜շք ու խնդութի՜ւն արեգնածին...

❁

Հոսում է տաք, ինչպես հեծանիւ, կամ ձոյլ ոսկի,
հոսում է ծանր ու յորդահոս ու արնավառ.
լցուում է թեժ խնդութիւնով կուրծքը հասկի.
օրերը — sop, ձիերը — վառ, վազքը — խելառ:
Լո՜ւրթ երկիմքներ՝ իջած հասուն երկրի վրայ,
բարձր ճիչեր ու հրդեհներ ու ծիածան.—
վառւում է շոգ կաթսաներում կեանքը ֆուրայ.
— ախ, վա՛յ ձրաց, որ չապրեցին ու չտեսան...

1921 Մայիս. Երեւան.

ԱՐՓԻԿԻՆ

ՏԱՂԱՐԱՆ

Հիդս խօսի, մ'ի կէնա խոօվի պէս,
տալղա տվիր, գէմ'իս տարար ծօվի պէս.
կու մ'էռնիմ, չիս տեսնի. Սայեաթ-Նօվի պէս...

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱՅ

Ինչքան որ հուր կայ իմ սրտում — բոլորը ֆեզ.
ինչքան կրակ ու վառ խնգում — բոլորը ֆեզ —
բոլո՞րը տամ ու ցուխրեմ, ինձ ո՛չ մի հուր, թող չմնայ՝
դու չմրսես ձմռան ցրտում, — բոլո՞րը ֆեզ...

Երեւան, 1921, Փետրուար

Ամրան ալուչը, հուրհրատող տօ՛ր ես, ջան,—
Ցախուն՝ գրաց ու ցարցի հո՛տ ես, ջան.
Երբ խոտադեմ ի՛նձ ես ցայում դու յանկարծ—
Ասես սրտիս մանուած դաժան բօ՛ր ես, ջան...

Մոսկուա, 1921 թ.

Ա.

Երազ տեսայ. Սայեաթ-Նովեն մօսս էկաւ սազը ձեռիցն,
հրի նման վառւման գինու օսկեջրած թասը ձեռիցն,
նստեց, ածուծ երգեր ասաւ՝ հին համաճչի մասը ձեռիցն,
էնպես ասաւ, ասես ուներ երկնքի ալմասը ձեռիցն:

Որ էն երգին օրօր-շորոր, ինչպես հուրի, աչյաս ու խաւս,
երազիս մէջ գօզալն էկաւ՝ իմին էլ վառւման բաղցր երազ.
նազանիֆ արաւ, Սայեաթ-Նովի սիրտը լցրեց միրգ ու մուրազ,
կանգնեց-մնաց՝ դէմիցս բաւած օսկեկարած խասը ձեռիցն:

Նայե՜ց-նայեց Սայեաթ-Նովեն, ամպի նման տխուր մնաց.
ասաւ՝ Չարե՛նց, ես գօզալից սրտիս մէ հին մրմուռ մնաց.
սիրտս վառուեց, մոխիր դարձաւ՝ իմէն կրակ ու հուր մնաց.—
դո՛ւ էլ նրա գովէր արա, որ գայ՝ օսկե մազը ձեռիցն:

Էսպես ասաւ Սայեաթ-Նովեն ու վեր կացաւ, որպես գիշեր,
գնաց նորից տխուր ու լուռ՝ սիրտը հազար մուրազ ու սէր.
երազն աճցաւ — դո՛ւ մնացիր, պատկերէդ էն մնաց լուսէ,
մեկ էլ իմ խեղճ սիրտը մնաց՝ Սայեաթ-Նովի սազը ձեռիցն:

Բ.

Աշուղ Սայեաք-Նովի ցմահ ես երգ ու տաղ պիտի ասեմ,
երգեմ պիտի գիշեր-ցերեկ — ու սրտի խնդ պիտի ասեմ,
եւ ես սրտից, որ իր խորհուրդ սիրոյ երգեր ունի ու սեր—
ես ես սրտից դրախտային մրգերի բաղ պիտի ասեմ:

Աստղ ու ցնկար շորեր հագած՝ դեմս ելար երազի պես,
հեխդ՝ կրակ՝ սիրտս երեց անհասնելի մուրազի պես,
աչուշ հոտով սիրտս լցրիր — վարդստանի, Շիրազի պես,—
ինչ էլ ըլի հեխդ, գօզալ, — երգս ուրախ պիտի ասեմ:

Աշխարհը մի բաղ է, գօզալ, — ցսեղ ես դու բաղի մեջը,
վարդ ես բացուած՝ առաւօտուայ դրախտային շաղի մեջը,
ժամ ես դարձել տեսիլով ես սուրբ՝ Հաւլաբարի բաղի մեջը,—
սրտիս աչուշ արտասուքին երկնային շա՛ղ պիտի ասեմ:

Էնքա՜ն ըլի մի մի աղգամ տեսիլդ տեսնեմ՝ վարդ ես, գ'օզ'ալ,
ես փուչ կեանքում սրտիս տուած անմահական զարդ ես, գօզալ,
հնպես արա, որ էլ չասեմ՝ դո՛ւ էլ ինձ պես մարդ ես գօզալ,—
քի լի մնայ սիրտս էլգնով՝ ափսոս ու ախ պիտի ասեմ:

Գ.

Ես մէ անգին գօզալ տեսայ — Գիւրջսանի խաղաբումբ,—
վզին՝ վարդեր ու խալ տեսայ — Գիւրջսանի խաղաբումբ:

Կանգնել եր լեզ բուչի մէջը, հագին ասլաս ու խաս ուներ,
գլխին օսկի ու շալ տեսայ — Գիւրջսանի խաղաբումբ:

Արեգակի շողէն եր բնկել վրեն օսկե չիբիլի պես՝
շրթերը խաս ու ա՛լ տեսայ — Գիւրջսանի խաղաբումբ:

Անցայ, կամաց աչբով արի, ուզի ասեմ՝ ջա՛ն ես, էլի՛,—
դեմս կեցած մէ սա՛ր տեսայ — Գիւրջսանի խաղաբումբ:

Հիմի տխուր երգ եմ ասում, եբես կրակ բլի ասես՝
անմահական մէ եա՛ր տեսայ — Գիւրջսանի խաղաբումբ:

Դ.

Կ'ուզեմ հիմի փչէ զուռնեն — հարբած բլիմ մինչեւ եգուց,
ամեն մարդու բնկեր բլիմ — ու բաց բլիմ մինչեւ եգուց:

Ծայռոն նսած՝ անցնեմ բուչով, պատուհանից վրես նայես՝
եբեսդ աբուռն սիրտս բնկնի — ու լաց բլիմ մինչեւ եգուց:

Խելբս բաւուն, հոլին տուած՝ երբամ բնկնեմ դուբաճ ու բաղ՝
բնկերներէ սուփրին գինի ու եա՛ց բլիմ մինչեւ եգուց:

Երբամ — ուրիշ գօզալներէ գիրկը դնեմ գլուխս տաբ՝
բո եդ անուշ, ազի՛զ տեսբով հարբած բլիմ մինչեւ եգուց:

Ե.

Ես մէ հարբած դուխանդար եմ — դուխանիս մէջ բան չմնաց,
ամէնքի հետ սեղան ճսայ՝ սուլթան, վէզիր, խան չմնաց,
ամենայն տեղ գովէդ արի, տաղեր ասի՛ դրախտային—
էլ ի՞նչ ասեմ սիրեկանին՝ գօզալ, հոգի, ջա՛ն չմնաց:

Թողի ամէնն, ինչ ունէի՝ կեանքս դարձաւ հովի նման,
էջդ ելաւ, ճամբես կտրեց՝ Հնդստանի ծովի նման,
հարբած՝ խալխի ճոխար դարձայ աշուղ Սայեաթ-Նովի նման,
կարոս կեցայ հրամանիդ՝ ուրիշ հրաման չմնաց:

Ես մէ հարբած դուխանդար եմ — դուխանիս մէջ բան չմնաց,
էլ ի՞նչ ասեմ սիրեկանին — գօզալ, հոգի, ջա՛ն չմնաց:

Զ.

Մէ ձեռիս արաղ է, մէկէլը գինի.
երկուսն էլ էն աշուշ կենացը, գօզալ:
Կարոս եմ սուլթանի, սիրեկան խանի—
աշուշ է էն էջի բերածը, գօզալ:

Սրտիս համար աշուշ երազ ես հիմի,
ճնիս մէջը տուած մուրազ ես հիմի,
հեռու ես — Վարդսաւն, Շիրա՛զ ես հիմի՝
չի՛ լաւանայ էջիդ էրածը, գօզալ:

Մէ ձեռիս արաղ է, մէկէլը գինի.
երկուսն էլ էն աշուշ կենացը, գօզալ:
Էջիդ բոլ բուր ըլի, իմ սիրտն հանի—
աշո՞ւշ կենայ սրտիդ սիրածը, գօզալ:

Է.

Ինչ֊ման զանգ ես տալիս — իմ միտն ես գալիս՝
զանգի նման անուշ, հալա՛լ ես, գոզա՛լ:
Ինչ֊ման գարուն բացուի — դու հետն ես գալիս՝
գարնան ջրի նման վարար ես, գոզա՛լ:

Ոնց որ պանդուխս ըլիմ աշխարհում հիմի,
անուշիդ ո՛ւխս ըլիմ աշխարհում հիմի,
ասես թե՝ քո՞ւխս ըլիմ աշխարհում հիմի—
գարնան ճամու նման տարար ես, գոզալ:

Չես հասկանայ իսկի, թե ի՞նչ ես արե.
հազար մարդ ես հոխից գերեզման տարե.
հոխդ օսկե գրիչ, սիրտս դա՛ւբար է —
արնե գրով գրած զարա՛ր ես, գոզա՛լ:

Ը.

Իսօր մեր փողոցով անցար — շրթերդ գինու բաս հին,
մազերդ օսկի — աբրեշում, աչքերդ ալմաս հին:

Փողոցում կեցած մնացի՝ աչքերս պղտոր ու գինով.
արեւը խաղում էր վրեդ՝ հագիդ շորերը խաս հին:

Մե աչքով վրես նայեցիր, ասի թե՝ սիրով է ելի.
կարմրագուն կրակի նման այտերդ կարմիր — կաս հին:

Ասի թե՝ ոսքերդ ընկնեմ, բայց տեղում կեցած մնացի՝
այտերիդ կարմիր կրակին աչքերդ անմաս հին:

թ.

Շրթերդ կրակով լիքը օսկեջրած չինի են, ջա՛ն,
խօսքերդ դրախտի խմիչք՝ անմահական գինի են, ջա՛ն:

Էսօր տնում սուփրա ունեմ՝ հէսիդդ էհ՛ծ պիտի անեմ.
ի՞նչ կլի որ օթախս գաս — ու մէկ անգամ լինի են, ջա՛ն:

Փռել եմ խաս խալիչէքը, վրեն ծաղիկ ունեմ շարած՝
ոսկիդ կարոս սպասում են — շանճանի, խանի են, ջա՛ն:

Աչքերս թող կրակ ըլին ճո սուրբ չրաղուանի համար.
դափ ու զուռնեն հազրել եմ՝ մէջերդ ի՞նչ բանի են, ջա՛ն:

Կ'ուզես՝ հոգի՛ս ճամբայ անեմ, սիրտս դնեմ ոսկերիդ տակ՝
արտիցս արիւն է հոսում — ինչ որ ուզես կ'անի են, ջա՛ն:

ժ.

Էլի գարուն կը գայ, կը բացուի վարդը,
սիրեկանը էլի եարին կը մնայ:
Կը փոխուին տարիքը, կը փոխուի մարդը,
բլբուլի երգն էլի՛ սարին կը մնայ:

Ուրիշ բլբուլ կը գայ կը մտնի բաղը,
ուրիշ աջուղ կ'ասէ աշխարհի խաղը,
ինչ որ ե՛ս չեմ ասէ — նա՛ կ'ասէ վաղը.
օրերը ծուխ կլին, տարին կը մնայ:

Հազար վարդ կը բացուի աշխարհի մէջը,
հազար աչք կը բացուի աշխարհի մէջը,
հազար սիրտ կը խոցուի աշխարհի մէջը—
էսիր կրակ կլի՝ արին կը մնայ:

Ուրիշ սրտի համար կը հալուի խունկը,
կը բացուի շուշանը, վարդերի տունկը.
գօզալը լաց կլի, կ'ըսկսի արցունքը—
գերեզմանիս մարմար քարին կը մնայ:

ԺԱ.

Հազար ու մէ գիրք կարդացի — խելացի գիրք չտեսայ,
հազար կնկայ գիրկը ընկայ — սիրեկան գիրկ չտեսայ:

Հասայ մինչեւ Ծռանգստան, երգ ու տաղեր լսեցի—
Սայեաթ-Նովի ձիրքի նման երկնային ձիրք չտեսայ:

Աղեխի հետ սեղան նստայ, նոխարի հետ խմեցի՝
մարդու ասած խօսքերի մէջ արդար կըիռք չտեսայ:

Հազար գօզալ սիրտս հրեց ու հազարին սիրեցի—
ես սուրբ կրքից աւելի վառ ու անմար կիրք չտեսայ:

Ամեն բանից բար ու բեզար հրետս տուեցի—
բաղերն ընկայ՝ եզնից անուշ ու հասած միրգ չտեսայ:

ԺԲ.

Ամեն տեսակ երգ երգեցի — ամենից լաւ տաղն է ելի,
Սայեաթ-Նովի դրախտային, անմահական խա՛ղն է ելի:

Ինչքան էլ լեն դուխաններում ռանգ-ռանգ մրգեր ըլին շարած՝
անմահական մրգերի տեղ — շահնշահի բաղն է ելի:

Բախչի միջի ծաղիկները ինչքան էլ լաւ ջրով անես՝
ծաղիկների ջուրը ուզած — առաւօտուայ շաղն է ելի:

Գնա՛ կ'ուզես Ծռանգստան, ամենամեծ խուչէրը տես՝
արտիդ ուզած տեղը միակ — սիրեկանի բաղն է ելի:

Վա՛յ եզ, Ջարեցց, լա՛ւ իմացի, ականջ արա սիրեկանիդ՝
ամեն բանից լաւ ու անուշ սիրեկանի դաղն է ելի:

ԺԹ.

Ինչ֊ե՞ն կանչես ու տալ ասես, խելքի արի՝ բա՛ւ է, էլի,—
առաջս անգին զօզալի էլ աշխարհը լեն, լաւ է, էլի:

Ինչ֊ան էլ խաս, ատլաս հագնի, երեսը ալ, զօզալ անի—
աչլորների հոգի հանող սիրեկանդ հա՛ւ է էլի:

Ինչ֊ան էլ Ֆանդ, զար ուենեաս, ինչ֊ան էյթիբար ուենեաս՝
սիրող սիրտը ծովըն ընկած անօգնական ձաւ է էլի:

Թեկուզ սիրի, գիրկդ ընկնի, դնես օսկե ղափազի մէջ—
կնկայ հէխը հոգի հանող անհանգչելի ցաւ է էլի:

Վա՛յ էեզ, Զարեենց, լա՛ւ իմացի, խելդդ քող միշտ գլխիդ մնայ՝
ամենասուրբ խօսքը կնկայ արիւնաբամ դա՛ւ է էլի:

ԺԹ.

Հիմի շատ են երգիչները — հոգու ուզած տաղը չկայ,
ամենայն տեղ խնդութիւն է՝ սրտի ուզած խաղը չկայ,
ուր որ կոխես — բաղ է հիմի, շահնշահի բաղը չկայ,
մանե եմ գալիս ֆուչա-ֆուչա — սիրեկանի թաղը չկայ:

Ես ո՞ւմ ասեմ երգս հիմի՝ ոչ դու կ'ուզես, ոչ էլ եադը,
թեկուզ անուշ տաղերիցս չէ հեռացե Աստու մասը.
ոչ-ով ուզեց ականջ դնի, իմանայ սրտիս գանգատը՝
ուզում եմ սիրտս հովանայ՝ արտասուէի շաղը չկայ:

Ասում եմ թէ՝ թողնեմ սազը, ամէնքի պէս մարդ ըլիմ ես,
թէ որ վարդ եմ—փուշ ունենամ, աննայսնելի վարդ ըլիմ ես,
դուշմանի հետ դուշման ըլիմ, վաճառի հետ վաճ ըլիմ ես,
որ ինձ կարօս ամէն անգամ ասեն՝ սուփրի աղը չկայ:

Մարդիկ են փուչ ու բեդաւադ—աշխարհը լեն, լաւ է, Զարե՛նց,
մարդու խօսքը մարդու սրտին անհանգչելի ցաւ է, Զարե՛նց,
ականջ սրա ազդու խօսքիս՝ ասում եմ թէ բաւ է, Զարե՛նց,
ես չեն սիրի, հանի որ ես սրտի տուած դաղը չկայ:

Ժ Ե·

Երբ ես հին աշխարհը մտայ ես տաղով, սազով-խանանչով՝
ի՞նչ պիտի անէ աշխարհում ես անմիտ-անհնարը, ասին:

Սակայն երբ խալխի էնճերին ես անուշ տաղերս ասի՝
ամառուայ մրգերի նման անո՞ւշ է ես բառը, ասին:

Բայց խալխի անսիրտ էնճերին ես տխուր, մենակ մնացի,
ուզեցի թողնեմ—հեռանամ՝ հպարտ է ու չար է, ասին:

Եւ սրտի ցաւից յուսահատ ես մէ քաս օղի խմեցի—
Զարենցը ցնդած-գիհենոլ, հարբեցող-յիմար է, ասին:

Ու ձմրան բուերի միջին ես բոպիկ ու մերկ մնացի.—
դուրսը ցուրտ, ձմեռ է, սակայն հոգուդ մէջ ամառ է, ասին:

Ասի թէ՝ մա՛րդ էլ ախար դուխ, չէ՞ես տեսնում մարմինս ծուռտ.
Զարենցի հոգին տաղերում անմկուն, յամառ է, ասին:

Խնդացին, էրէջացին միայն, որ այդպէս մնացել եմ մերկ.—
դարերի հիացմունքը վսեմ տաղերիդ համար է, ասին:

ԺԶ.

Բախչովն անցան, բոյր ընչեցին, ափսոս որ վարդը չտեսան,
չոր ու դատարկ տեսով տարուած՝ հոգեկան, բարդը չտեսան:

Երգիս ձայնին մէջիսն եկան, ու անտարբեր անցան նորից՝
սրտիցս իրենց սիրտը գցած հոգեղէն կարթը չտեսան:

Եղայ ինչպես ամառուայ արտ՝ ճանի դէտ սիրտ կար ու կրակ
ցօղուններէն օսկով տարուած՝ անսահման արտը չտեսան:

Ցոյր, սիրեկան, օտար մարդիկ, բարեկամ ու անծանօթ
մօտովս անցան՝ տաղերիս տակ կենդանի մարդը չտեսան:

ԺԷ.

Հիմի անտուն ման եմ գալիս, գիշեր ցերեկ երգ եմ պտում.
մոռցել եմ հէսիդ անունը, հարցնողաց՝ վերէ եմ ասում:

Հէսդ հին եարա է, զօզալ, վառւում է կրակի նման—
ու էն եարէն տուող ձեռքին շահնշահի ձեռ եմ ասում:

Գանգաս չունեմ սրտիս միջին. սիրեկան պատկերիդ նման
սիրում եմ սրտիս մոխիրն՝ անմահական բերէ եմ ասում:

ԺԸ.

Աշխարհիս մեջ ես էլ մի օր կ'ապցնեմ աղդարձ ու կ'երթամ,
ես չեմ ցայի, չեմ պահանջի ես փառք ու վարձ—ու կ'երթամ:

Աշուղ Սայեաք-Նովի նման ես էլ գլխեն իմացայ,
որ աշխարհում փուչ է ամեն երազ ու լաց—ու կ'երթամ:

Էն էլ, որ ես իմ վառ ուրտով ու կարոտով սիրեցի—
համուն կը տամ, կը մոռանամ ամեն մի հարց—ու կ'երթամ:

Ու գոզալի պատկերը վառ, դեմքը մախմար ու աչուր
կը մոռանամ... կ'առնեմ խոնար, հողի մեջ բարձ ու կ'երթամ:

Կեանքիս նման հեռո՞ւ մարդիկ, աչառուն ու աննամոթ,
ձե՞զ կը՝թողնեմ երգերս այս՝ կեանքս երազ—ու կ'երթամ:

ԺԹ.

(Հայաստանին)

Հազար ու մի վերք ես տեսել — էլի՛ կը տեսնես,
հազար խալխի ձեռք ես տեսել — էլի՛ կը տեսնես:

Աշնան ֆաղած արտի նման՝ հազա՞ր զոհերի
չհաւաքած բե՛րք ես տեսել — էլի՛ կը տեսնես:

Գլուխդ չոր համուն տուած պանդուխտի նման
հազա՞ր տարուայ ներք ես տեսել — էլի՛ կը տեսնես:

Նարեկացի, Շնորհալի, Նաղաշ Յովնաթան—
ինչքա՞ն հանճար, խելք ես տեսել — էլի՛ կը տեսնես:

Քո Ջարենցին լեզու տուող երկի՛ր Հայաստան,
հազա՞ր ու մի ե՛րգ ես տեսել — էլի՛ կը տեսնես:

Ի.

Ես իմ ազուշ Հայաստանի արեւահամ բառն եմ սիրում,
մեր հին սազի ողբանուագ, լացակումած լարն եմ սիրում,
արցանման ծաղիկների ու վարդերի բո՛յրը վառման,
ու ցաիրեան աղջիկների հեզանկուն պա՛րն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լինը լուսե,
արեւն ամռան ու ձմռուայ վիճապածայն բուբը վսեմ,
մթում կորած խրճիթների անհիւրընկալ պատերը սեւ
ու ճնճուկայ խաղաճների հազարամեայ խո՛րն եմ սիրում:

Ուր է՛լ լինեմ — չե՛մ մոռանայ ես ողբածայն երգերը մեր,
չե՞մ մոռանայ աղօթք դարձած երկաթագիր գրերը մեր,
ինչքան էլ սո՞ւր սիրտս խոցեն արիւնաման վէրերը մեր—
էլի՛ ես որբ ու արնավառ իմ Հայաստան-եա՛րն եմ սիրում:

Իմ կարօտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքեաք չկայ.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ նահատ չկայ.
աշխա՛րհ անցիր՝ ԵՒրարատի նման ճերմակ գագաթ չկայ.
ինչպես անհաս փառքի ճամբայ՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:

1920-1921
Երեւան-Մոսկով

Ա Ռ Ն

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈԷՏ

Ինձ համար չարը դառնում է բարի,
անգոյն առօրեան — մոգական երազ.
սիրում եմ բոլոր գոյներն աշխարհի՝
երկրային հեռուն ու աստղերն անհաս:

Եւ երջիկների երգերը անհոգ,
վազքը կառքերի, փողոցի ուղին—
դառնում են յանկարծ հեռաւոր ցնորք,
որ երազել է պոետի հոգին:

Երբ համբուրում եմ շրթերը կնոջ,
շրթեր, որ հազար մարդ է համբուրել—
հաւատում եմ ես, որ նրանք իրոջ
շրթունքներ են կոյս — ու մաքուր են դեռ:

Ո՞վ կը հասկանայ պոետի ուղին...
երբ փողոցներում թափառում է նա—
նրա թեւաւոր, աստղային հոգին
նախրում է հեռու աստղերի վրայ:

Ո՞վ կը հասկանայ, թէ ինչո՞ւ է նա
համբուրում նեխած շրթերը կնոջ,
երբ ո՛չն վայրկեանին աղօթում է նա
աստուերի առաջ հեռաւոր իրոջ:

Ո՞վ նրա տրտում երգը կը լսի,
երգը խելագար, կամ ցնդած մարդու:
Բայց նա մեռնելիս կը ժպտայ, կ'ասի.
— Օրհնուի՛ւն ինձ, կեանք: Հրա՜շք էիր դո՛ւ...

1916

ԳԻՇԵՐԱՊԱՀԸ

Ես արթնանում եմ, երբ ճնում եմ դուխ
եւ գիշերն ամբողջ անխոնջ ու անհուն,
երբ փողոցներով չի անցնում ոչ-ոք—
խայտում եմ, խայտում անկիւնից-անկիւն:

Խայտում եմ եւ լուռ մտածում եմ ես,
որ չունեմ ձեզ պէս ոսկիներ, գանձեր,
բայց գիշերների մեհնակութեան մէջ
ձեր ոսկիների հսկողն եմ դարձել:

Հսկում եմ, հսկում, որ ոչ-ոք չգայ
եւ չգողանայ ոսկիները ձեր:
Հանդարտ է ուրջս՝ ձայն, շունչ չկայ.
— իմ կեանքն էլ, մի՞թէ, այսպէս չի՞ անցել:

Ես չեմ ծաւալել առաւօս ձգիր;
ոսկի չեմ դիզել, չեմ գանձել ոչինչ.
ցայել եմ միայն հեռու աստղերին,
որ ահա նորից հե՜ղ թարթում են ինձ:

Նայում եմ լուսնին: Հսկում եմ արթուն:
Աշխարհը — անհո՜ւն, աստղազարդ տեսիլ:
Իսկ երբ արթնանամ — կը գնամ ես տուն—
եւ անո՜ւշ, անո՜ւշ կը ննեմ ես էլ...

1916

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԱՆՅՈՐԴԻՆ

Մենք երկո՛ւսս էլ, մենք երկո՛ւսս էլ անվերադարձ աշխարհում
ապրում ենք, կանք, գնում ենք — ո՞ւր. միևնո՛յնն է մեր հետուց:

Կանգնիր, անցորդ: Կանգնիր: Նայենք: Նայենք իրար — գուցե՞ մենք
յանկարծ ժպտանք՝ չճանաչուած մի բարեկամ ճանաչենք:

Կանգնի՛ր, կանգնի՛ր. ո՞ւր ես վազում, ո՞ւր ես գնում դու արագ.
աչքերիս մէջ գուցե՞ գտնես ոսկեժպիտ մի կրակ:

Դու ուրախ չե՞ս, որ ապրում ենք — ու հանդիպել ենք իրար.
ո՞ւր ես անցնում անվերադարձ, որպես անդարձ ճանապարհ...

Ե՛ս էլ կ'անցնեմ — տրտում, մենակ, — ու կը գնամ իմ անծայր
երազ-ճամբաս, որով դու էլ այս իրիկուն կո՞յր անցար:

Դու կոյր անցար, չնայեցիր ու հետացար մտուտում.
բայց ես երկա՞ր էն անծանօթ, օտար դեմքը կը յիշեմ:

Կը յիշեմ, որ դեգերումիս ճանապարհին, որպես յուշ,
մեկը անցաւ. իրիկուն էր. իրիկուն էր ու մտուտ...

1916

ԴԱՀԻՃԸ ԿԱՐՄՐԱՋԳԵՍՏ

Դու կը դնես ֆո գլուխը իմ բարձին՝
սեւ հիւսերդ ջրերի պես թափած վար,
արտասուովդ, լուռ կը սպասես հարուածին՝
գոհ, աճապարանքով, երազօրեն — հոգեվար:

Կ'իջնի՛, կ'իջնի՛ իմ հարուածը մահաբեր—
կո՞յր հարուածը կարմիր հագած դահիճի.
դուրսը խաւին կը ծիծաղի աճապարեր
ու մութը, չար, կը խտանայ ու կ'աճի:

Բայց մեռնելուդ առաջ, վերջի՛ն վայրկեանին,
դու կը տեսնես եւ կը ժպտաս հպա՞րտ, գոհ,—
որ դահիճը, այդ կարմրազգեստ վայրենին
համբուրում է ջղածգուող ձեռքը ֆո...

1916

❁

Ցիտում եմ. ինչեց զանգը միջանցքում
եւ ես ներս մտայ հին սենեակը ֆո:
Երկա՞ր խայտեցի անկիւնից-անկիւն:
Ցետ դուրս եկայ՝ էզանից դժգոհ:

Ցետ դարձայ կրկին: Այնման մութ էին
խօսքերդ այն գիշեր: Մութ ու առօրեայ:
Եւ մի ժամ յետոյ հեռացայ կրկին՝
արիւնի հետքեր ձեռքերիս վրայ:

Եւ չհասկացաւ ոչ-ոք այն գիշեր,
որ սենեակիդ մէջ սպանել եմ էզ:
Միայն իմ հոգում մեռած էր իջել
եւ ստուերդ ինձ միշտ լոյս հսկեց:

1916

ՇԱՄԻՐԱՄ

Իրիկնային փողոցում ես տեսայ նրան:
Նա — ներկուած պչրուհի, գուցէ — Շամիրամ:

Եւ ինձ տուեց հինգաւուրց յուռութները նա.
երկու համբոյր — փողոցում, մայթերի վրայ:

Եւ հմայեց ու տարաւ նա դիեակը հին:
Լապտերները ժպտալով ճանապարհ դրին:

Եւ, չնայած որ անթիւ դարեր են անցել՝
նո՛յնն է երազը նրա, լոկ մարմինն է — ծեր:

Նո՛յնն է խօսքը, կարծես նոր տրուող աղջկայ –
միայն մարած աչքերում էլ հրդեհ չկայ:

1915

❋

Կսկն անտես հիւրեր: Գալիք են նրանք
անխօս ու անձայն, լուռթեան ծոցում:
Գալիս են, ապրում ու անցնում նրանք՝
ոչ դուռ են բացում եւ ոչ դուռ գոցում:

Ոչ անուն ունեն, ոչ ստուեր, ոչ ձայն:
Գալիս են, ապրում եւ անցնում են լուռ:
Եւ ինչո՞ւ եկան, եւ ինչո՞ւ անցան—
մենք չենք իմանում աշխարհում անդուռ:

Միայն մի՛ անձայր ու խոր տխրութիւն
երբ փռում է իր թեւն ամենուրեք—
զգում ենք յանկարծ կարօտով անհուն,
որ մեկը անդարձ անցել է երեկ...

1916

❋

Կեանքը — երգի, երկնքի պես անհո՞ւն, անհո՞ւն, —
կեանքը — կորած ասղերի՞ պես հազարանուն:

Կեանքը — կրակ ճահիճներում՝ կայ ու չկայ, —
կեանքը — ճամբորդ, ապաստած ինչ, որ պետք է գայ:

Կեանքը — երգի, երկնքի՞ պես անհո՞ւն, անհո՞ւն, —
Կեանքը — կորած ասղերի՞ պես հազարանուն...

1916

❋

Հմայում է ինձ լապտերը փողոցային,
հմայում են մանըկենները անմարմին,
հմայում է պատուհանի ջահը բարթող,
հմայում են հայելիները կախարդող.—
ու փողոցում բերբեր ծախող զուարթ տղան,
եւ կառքերն ու վազքը նրանց յաւերժական,
եւ զանգերիչերգը տխուր ու հոգեթով —
գո՞րծ առօրեան՝ իր ձանձրոյթով ու հեբեթով:

1915

❁

Փողոցների մէջ կայ մի աճաճուճ,
անըմբռնելի կարօտի նախրում:
Լսում ես, զգում, բայց չես հասկանում
եւ չես ըմբռնում կարօտը նախրուճ:
Կառքերի վազքում, դէմքերում օսար,
անհասկանալի հայհոյքում կանանց—
թւում է յանկարծ, թէ ահա գսար
յաւերժականի ուրուականն աճաճց:
Ձախրում է մէկը փողոցի վրայ՝
հզօր ու անմահ, որպէս ժամանակ.—
իսկ ինքդ կարծես ստուե՛րն ես նրա՝
մի անմիս ժպիտ, մի տխուր հանգամ:

1916

❁

Երգում է հաղթճն իր երգն առօրեայ,
իսկ ես — մտածկոտ, տրտում ու լռին—
կանգնել եմ ահա կամուրջի վրայ
եւ նայում եմ յորդ, հեռացող ջրին:
Նայում եմ տարուած, մոռացուած, անքարթ:
Վազում են, վազում ջրերը անվերջ:
Փրփուրի միջից ահա մի նայեաղ
ինձ ձեռքով արաւ եւ իր մօս կանչեց:
Որպէս մանկական կապոյտ երազում—
խաղընկեց ահա նեռնակ փրփուրին.
եւ թւում է, թէ կամուրջն է վազում,
որ հասնի անդառձ հեռացող ջրին...

1916

❋

Դուրսը, հեռուում — դաշտեր ու դաշտեր:
Երկինքը — կապոյտ, արեւոտ, անհուն:
Ամպի պես կախուած օդուում է դեռ
կեանքը աշխարհում:

Դաշտեր ու դաշտեր: Ու արեւը — վառ:
Եւ կեանքը — անտես: Զգում եմ, որ ես
դուրս կը գամ հիմա, կ'ընկնեմ ճանապարհ:
Մի՞թէ չգիտես:

Կը գնամ, մենակ: Կեանքում, աշխարհում:
Եւ մի իրիկուն կը մթնի ուղիս:
Ու կը վերջանայ երկրային հեռուս —
ճանապարհը հին:

1916

❋

Ճանապարհը — գորշ, փոշապատ, դյուր:
Տերեւթափ ծառեր:
Խամրել են գարնան գոյները բոլոր:
Այդ ո՞վ է արել:

Պարզ, մարմանդ մտուր: Նայում եմ հեռուն —
դաշտերին, ծովին:
Ինչո՞ւ է հոգիս տրտմօրեն լռում
աշնան օրերին:

Ու գոյները — գորշ, ու գունատ, ու պաղ,
ու անմխիթար:
Եւ հոգի կրծող կսկիծը, որ՝ ա՜խ —
անդա՜ռ չգտար...

1916

❁

Այս շենքի վրայ ամպերն են թառել,
ճնել է խաւին:
Մեկը սենեակում կրակ է վառել
իրիկնաժամին:

Կրակ է վառել, իսկ ինքը չկայ:
Դատարկ սենեակում
կախուած է պատկերն օսար աղջկայ:
Լոյսը չի հանգում:

Ջնել է խաւին: Ու ծառերը մուշջ
նիրհել են մուժում:
Իսկ կրակը դեռ վառւում է անխոնջ
ներսը — մշուշում:

1916

❁

Կարինէ Քոթանեանին

Գիշերը յոգնած նստել սենեակում,
նայել շորերիդ ծալքերին լուսե,
ու լոյսը լամպի տխրութեամբ անհուն
գուրգուրե հոգուս յոգնութիւնը սեւ:

Լուռ, անձայն նստել մի բաժակ թեյի:
Ձեռքերդ դնես յոգնած ծնկերիս:
Ու հին, փոշապատ հայելիների
մշուշում կորած՝ խոնջանայ հոգիս:

Եւ սիրել բախտը՝ պարզ ու երկրային,
ցանկութիւններդ մեղկ ու կամակոր—
եւ սիրել էն տան փոշապատ ուղին
եւ սենեակներիդ տխրութիւնը գոլ...

1916

ՄԱՐՄՆԻՍ ԵՐԱԶԸ

Շոգ վերմակի տակ դողում է, տեղում մարմինս այս գիշեր:
Քնել չե՞մ կարող: Աչքերիս առաջ ցատկում են, պարում:
Աչքերիս վրայ մի հրաբորբոք մշուշ է իջել —
իսկ նրանք գալիս ու դառնում են ցոփ, խայտառակ պարում:

Գալիս են նրանք, անվերջ շարխրով անցնում են նրանք,
աչքերիս առաջ նոյվում են գիրգ, տափասեր ձևեր:
Մօտենում են ինձ, համբուրում են շոգ շրթերով կրակ
ու կրկին — կրկին ոգի են դառնում ու ցատկում են վեր:

Եւ նորից, նորից մօտենում են ինձ ու գրկում են ինձ,
երակներիս մէջ լցնում են գինի, մարմինս խանձում:
Եւ երբ դողացող ձեռքերով նրանց սեղմում եմ կրծքիս —
դառնում են կրկին անմարմին ոգի — կրքերի ցանցում:

Եւ վերմակի տակ դողում, գալարում ու տեղում է դեռ
մարմինս՝ բաղուած հրթիռում, ինչպես տիղմերում ճղճիմ:
Իսկ հոգուս խորքում այօրում է դեռ մէկը, կարեվեր,
որ չկատարուի՞ մարմինիս կարմիր երազը վերջին...

1916

❋

Դուրսը համին բախառում է, անմխիթար դեգերում.
— չի՛ մոռացայ պոետը քեզ, չի մոռացայ ո՛ն հեռուն:

Նա մենակ է ու ծեծում է փակ դռները հիմա նա.
— քեզ մօտ կը գայ, երբ էլ ոչ-ոք իր դռները չբացայ:

Ո՜ւռ՜ւ... նրոցը աշնան համու, որպես լացը չուրակի.
— կրկին կը գայ, ո՛ն մենաւոր պատուհանը կը թակի:

Կես գիշերին ո՞վ կը բացայ իր դռները համու դեմ.
— դու գրկաբաց ինձ կ'ընդունես, դու կ'ընդունես, ես գիտեմ:

Լո՜ւռ... կուչ եկաւ աշնան համին պատերի տակ անկիւնի.
— յոգնած սիրտս ո՛ն մեղաւոր գգուանքներում կը քնի...

1916

ՈՒՐՈՒԱԿԱՆՍ ՆՈՐ

Չեմ ճանաչում ինքս ինձ,
չգիտեմ ես էլ,
թե ո՞վ խլեց ինձանից
մի ոսկի տեսիլ:
Փողոցներում — հեռաւոր
ու անմարդ, ու մութ,
ես տեսնում եմ դեմքս նոր
անորոշ ու սուր:
Ես տեսնում եմ՝ մռուզում
մեկը, մոլորուած,
դեգերում է ու յիշում
դարբասները բաց...
Դարբասները, որ երեկ
փակուեցին մթում,
որ օրջիկը, յուսաբեկ,
չդառնայ էլ տուն...

1916

❁

Գիտեմ, որ մի օր կը մեռնեմ ես էլ
ու կը վերջանայ իմ կեանքի ուղին:
Մոռացած բոլոր երգերս լուսէ՝
կը յանձնեն ինձ էլ արգաւանդ հողին:

Արեւը նորից անհոգ կը խնդայ
փռելով չորս դին լուսաւոր գանձեր:
Եւ մայրս անգամ էլ չի հաւատայ,
որ եղել եմ էս, ապրել ու անցել:

Եւ գերեզմանս երբ փակուի ինձ հետ—
մեղմս կը մոռնան, սիրոյ խօսք կ'ասեն,—
եւ անցած կեանքս կը դառնայ լեգենդ՝
օրերիս նման անդարձ ու վսեմ...

1916

ՀԵՌԱՑՈՒՄԻ ԽՕՍՔԵՐ

Իմ աչքերի մեջ այնքա՞ն կրակներ եմ մարել եմ
եւ հոգուս մեջ, յուսահատ, այնքան ասղեր եմ մարել:
Կեանքս, որ յուշ է դարձել, հեռացալիս չանիծես.
կեանքս կ'անցնի, կը մարի—բայց երգս կայ, կ'ապրի դեռ:

Կեանքս կ'անցնի, կը մարի, որպես կրակ ճահիճում՝
աննպատակ ու տարտամ, անմխիթար ու անյոյս:
Երգերիս մեջ — դու գիտե՞ս — ինձ ոչ-ոք չի ճանաչում՝
կարծես ուրի՞շն է երգում կապոյտ կարոտը հոգուս:

Ցաւիտեան գոց ու անխօս՝ թափառել եմ ու լռել.
ոչ-ոք, ոչ-ո՛ք չգիտէ՝ արդեօք ի՞նչ է կեանքս, ես.
միայն գիտեմ, որ կեանքում ինչ-որ երգեր եմ գրել,
ինչպես գիտեմ, որ դու կաս, որ սիրում է մեկը ինձ:

Ես երգել եմ ձո հոգիս, ձո ժպիտը լուսաւոր,
ձո աչքերի, ձո դէմքի տխրութիւնը սրբազան.
կեանքս թողած անհունում — ես երգել եմ սէրը խոր
ու կարոտը թեւերիս, որ երբե՞ք ինձ չհասան...

Մօտենում է, ձո՛յր իմ, ախ, իրիկուններ միգամած.
ես ի՞նչ անեմ, որ հոգիս չնեծկլտայ կարոտից.
ի՞նչպես, ի՞նչպես ընդունեմ կեանքիս բաժակը ճամած,
որ ձեռերս չդողան, որ օրերս ներե՞ն ինձ:

Գուցե՞ յանկարծ կասկածեմ, չհաւատամ ինքս, ես,
ու սուտ թուայ իմ հոգուն ձո կարոտը սրբազան...
— Ի՞նչ էլ լինի, ձոյր իմ, ձո՛յր, հեռանալիս չանիծե՞ս
խե՞ղճ կարոտը թեւերիս, որ երբե՛ք ինձ չհասան...

1917

ՏԱՂ ԱՆՁՆԱԿԱՆ

Թողած կարսում, գեթ ափիճ, տուճս՝ ջինուած աճյաճ խաոով,
կարսը բոլած, կարսի այգիճ ու հայրենիք երկիմբ մով
եւ Կարիճէ Քոթաճճեաճիճ աճգաւ չասած մճաս բաոով—
աճց եմ կենուս հիմա օսար խոլաքճերի ճաճապարհով:

Աճց եմ կենուս. ծուրջս — մարդիկ, ծուրջս դեմքեր հազա՜ր-հազա՜ր.
ծուրջս աշխարհիճ է աղմկուս, մարդկայիճ կեանքիճ աճհաւասար.
եւ ո՞վ կ'ասի՝ ինչո՞ւ ես դու, եւ ո՞վ կ'ասի, թէ ո՞ւր հասար,—
դեմքերը, ախ, բութ են այնպէս՝ կարծես ջինուած են տապարով:

Գորշ, տաղտկալի ու խելագար երգ է կարծես այս կեանքը մի.
ինչ-որ մեկի սրտուս բացուած — վերէ է կարծես այս կեանքը մի.
եւ ո՞ւս հաճար — էլ ո՞ւս հաճար կարօսակեզ երգե հիմի
սիրտս՝ լցուած տարիների սեղս արճիճով ու կապարով:

Բայց ծուրջս բոլ որճաճ կ'ուզէ աշխարհը այս խնդայ, ցնդի—
ես — հաւճաճնդաս ու խելագար ու յաւիտեա՜ճ վտարանդի՝
դեպի երկի՜նք պիտի գնաս, դեպի եզերքը Ամենճի—
իս բա՜ռնր, հին ու աստղային երազների ճաճապարհով...

Ու էլ ամէ՛ն մեղքի հաճար սիրտս հիմա ուճի ներուս.
պիտի աճդարձ ես հեռաճաս, պիտի գնաս՝ աչքս է հեռուճ.
թէ Կարիճէ Քոթաճճեաճիճ տեսնէք Կարսի փողոցներուս—
ասէ՛ք ցրաճ՝ Չարենցճ ասաւ — մճաս բառո՜վ, մճաս բառո՜վ...

1919

Ոսկեփրփուր, ոսկեպուրպուր,
փռեմ չորս դին, թափեմ բուռ-բուռ
երգերը իմ հրաշուռ.
երգով խնդամ բոլ բոլորին,
որ մեռնելիս զգամ, որ իմ
օրերն անցան ու չկորան:

1919

ԱՇՆԱՆԱՅԻՆ

1

Արեւն արծաթել է ամպերը բիրեղ.
լոյսից սիրքնել են ամպերը տեղ-տեղ:

Գանգրաթ բարձրանում է արեւն արծաթ—
սառցի պես հալչում է երկինքը կարկ:

Ու պաղ հիացմով մի, կարծես թե իզուր,
սահում են լոյսերը սառուռ առ սառուռ:

1919

2

Աշունը թափում է բերքերս հիմա,
ու ծովը բրջում է արտերս հիմա:

Օ, սի՛րս իմ, դու լուռ ես ու երգդ տխո՞ւր է.
բոլո՞ր իմ լոյսերը ջարդել ես հիմա.

գարնան պես, ծաղկանց պես անցել է քո հուրը
ու հովը խաղում է վարդերս հիմա...

1919

ԱՆՓՆՈՒԹԻՆ

Դուխո՛ւմ եմ, դուխո՛ւմ եմ, դուխո՛ւմ եմ ձիերը,
մրի մեջ դուխում եմ, խփում եմ պայտերը,
պայտերը խփում եմ, խփում եմ հողին.—
աճձա՞յր է գիշերը, անյայտ է ուղին:
Գնո՞ւմ եմ, գնո՞ւմ եմ, գնո՞ւմ եմ ձիերը,
մօտիկ եմ, հեռու եմ, դուխում եմ պայտերը,
պայտերը դուխում եմ խաւարի՛ մեջ հիմա.—
— անյա՞յտ է ափսարին՝ անցնում է ու մահ...

1919

❋

Աստղը դեղնաթուխ նստել է դռանը:
Մրսած ու կծկուած՝ դողում է, վայում է:
Երկինքը բխպակալ կարծես մի բեռան է՝
ուզում է կլանել կանաչը, գարունը:

Մրսած ու կծկուած դողում է իմ ջունը.
փարուել է ոսխերիս՝ մենակ է, տխուր է:
Աչխերը լացկումած, խաղցած են ու խորը՝
աչխերը աչխերիս ասում են՝ աշո՞ւն է...

Աշո՞ւն է, օ, շո՛ւն իմ, աշո՞ւն է, աշո՞ւն է,
գգուի՛ր, փաթաթուի՛ր իմ ոսխերին հիմա.
խաղցած, ամեհի՛ն է գայլի պես աստղը—
աստղը մշո՞ւշ է, մորմո՞ք է ու մահ...

1919

❁

Խաւար է, գիշեր է: Մթում սպասում եմ:
Սեմեակս անյոյս է ու լուռ է գիշերը:
Գիշերը մթի մեջ հոսում ու խօսում է՝
կասկածը ու աիը իմ սիրտը մաշել են:

Լռել եմ: Լսում եմ: Անծա՛յր է գիշերը:
Իսկ մութը մանուում է, մանուում է, մանուում է:
Իսկ սիրտս բոլո՛ր այն աիերը յիշել է.
աիով ու մաիով, ախ, յղուել է իմ տուքը:

Պոկում են ծերպերը: Մթում էրմնջում են:
Անտես փսփսում են — ու սիրտս լսում է:
Գաղտնիք է ու աի է ամեն մի հնչիւնը—
մաիո՞ւ պես դժուար է անյոյս սպասումը...

1919

❁

Կարմիր են գալիքի լոյսերը ու մուգ են.—
կարմիր են, կրակէ,—բայց ախ անամո՞ք են:

Եւ ո՞վ կը կանչի նրանց, որ կեանքում այս
մենակ են, տխուր են, տխուր ու անօ՞գ են...

Նուում է սրտիս մեջ ծանօթ մի մորմոք հին.
—լոյսերը հեռո՞ւ են, անփո՞յթ են, անհո՞գ են...

1919

❋

Ի՞նչ ես արդեօք, չգիտեմ, ես չգիտեմ ինչ հիմա,
գիտեմ միայն, որ դու կաս, անհերքելի, որպես ման,
ու անխուսափ, որպես օր, որ բացւում է ու մարում—
եղել ես դու, այժմ կաս — ու կը լինես աշխարհում:
Օրերիս պես, որ անցան — անմխիթար դու անցար,
արեւի պես այսօրուայ — դու վառել ես իմ ներկան,—

եւ ես գիտեմ, որ կը գաս՝ մխիթարիչ ու պայծառ—
օրերի պես, որ դեռ ևո՞ր պիտի բացուեն, պիտի գան:
Օրերի պես գոյնզգոյն — բացւում ես դու ու մարում,
ևո՞ր ես ընդմիշտ ու անդարձ՝ յաւերժօրեն հայցր, խոր.
եւ ես գիտեմ՝ կը լինես դու, պայծառ ու լուսաւոր—
հանի ապրում եմ ես դեռ, հանի ես կամ աշխարհում:

1919

❋

Աղմկում է իմ սրտում ամեն գիշեր մի կարոս,
ալմկում է, որպես խուլ ու հեռաւոր մի ֆաֆի,
ալմկում է միևչեւ յոյս, գանգատւում է վարացոս
ու ժամերն է հաշւում իմ, վայրկեաններբ միաւմի:

Գիշերի մէջ լռաճիսս ալմկում է աշորոշ,
խո՞ւլ ծփում է իմ սրտում, եւ ուղեղում, եւ հոգում.
ու թւում է, թէ հիա երգր ուրի՞շ, մի ուրի՞շ
աշխարհից է մօտենում հեռուներին իմ հոգու:

Զարթնում է մէջս յանկարծ հազարամեայ մի ֆաոս,
ծփում է յորդ, տարուբեր, ովկիանի պես վարար,
ժամանակի պես անդեմ, մշտաձոյով, մշտաձոս,
գառագյաւմի պես ծփոր ու անհատաշս ու խաւար:

Հնչում է մերբ, որպես երգ անծայրածիր մշուշում,
հիւանդ մանկան պես անօգ՝ մերբ գանգատւում է կամաց,
ու ոռնում է մերբ տխուր, յուսակտուր, որպես շուն՝
լուռ, լուսնկայ ու անդորր գիշերի մէջ միգամած:

Եւ լսում է իմ հոգին երգր այդ մութ ֆաոսի,
ծփոր ալմուկր հիա, ոռնոցներբ կատաղի.—
եւ ես գիտեմ, որ այդպես պիտի իմ կեանքբ հոսի
միևչեւ մարի յաւերժի ովկիանի մէջ աղի...

1919

ԳՈՐՈՏ

Մի ոտա աղջկայ

1

Հիմա ես ինռուս եմ, հիմա
օրերս ուրիշ են արդեն.
անցած հրապոյրն էլ չկայ,
անցած տխրութիւնը այն բեն:
Ու փողոցներս չկան,
ու կրակներս ինւանդ.
կարմիր փոթորկուել է ներկաց—
վառել է ա՛լ կաւոս ու խանդ:
Բայց ես, ես սիրով օրորուն,
հրեղեն օրերուս այս անգին,
յանա՞խ երազում եմ ես ինռուն,
ես գորշ հմայքներս այն հին:
Երազում եմ փողոցներս տամուկ,
ես ծախուող հմայքներս անբով—
ու ցչուլ է հոգիս մանուկ՝
յուսահատ, շրջմոլիկ, անտուն...

2

Կապոյտ իրիկուն էր իջնում–
Եկնում էի փողոց:
Գալիս էիր միջոց դու՝
լուռ, յոգնաբեկ, անխօս:
Ակնթարթի մէջ միջոց մի
մեղքի փայլ էր լինում.
ու շորերդ — խառնուած,
ու բթուած բոյր գինու:
Ո՛չ խօսք էր պետք, ո՛չ վեճ,
ո՛չ ակնարկներ զգուշ.
շրջում էինք անվերջ
փողոցներում մռութ:
Իսկ յոգնելիս — եժան
հիւրանոցում մի մութ
ճնում էինք մեկտեղ,
որպես եղբայր ու քոյր:
Մոռացե՞լ ես արդեօք
գիշերներդ այն մեր...
Ես քեզ յիշում եմ միշտ,
ես քեզ սիրում եմ դեռ:
1920

❁

Գարունը սիրտ է յուզում — հուր ու հրդեհ է վառել,
ջինջ օրերի երազում — հուր ու հրդեհ է վառել:

Փռել է բոյր ու ծղուկ ու զարկել է ծիածան՝
հորիզոնից-հորիզոն հուր ու հրդեհ է վառել:

Գարնան բոյրի պես անուշ՝ անմխիթար իմ հոգում
այսօր թովիչ էո լեզուն հուր ու հրդեհ է վառել:

Դու եկել ես գարնան պես ու զարկել ես ծիածան.
սիրտդ իմ սիրտն է ուզում — հուր ու հրդեհ է վառել:

1920

❁

Դու իմ գարնան առաւօս—ի՞նչպես կանչեմ էեզ հիմա.
դու հարազա՞տ, արեգ մօս—ի՞նչպես կանչեմ էեզ հիմա:

Եւ դու, ոսկի իմ ամառ, հրանման, հրավառ,
ամռան կեսօր դու իմ sop—ի՞նչպես կանչեմ էեզ հիմա:

Եւ դու, ոսկի իմ աշուն, աշնան մրգի պես հասած,
անուշացած մրգի հոտ—ի՞նչպես կանչեմ էեզ հիմա:

Դուէ բոլորդ հեռացել, մնացել եմ հիմա ծեր
եւ իմ արտոյ արիւնոտ—ի՞նչպես կանչեմ ձեզ հիմա:

Ահա արեգն իմ արդեն մօտեցել է մի պառաւ
ու բերել է մանուշակ բօր —ի՞նչպես կանչեմ ձեզ հիմա...

1920

Հիմա յիշում եմ բոլոր օրերս հին ու անցած,
յուսազարդ ու բեւեռոր օրերս հին ու անցած:

Եւ բռում է, թէ ցոհա կարկաչելով պիտի գան—
մանուկներէ ճամբան նուր — օրերս հին ու անցած:

Բայց գալիս են ցոհա յո՞ւռ, ու յոգնաբեկ, ու տխուր,
անցորդներէ պես մոլոր — օրերս հին ու անցած:

Պանդուխտներէ ճամբան այն, որ հեռացել են վաղուց—
տուն են դառնում ցորից ցոր — օրերս հին ու անցած:

Եւ հասում են, յոգնաբեկ, անիա արտիս վրայ ծեր
ու յօրանչում են տխուր — օրերս հին ու անցած:

Եւ չեն կանչում ոչ-ոքի. մտորում են ու լռում.—
ո՞ւր են փնտրում ու անդորր օրերս հին ու անցած:

1920

ՄՕՐՍ ՀԱՄԱՐ ԳԱԶԻԼ

Ցիշում եմ դեմքը fո ծեր, մայր իմ անուշ ու անգին,
լոյս խորհուրդներ ու գծեր, մայր իմ անուշ ու անգին:

Անհա նստած ես տաճ դեմ ու կանաչած բքենիք
դեմքիդ ստուեր է գցել, մայր իմ անուշ ու անգին:

Նստել ես լուռ ու տխուր, ինչ օրերն ես յիշում այն,
որ եկել են ու անցել, մայր իմ անուշ ու անգին:

Եւ յիշում ես fո որդուն, որ հեռացել է վաղուց—
ո՞ւր է արդեօք հեռացել, մայր իմ անուշ ու անգին:

Ո՞ւր է արդեօք հիմա նա, ո՞րջ է արդեօք, թէ մեռած,
եւ ի՞նչ դռներ է ծեծել, մայր իմ անուշ ու անգին:

Եւ երբ յոգնած է եղել, եւ երբ խաբուել է սիրուց—
ո՞ւմ գրկում է հեծեծել, մայր իմ անուշ ու անգին:

Մտորում ես դու տխուր եւ օրրում է բքենին
տխրութիւնը fո անծիր, մայր իմ անուշ ու անգին:

Եւ արցունքներ դառնագին անհա քնկնում են մեկ-մեկ
fո ձեռքերի վրայ ծեր, մա՜յր իմ անուշ ու անգին...

1920

«Ֆո վարդարանը»

Նուարդի Համարի

Ֆո աչէերի պես խոնաւ ու լազուր լճի
հեռուների նման բիլ իմ հոգում հիմա
տխրութիւն է ու թախիծ, դառնութիւն ու մահ:

Եւ ես ուզում եմ, որ այդ տխրութիւնն աճի
ու խտանայ, մօտէի պես կապոյտ ու թեն--
որ ես ոչի՛նչ չտեսնեմ մօտիցդ բացի...

Սակայն նստել եմ, տխուր, իրիկուայ մէգին,
ու տուել եմ մատներիս վարդարանը ֆո.
մտորում է զանգերի յուսահատ հոգին
հեռուներում՝ ամպերի տխրութեան ներքոյ:

Ու վարդարանը ֆո հին՝ հեռաւոր յուշի
ճառագայթի նման բիլ՝ իմ լազուր հոգում
թափում է հի՞ն կարօտի մի կապոյտ փոշի...

Ընկնում են, մեղկ ու մեկ-մեկ, հատիկները բիլ
ու հոսում են մատներիս տխրութեան միջով
ջրերի պես աններեւի՝ պարզ, կաթիլ-կաթիլ:

Ի՞նչ է ուզում մատներից իմ տխուր ու մեղկ
Ֆո վարդարանը հիմա, երբ հեռու ես դու,
որպես անցած կարոտի մոռացուած մի երգ:

Եւ ինչո՞ւ եմ ես ցսկել իրիկուայ մէգին
եւ ձեռս առել յակինթէ վարդարանը Ֆո,
երբ մտորում է հեռուն զանգերի հոգին
իրիկնայինն մոխիրէ ամպերի ներքոյ...

Ախ, բո՛ղ հոգուս յազուրէ դառնութիւնն անի
ու խաղայ, մտուշի պես խոնաւ ու թեն,
որ ես ոչի՞նչ չտեսնեմ մտուշից բացի:

Սակայն զանգերը հեռուն մտորում են դեռ
հեզհետէ ծաղրացող ամպերի ներքոյ—
ու երգում է մատներիս կարոտի երգեր
հնամենի՞, յակինթէ վարդարանը Ֆո...

1920

ՄԱՐԻՈՆԵՏԿԱ

Կամաց, կամաց, կամաց, կամաց,
ոտքերն հողին, հողին, հողին՝
եկաւ-գնաց, եկաւ-գնաց,
գուցաս, դեղին, գուցաս, դեղին:

Ձեռքը շարժեց — մեկ վեր, մեկ վար,
ոտքը խփեց — մեռե՛լ, մեռե՛լ,—
առաջ եկաւ դժուա՜ր, դժուա՜ր,
ձեռքը շարժեց — մեկ վար, մեկ վեր:

Ահա՛, ահա՛ — բեռուե՜ց, բեռուե՜ց,
կ'ընկնի՛, կ'ընկնի... բայց չե՛. նայի՛.
շուրջը շրթից դանդաղ ջոկուեց,
մնաց մի պահ՝ աչքը մահի:

Ու սո՜ւր ճչաց՝ կարծես բռնի
աչքերն, անշարժ, ներուն գամած.—
այդպես հոգի՛ս պիտի մեռնի—
կամա՜ց, կամա՜ց, կամա՜ց, կամա՜ց...

1920

ՊՐԻՆՑԵՍՍԱ ՄԱՀ

Նուարդին ու Գոհարին

Սպիտակ վարդեր կաճ շրթերի վրայ ֆո,
աչեերիդ լճի մեջ — մռուացման թերթեր:
Ցաւիտեան հանգել է աչեերիդ կրակը
ու բացուել են տեղը սպիտակ վարդեր:

Դու խաղաղ ճիրեել ես, յաւիտեան լռել ես
եւ այնպէ՞ս է խաղցր լուսիւնը ֆո,
որ մի պահ մարել եմ առաջուայ հրերս
ու խմում եմ ճիրեդ՝ լուսաւոր ու գոհ:

Ախ, կարծես թէ սիրտս ինձ դարե՞ր սիրել է
ու գեել է յոյսդ գազաղում հիմա.
ֆո գունցաս աչեերը, ֆո մաֆո՞ւր աչեերը
իմ հոգին գերել են, օ, պրինցեսսա Մահ...

Եւ ահա թեռուել եմ ու դողդոջ շրթերս
համբուրում են կարծր ֆո նակատը սառ—
համբոյրով տալիս եմ կարօտի վարդերս՝
ֆո լուսե յուշի հետ մռուացմա՛նը տար...

1921

ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

1

Վահա՛ն Տէրեան, ի՞նչպէս երգեմ յիշատակը ձո.
բոց լուռ փղձուի ինձմա իմ դեմ ացոյց երեկոյ:
Սրտիս վրայ իջնի բոց մութ մի ամպի ծուլայ,
համին բերէ բոց մահուան բօր ու աճձրեալ լայ:
Եւ բոց բափուեն ցուրչս աճեան տերեւները դեղին
եւ զարդարեն, Վահա՛ն Տէրեան, ձո ացած ուղին:
Ու մտուտում տխո՜ւր երգով բիւրաւոր զանգեր
բոց օրհներգեն թախիծը ձո, իմ հեռու բնկեր...

2

Դու արդէն հեռացել ես, աշխարհում էլ չկաս դու,
ու լռել է երգը ձո արդէն ինձմա,
բայց զգում է սիրտս, որ ճորի՜ց կը գաս դու,
երբ իջնի գիշերը ու աճձրեալ լայ:

Երբ իջնի գիշերը ու ացած յուշերը—
ացածի փշերը դառնօրէն խոցեն—
ո՜րբ, մենակ կը գաս դու եւ կ'երգես ձո սէրը,
որ վերջի՜ն մեր սէրն է աշխարհում գուցէ:

Որք, մեծակ կը գաս դու եւ ցորից ֆո երգը
կը վառէ սրտում մեր կարօտաճիճ ու սեր.
աճարեւ սրտում մեր կը վառէ ֆո երգը
երազներ անմար ու ցնորքներ լուսե:

Եւ ցորից կը զգաճիճ, որ մեր սրտից դու մո՞ս ես,
մորմոքող հրի՛ պես մեր հիւանդ արեան,
որ լուսե երգից ֆո մեր հոգից կարօս է,
օ, հեռու քնկեր իմ, օ, վ.ահաճ Տերեան...

3

Դու — լուսե, անցար ու չկաս:
Դու — թեթեւ, անմարմին, անծիր:
Դու ուրի՞ծ խնդութեան երազ:

Դու սրտում մեր բնդմիջս վառեցիր
կրակներ անմար ու թագուն:
Փռեցիր լուսաւոր գաղձեր:

Եւ երբե՛ք, երբեք չի աղօտի
ֆո կանքեղը խաւար մեր հոգում, —
ֆո կանքեզը — հեռո՞ւ կարօտի:

1920. 16. V.

ՄԱՀՈՒԱՆ ՏԵՍԻԼ

Սիրելի Դաւիթ Անանունին

Որպես լճուած թռչնաբակի ձգուած մի լար՝
դողում է սիրտս կարօտով մի անարկու.
կարօտներիս գազաթն է այն՝ վերջի՜ն հնար.—
մի պիրկ պարան ու երկնուղեր, փայտեր երկու:
Որպես բախտիս մութ համաձրանքը, կամ որպես
մի հին խոստում, որ անկատար, դրժած թողի—
կախաղանի փայտերն անա հաղաթի մէջ
կանգնել են, սեպ, ու սպասում են կախուողի:
Կանգնել են, լուռ, իրար կքած, փայտեր երկու,
ու մէջտեղում դողում է, մեղկ ու երերուն,
մի գորշ պարան, ինչպես տխուր այս օրերում
աչքոց մորմոքը ցաւերան իմ ո՜րբ հոգու:
Իջել է շուրջը մի անհուր իրիկնաժամ,
ու լռութիւն մի անստուեր, անլուր, անդող,
ինչպես մորմոքը օրերի, ինչպես դաժան
մահուան թախիծը՝ իմ անլուր սիրտը բանտող:
Ու խաղուքներդ, գորշ կքած, ո՜վ այլ մարդիկ,
որ հաւաքուել են փայտերի շուրջը հիմա—
մահուան բեկուն այդ հնարին այդքան մօտիկ—
ի՞նչ են ուզում՝ այդքան տխուր ու ակամայ:

Եւ արդեօք ո՞վ է երազել այդհան դաժան—
ու լուսաւոր առաւօտները իմ հոգու
ո՞վ դարձրեց — մի անկրակ իրիկնաժամ,
ու գոռ պարան, ու երկնուղեծ փայտե՛ր երկու:
Գուցէ այդ ե՛ս եմ, որ ձրտով իմ լուսնահար
ո՛չ մի կրակ ներաւներից ձեզ չբերի,
ու ցանկացայ, որ չօրհներգէ ո՛չ մի ճնար
լուսապսակ, պայծառ գալիքը Նաիրի...

Երբամ հիմա: Ու կարոտով անմխիթար,
իմ երգիչի երազներով ու հրերով,
անհրապոյր իմ օրերի երգով մթար
ու ցաիրեաց իմ երազի վերջին սիրով—
երբամ մարող ու մարմրող իրիկուայ մէջ,
որպես ուրու հալածական, որպես տեսիլ—
տա՞մ պարանոցս կարօտին այն երկնուղեծ
ու օրորուեմ՝ եղերական ու անբասիր...
Թող ո՛չ մի զոհ չպահանջուի ինձնից բացի,
ուրիշ ոսխեր կախաղանին թող մօս չգան:
Եւ թող տեսնեն իմ աչխերի մէջ կախուածի
իմ ո՛րբ երկիր, լուսապսակ էո ապագան:
Թող դուրս ընկնած իմ աչխերի մէջ կախուածի
ցոխա տեսնեն պայծառ օրերդ ապագայ,—
թող ո՛չ մի զոհ չպահանջուի ինձնից բացի,
ո՛չ մի սուրբ կախաղանին թող մօս չգայ...

1920. 6. X.

ՏՐԻՈԼԷՏ Լ. Բ.-ԻՆ

Ինչքան աշխարհը սիրես ու աշխարհով հիացաս—
այնքան աշխարհը անուշ ու ցանկալի կը լինի.
թէ ուզում ես չսուզուել ճահճուտներր անիուճի—
պիտի աշխարհը սիրես ու աշխարհով հիացաս:
Այնպէ՛ս արա, որ կեանքում ո՛չ մի գանգաս չիմանաս,
խմի՛ր թախիծր հոգու, որպէս հրճուանք ու գինի.—
որքան աշխարհը սիրես ու աշխարհով հիանաս—
այնքան աշխարհը անուշ ու ցանկալի կը լինի...

1921

ՆՐԲԱԿԻՐԹ Է.-ԻՆ

Ձեր հոգին — ցուրբ, օսլայած,
ձեր սիրտը — գուրգուրած շնիկ:
Իսկ ես սովորել եմ, գիտե՞ք,
որ հոգիս փողոցում ճնի:

Ձեր հոգին ցուրբ, օսլայած:
Ներեցեք... բայց կարո՞ղ է ցա
յեսեւի ոտքերին ցստած—
փինչեւ յոյս կարօտից ոռնալ:

Կարո՞ղ է արդեօք փողոցում,
ուր անգամ արգելւում է ծեծուել—
առաջին հանդիպած շան հետ
միանալ, այսինքն — կծուել:

Ախ, օրիո՛րդ, ներեցե՛ք: Դէ, ես
որեան էլ բանասեղծ յինեմ,
բայց ձեզ պես բարեկիրթ, ձեզ պես...
իմ յոյզերը զսպել չգիտեմ:

Ես առանց խաղալու, գիտե՞ք,
վախը, երբ գարունը բացուի,
կը թողնեմ, որ հոգիս ծոչիկ
ամեհիի հետ միանայ – կցուի:

Թեկուզ ես գիտեմ, որ ցաւ
երբ յետոյ յագեցած երգէ—
իմ հոգու լցդերէի վրայ
կը բացուեն կապո՜յտ վերքեր:

Բայց եւի, մայթերի վրայ
փնտռելով փշրանքները հացի—
կը վատնեմ իմ հոգիս ծոայլ,
կը տամ ծնեռին փողոցի:

Պոռնիկները իմ հոյր կը դառնան,
ծները – եղբայրներ անգին,—
բայց ափսո՜ս որ osար կը մնայ
ձեր մաքուր; օսլայած հոգին...

1921

ԿԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ԵՍ

Ինձ ասացին, որ ես իզուր եմ ապրում,
որ ես իզուր վիրաւորում եմ իմ խեղճ
ու խղճուկ գոյութեամբ
վեհութիւնը աշխարհի...

Ինձ ասացին, որ ես իզուր եմ ապրում...
Եւ ո՞վ ասաց. մի կատու,
որ գարնան դեմ, սիրակարոտ մլաւելով,
երազում էր տա՛ք գզուանիններուն խնդում։

Նա նստել էր կտուրին,
ու իր մրսած կողերն ոտքին խնդով,
մլաւելով աղիողորմ,
կանչում էր որձ կատուներին, որ, աւա՛ղ,
չկային...

Գարնան առեւտրախնճայինն
գցել էր պաղ մի նառապայթ կողերին,
ու առեւի տակ գարնան
տանջում էր կարօտը՝ որբ կողերի...

Ու կաթուային աչքերում,
արդեն մարող ճառագայթի նման խեղդ,
հուրհուրում էր վերջին տագնապը սիրոյ,
որ դեռ մխում էր ցամաքած սրտի մէջ:

Երկա՞ր, երկա՞ր մլաւում էր յուսահատ:
Եւ որպես սեւ դառնութիւն—
այդ ապերասբ մլաւիւնը իրիկուայ
հոսում էր վար կտուրից,
որպես թախիծ, որպես թոյն...

Նայում էի ես երկա՞ր:
Լո՞ւռ էր այնպես: Ու միայն ջուրն էր կաթում,—
երբ դիմացի կտուրից,
գաղտագողի մօտենալով—
ցատկեց յանկարծ մի կատու:

Դեռ չէր տեսել: Բայց յանկարծ
նա նկատեց — ու մլաւիւնը խղճուկ
փոխուեց մի սուր, արնապրփուր խնդութեան:
Եւ իրարու մօտեցած,
արդեն մարող յոյսերի տակ արեւի,
նրանք իրար միացան,
չիմանալով, որ նայում է մի չար աչք—
ներքեւից...

Ցեցոյ... Ների՛ր ինձ, երկի՛նք,
որ հալիլոցը գարնան
ու տեսարանը հեքիաթոս այդ սիրոյ
մեջս շարժեց չար մի կիրք...
Եւ ես, յանկարծ,
ի՛նքս էլ դեռ լաւ չհասկացած, թէ ինչու,
վերցրեցի մի բուռ ձիւն
ու խփեցի կատուներին սիրարժարժ...

Եւ ա՛յդ պահուն միայն ես
նկատեցի, որ երբ
ես պատահմամբ այդ չար խաղը չանեի—
սիրով տարուած կատուներս կտուրից
պիտի գեցին ընկնէին...

Սակայն իմ թաց ձիւնագնդից արբնացած,
սուր գայրացած, որ չթողին որ խաղան—
նրանք ահեղ մլաւեցին դէպի ցած—
ու փախան...
. . . . . .

Ո՜վ երկինք,
ների՛ր, որ ես ոչնչի չե՜մ պէտք եկել,
որ կեանքս ողջ երգ է եղել ու խաղ...
Բայց մի անգամ, միայն մի,—
երբ գարուն էր, հալիլոց—
ես փրկել եմ — թեկուզ կամքիս հակառակ—
երկու կատուի... կտուրից վայր ընկնելուց.՜.՜.՜

1922

Ա Մ Ա Ռ

Արդեն ամառ է ծով, ջերմին,
արդեն հասել է բերքը բոլոր,
ծաղկել է վառ պարտեզը իմ.—
ինչո՞ւ եմ ես ացօգ ու որբ:

Տուել է ինձ արեւն ամռան
ինչ որ միայն կարող եր տալ.
սերմերն հասան ու չկորան.—
ինչո՞ւ ես չե՞մ կարող խնդալ...

Ամառը ինձ բերք է բերել,
տուցս լցուի պիտի բերքով.—
բայց սիրտս մութ ու զուրկ է դեռ
եւ չի՜ լցուում ամռան երգով...

Ո՞վ գիտէ, սի՛րտ, ուղիղ էո մութ
ու խորհուրդներդ էո խաւար.
— սի՛րտ իմ, աննաս կեանքի խորհուրդ,
սի՛րտ իմ խաւար...

1920

ԿԱՐՄԻՐ ՍՈՆԷՏ

Որպես դաշոյն՝ օրերի հնամեծի պատեանից
ելնում է, կարծր ու բոսոր, ու վառւում է ապագան.
եւ չի մեծի նա ինի փոշոս պատեանը նորից,
ու չի թպչուի օրերում, որ վառուեցին ու չկան

Ի՞նչ է ուզում էլ տաղտուկ յիմարութիւնը ձեր խեղճ
եւ ձեր մեռնող աշխարհի տխրութիւնը յուսահատ.
այն, որ օրերն ապրեցին եւ բանաստեղծը երգեց—
չի՛ խորտակուի տպնապից ու սարսափից ձեր վհատ:

Խմասուն է օրերի վայրագ նահանջը հիմա,
ինչպես փոշոս պատեանի բիրտ հեռացումը սրից—
երբ ոսոխի հանդիպած՝ պիտի կռուես ակամայ:—

Եւ ես, պոետ խմասուն, ահա երգում եմ նորից.
նահանջում են օրերն ես, հեռանում են ու չկան—
ու թռչում է երգս՝ ինչ՝ դեպի վառուող Ապագան...

1921

ԱՍՏՂԻԿ

Քնար չկայ ձեռքիս եւ ոչ սրինգ ածուծ,
որ ես երգեմ, Աստղի՛կ, կին դու՝ յաւերժ բեղուն,
ցնորք դարձած դու կին, արդեն մեռած վաղուց,
քարի՞ կոտրած բեկոր՝ անգարձ կորած հոլում:

Աստղի՛կ, ինեռու տեսիլ, ինչպես դարերն ինեռու,
ո՞վ թարմութիւն գարնան, ածուծ կարկաչ առուի,—
ինչո՞ւ ստուեր դարձար, ինչո՞ւ դարձար ուրուս,
եւ ե՞րբ պիտի ցորից հմայքը ես վառուի:

Վաղո՞ւց ածցել ես դու, Աստղի՛կ, կեանքից մեր մութ,
թողել ես կեանքը այս ինաւանդ հոգդ մեղկ,
թողել ես, որ երգեն ցրտաց երգեր յուսոնգ,
յուսոնց երգեր երգեն տխուր ձայնով բեկբեկ:

Նրանք սրինգ ունեն, ցրտանք ունեն ինար,
գեղգեղ երգում են մութ, տարտամ սերերն իրենց,
սիրում են ես հոգ մարմինը պայ մարմար՝
սիրով անկիրք ու մեղկ, արտով մեռած ու խեղճ:

Ուշաց անյոյս, տխուր օրերն անյոյս, բեկուն,
աշնան համին, առուն, աշնան հովերը թաց
խօսում են մեղմ ձայնով նրանց հիւանդ հոգուն
սիրոյ մասին՝ վաղո՞ւց արդեն ցնորք դարձած:

Նրանք սրինգ ունեն, նրանք ունեն քնար,
գիտեն երգել աշնան հովի նման անուշ,
երգում են ես հոգ մարմինը պաղ մարմար,
երգում են սեր, աշուն, աշնան ցնորք ու յուշ:

Եւ չեն սիրում նրանք էլ ես մարմինը տաք,
սիրոյ խնդում չկայ նրանց համար հիմա,—
սիրում են սերն իրենց, ցնորքը չինջ, յուսակ,
որ տա՛յ պիտի իրենց անուն գգուանք ու մահ:

Ու ստուերներ դարձած՝ նրանք շրջում են լուռ
պուրակներում խոնաւ, բուլվարներում անմարդ:
Եւ չի վառուի նրանց կեանքում էլ ո՛չ մի հուր
եւ չի լցուի խանդով նրանց հոգին վհատ:

Աստիկ. ինչո՞ւ անցար, ինչո՞ւ նրանց երգից,
երգած ես քոյր, նուաղ, հիւանդ հոգ մասին—
քողիր դու կեանքը մեր եւ որք քողիր դու ինձ,
եւ կեանքը սուտ դարձաւ՝ գիշեր, ցնորք, լուսին:

Ես ի՞նչ աճեմ հիմա. ճռաճիւ երգեր ուճեճ,
ճռաճիւ գիտեճ ապրել՝ յուսճի յոյսիճ գերի,—
բայց չե՞մ կարող հո ես սիրել օրերը բեճ—
ուզում եմ ես գգուաճիւ, գալարիւ ու խաղ հրի:

Ուզում եմ ես հիմա հո ճեկ մազերը բոց,
կարմիր շրթերը հո, կոճիճերը հո հասուճ,
ուզում եմ կիրճը հո՝ կրակ դարձած կնոջ,
տարփաճիլը հո բեղուճ, որ չի՛ երբեք կասում:

Ուզում եմ հո բռոճզե աճյաղը բեւերը ձիգ,
ու կուրծքը հո հրե, արգաճդը հո գարուճ,
ուզում եմ ջերմ կրիդ եռերը շոգ, հրձիգ,
աճհո՞ւճ աստղեր սփռող երկրի աճծայր հեռուճ:

ԵՒճցնում եմ ես ահա փողոցներով խարե,
հսկայ շենքերը ինձ ճայում են խիստ, խոժոռ,—
ապրել եմ ես այսեղ հարի՞ւր, հազա՞ր տարի,
բայց ճո՞ր եմ ես ճորից՝ խաղաճներում այս ճոր:

ԵՒճցնում եմ ես ահա խաղաճներով երկաթ՝
շուրջս մարդիկ ամլերջ, կրճի գալարիւ ու վեճ,—
վառել եմ ես ճզոր երգեր կեաճքում վհատ
ու, խե՞ճք, փորել կ'ուզեմ վերջին սլատրաճքն իրենց:

Ինձ համար չկայ ձեռքիս եւ ոչ սրինգ աննուշ—
չե՛մ կարող ուզում հրաշք երգերը մեղմ ու քաղցր,—
ծիծա՞ղ եմ ես կեանքի՝ համակ կորով ու ոյժ,
ծերո՞ւկ եմ ես աճել՝ մի ցո՞ւր կեանքի երգիչ:

Ու ծուրջս իմ արդեն օրերս՝ կուռ, պողպատ՝
աճել ձայնում են՝ նոր երգով աւոյգ ու ժիր,
կանչում են ինձ հրաշք, որ ես խօսքով երկաթ
վառե՞մ հրաշք հոգում երգեր կարմիր ու ճիր:

Եւ իմ հոգին հիմա հրաշք երգից այդ կուռ
յղացել է բարբ ճիրով, կայտառ սիրով մի ցոյր:
ես սե՞ր կ'ուզեմ հիմա, կնաջ զգուանքե՞ր ու հոյր,
բեղո՞ւն մարմին կ'ուզեմ՝ կրքո՞ւն ցնծագ հզօ՞ր:

Արի՞, Աստղի՛կ, հիմա, որպես գալիք կեանքի
պճնուն, բեղուն խաւար՝ աստղի՞ համար իմ վառ.
եղի՛ր, որպես պղինձ, երկաթ եղիր հանքի,
ծինող կամքիս համար եղի՛ր կարմիր մարմար:

Արի՞, որպես անմար կրակով յղուած գարուն,
ու կո՞յս եղիր՝ գարնան դաշտի ցնծագ խոպան,
գարնան խանդի ցնծագ եղիր բարբոք, եռուն,
որ ես, կայտառ, վառեմ ես ակռ իմ ցո՞ւր ճամբան:

Արի՜ հիմա, ծաղկուն, խնդուն, որպես ամառ,
երգո՜վ, պարո՜վ արի ու ցանկութեամբ որոշ,
եղի՛ր, Աստղիկ, տոկուն, կամքի պես իմ յամառ,
ո՜վ կին, եղի՛ր հիմա, որպես կարմիր դրօշ:

Ինչպես օրերը այս՝ գալիքներով բեղուն—
այնպես արգանդը fո անո՜ւն լինի բող sop.
Աստղի՜կ, գալի՜ք դարձիր, դարձիր տարերք զեղուն,
այլեւս մա՜յր դարձիր՝ գալիք կեանքի խորհուրդ:

Գալի՜ս ե կեանքը նոր — ու իմ ձայնից ծեփոր
fո դալկադեմ հրոջ ցնորքը ծո՜ւխ դարձաւ.
Նրա հմայքը մեղկ ցնդե՜ց երգից իմ նոր,—
սրինգ չկայ արդեն, դողդոջ ճնար ու ցաւ:

Կանգնե՜լ եմ ես, ինքս, գալիք կեանքի առաջ,
ու կիրքը իմ անսանձ յորդե պիտի հիմա.
Աստղի՛կ, իջի՜ր նորից, որ իմ հետ վառած,
արիւնդ արե՜ւ ծնի գալիք կեանքի համար:

Արի՛, Աստղի՛կ, ու ա՜ռ պայծառ յաւերժը իմ
եւ միասդ բող ծաղկի, ինչպես իմ կամքը ձիգ,—
ջարդե՜լ եմ ես արդեն նրանց ճնարը հին—
ծեփոր-մարմինն ե իմ կպչում խանդով հրձիգ...

1920

ՎԵՐՋ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԷՊԻՔԱԿԱՆ ՊՈԷՄՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

ԷՊԻԿԱԿԱՆ ՊՈԷՄՆԵՐ

ՄՈՍԿՈՒԱ 1922

ՏՊՈՒԱԾ Է

ԽՈՐՀՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԿՈՒԼՏՈՒՐԱՑԻ ՏԱՆ ՏՊԱՐԱԳՈՒՄ

ՄՈՍԿՈՒԱ. 1922 ՓԵՏՐՈՒԱՐԻՆ

ԿԱՊՈՒՏԱՋԵԱՅ ՀԱՅՐԵՆԻՔ

(Հատուածներ անավարտ պոէմից)

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԿԱՊՈՒՏԱՋԵԱՅ ՀԱՅՐԵՆԻՔ

I

Ես սիրում եմ ցսեել ամեն իրիկուն,
պատուհանիս առաջ երկա՜ր ու երկա՜ր.
ցայել պահուող ցամբաներին ացացուն
ու երազել խնդութիւններ արեւառ:
Նայել կանաչ հովիտներին՝ արեւի
իրիկնային երանգներով շլարշած,
խմել լուսե երանգները վերեւի՝
երջանկացած ու հարբած:
Ականջ դնել ցորեններէ շշուկին
եւ սպասել, որ շշուկները բուրեն
ու երգ դառնայ երկնատոց իմ հոգին
ու երազներ մեղմօրեն օրօրեն:
Ես սիրում եմ ցսեել մենակ ու անձայն,
աչքերս յառել հուրհրատող երազին,
լսել ձայներ, որ զնգացին իւ անցան
երանգների պես իրիկուայ երազի:
Ապրել՝ հարբած երազներով իրիկուայ,
սուզուել անտես աղբիւրների կարկաչում,—
հարբե՞լ, հարբե՞լ ու մոռանալ առօրեան
եւ հաւատալ, որ հեռուից բախտը կանչում..,

II

Կայ հոգեկան անհուսության մի վայրկեան,
երբ ամեն ինչ սուրբ է թուում ու անբիծ,
երբ երազ է դառնում տաղտուկ առօրեան
ու դառնում են ուղեւորներն ճամբից:
Դուռս բաց է, դուռս բաց է ձեզ համար
օ, հեռաւոր բարեկամներ ու հոյրեր.
սիրտս վառել է կրակներն անմար՝
ինձ երազներն ու կաոսներն հրեղ:
Սիրտս վաղո՞ւց ձեր գալուն էր սպասում,
հաւատում էր կաոսակէզ, որ կը գաք
ու կը լինի հանդիպումի երազում
խաղցր ժպիտ ու խնդութիւն ու կրակ:
Ախ, ես գիտեմ, որ դուք կը գաք խնդագին,
լո՞յս կը վառուէք մառախուղում ու մուժում—
ու մի անմար կաոսանով կրկնակի
ճամբայ կ'ընկնենք իրիկնային մշուշում...

III

Օ, հեռաւոր, կապուտաչեա՞յ սիրուհիս.—
հովիտի մէջ փրփրուն գետն էր հոսում
եւ անդադրում պատմում էր ինձ, որ ունիս
դու գգուանքներ ու զրկանքներ սիրասուն:
Այնտեղ, կանաչ ու ծաղկաւետ գետափին
տնակս այնքա՞ն հոգերով էր ու անդորր.
լսում էի ալիքների երգը հին,
որ ինձ թւում էր մայրական մի օրոր:

Ալիքների հազարածայն երգի մեջ
ես գիտեի գուշակել ֆո ապագան,
լսում էի կարօտերգերդ անվերջ,
լսում էի խոստումներդ՝ ես կը գամ:
Ուռին, բարդին ու ջրհնին գեսափնեայ
լսում էին ինձ հետ երգերը ջրի
ու սիրտ ծոյոյ ծառուկներով դիւթական
թախծում էին մեծութեան մեջ օրերիս:
Ախ, իմ գեսակը ու իմ այգին հայրական,
գետեզերքին՝ իմ երազը տխրամած.
ե՞րբ էր, ե՞րբ էր, որ ասացիր՝ ես կը գամ—
ու խոստումիդ սիրտս խնդաց ակամայ...

IV

Օ, հեռաւոր, կանգուն՞ չեա՞յ սիրուհիս...
Հովիտի մեջ փրփրուն գետն էր նսում
ու փսփսում՝ էր երազներ անհունի
գորշ օրերի միանման երազում:
Նշում էր մայրս տնակից հնամեայ,
ծեր հայրերով գնում էր ափը ջրի
ու ջրհնին մեխմ օրորում էր նրա
թախիծը հին, անհրապո՞յր օրերի...
Ես չգիտեմ, ես չգիտեմ հիմա էլ՝
այջի՞կ ես դու, թէ այն տնակն ու այգին,
ուր հոսեցին իմ երազներն ջահել
ու վայրկեաններն անվախ պատրանքի:
Բայց ես գիտեմ, որ սիրեցի հեզ մի օր;
երբ հասկացայ, որ ուխտարհում չես չքաս,—
բայց երազի ոդիններով հեռաւոր

դու մի գիշեր պիտի իջնե՞ս, պիտի գաս:
Հաւատացի, որ կը տեսնեմ ինձ մի օր
ու կը լինես դու իմ աւրիծ հարսնացուն՝
արեւների նման պայծառ, լուսաւոր,
ճաճանչների նման վահագն Աստղծու:
Աներեւո՛յթ, կապուտաչեա՛յ սիրուհիս,—
գիշերների տխրութեան մէջ լուսընկայ,
սիրտս տալով ծուկներին աւհուն
ես մեռ-մեռնակ լոյս ճամբաներդ բնկայ...

V

Որոնումիս ճանապարհին անծանօթ
չյոգնեցի, չյոգնեցի ես երբեք:
Այրում էր իմ սիրտը հեռու մի կարոս,
կանչում էր լոյս հեռուներդ անվերջ:
Գնո՞ւմ եի գիշերային իմ ճամբով
ես միայնակ ու տրտում:
Միայն կարոսս էր ինձ ներշնչում հոգիով
երազաւիճներ անպատում:
Ու լուսընկայ ուղիներում անանուն—
կարոսակից, սիրակից,
անքառ սիրով ու կարոսով մի անհուն—
ինձ սպասում եի ես:

VI

Ու լուռ էր այնպես: Հեռու-հեռուում
մի հազարամեայ վանք էր երեւում:
Փայլում էր ոսկին հնամեայ խաչի—

եւ ես կանգ առայ նրա առաջին:
Ճամբան՝ ոլորուն՝ դեռ իջնում էր վար,
դեպի դաշտերի գիրկը, ուր չկար
մարդկային աղմուկ ու երգ ու շառաչ,—
երազ էր կարծես՝ անապատ դառած:
Ու լուռ էր այնպես: Վայրկեանն էր հոսում.
Ու հին լուռթեան յաբիրինթոսում
սպասում էին դաշտ, հովիտ ու ձար
կարծես թէ մեկը այցի պիտի գար:

VII

... Եւ մի օր ես այն հին վանքը մտայ:
Շուրջը կաղնիներ յաղթ բազմել էին:
Երգում էր անուշ զանգը ճնճղեայ
ու թախծում էին գորշ քարերը հին:
Եւ այն հին վանքի կամարների տակ,
ուր մի անիմաց, անիմանալի
գոյութեան նախրում կայ լուրջ ու պարփակ՝
ես ծանոթ չոհեցի աղօթքներով լի:
Թեկուզ չվառուեց տաճական բոյրով
ջահը վերեւի, ջահը հազարաչ.
թեկուզ չբացուեց վարագոյրը մով
եւ ո՛չ մի ծնծղայ անուշ չզնգաց.
թեկուզ ոչ մի երգ չլսուեց վանքի
այն հազարամեայ կամարների մէջ—
բայց հոգիս զգաց մի հին բերկրանքի,
բախտաւորութեան ու սիրոյ վայրէջք:
Եւ սիրտս լցուեց անհուն մի խնդում:
Հասկացայ, որ կայ, կը գայ, կը լինի...
Ու ժպտում էր ինձ երկիրը տրտում,
երկիրը ցաւի, տուգի, արիւնի...

VIII

Վերադարձայ տուն...
Վայրկեանին, իմաստուն, նկել է աչս:
Գնացել են մեր ննջասրճերն արդեն
ու հսկում եմ ես հին ջեմքի վրայ:

Գնացել են մեր ննջասրճերն արդեն:
Ես մենակ նստած ապառում եմ լուռ:
— Ձերմա՞կ սիրուհիս, ես գիտեմ, գիտեմ,
որ նրանք նիման ննջում են տխուր...

Ցաւում է հոգիս ու խոսում է խոր.
վառւում է ես հին կարոսն իմ հոգում:
Բայց ինչո՞ւ է սիրս այսպես բախտաւոր
եւ ինչո՞ւ է ցաւն այսպես ամոխում...

Հնձում են նիման ննջասրճերն այնտեղ.
— ճերմակ սիրուհի՛, կապուտաչեայ հո՛յր.
Արեւը նիման այրում է այնտեղ
խե՞ղճ ննջասրճերի կրծքերը մաճուր...

Իսկ ես անսփոփ ապառում եմ դեռ
վերադարձների բերքառատ ժամին:—
Օ, հեռու իմ հոյր, երկիր իմ անհո—
այնտեղ, երեւի, հրճում է համին...

IX

Օ, իմ հեռո՜ւ, կապուտաչեա՛յ սիրուհի,
երկիր իմ որբ, արցախամ ու աւերակ...
Օրերում այս տառապանքի ու մահի
վառել է իմ սիրտը հեռու մի կրակ:
Օրը կը գայ: Ու հեռաւոր դաշտերից
մեր հնձուորները, յոգնաբեկ, կը գան տուն:
Կը բոլորեն սեղանի շուրջը ցորից
ու կը լինի հազա՜ր ծիծաղ ու խնդում:
Ու խնճոյքում, անհրեւոյթ, դու կը գաս,
սիրտս կը զգայ ֆո բովչուբիւնը մօտիկ.
եւ չես լինի դու արցախաւոր մի երազ,
ու կը խնդան ֆո գաւակներն անօթի...
Կը տեսնեն ճեզ յանկարծ լուսե՜ ու պայծառ
ու կը լինես դու հարազատ ու անուշ:
Մութը կ'անցնի ու մառախուղը անծայր
յուշ կը դառնայ, հնամենի մի զրոյց...

X

Կապուտաչեա՛յ սիրուհիս, ամուսնացումիդ պիտի մենք
արեւի տակ՝ հայրենի հովիտներում կանաչուն:
Ու հնամեայ ափսարհում մենք բախտաւոր կը լինենք,
կապուտաչեա՜յ սիրուհիս, դրախտայի՛ն իմ բոչուն:
Հովիտներում հայրենի, հովիտներում արբազան
կը լինի մի հարսանիք հազարնուագ ու խնդուն,
երգ ու ծիծաղ կը լինի ու աղջկներք կը գան
ու կը պարեն հնամեայ պարերք խենթ ու ճկուն:
Ու գինիներ կը լինեն արնափրփուր ու կարմիր,
որպես երազն արիւնիս, որպես հոգուս զոհը հիր:
Ու ծաղիկներ կը լինեն բազմաբոյր ու բազմերանգ՝
հարսանիքիս խնճոյքին փսփսալու են ձրանք
առասպելներ ապրուած ու զրոյցներ հնամեայ
ձրանց մասին, որ չկան ու մոռացուել են հիմա:
Եկէ՛ք, եկէ՛ք, հարսանիքիս օրն այնքան երգ կը լինի,
այնքան խնդում ու ծիծաղ, այնքան ցնծանք արիւնի,—
եկէ՛ք, եկէ՛ք, արբազան հովիտներում հայրենի
վաղը մի սուրբ խրախճանք, մի հարսանիք կը լինի:

Կարս, 1915 II

ԴԱՆԹԷԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ

(Յիշողութիւններ պատերազմի դաշտից)

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԻՀՐԱՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՍՏԵՓԱՆ ՂԱԶԱՐԵԱՆ

ԵՒ

ԱՇՈՏ ՄԻԼԻՈՆՋԵԱՆ

ՆԱՀԱՏԱԿ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ,

ՈՐ ԸՆԿԱՆ ՍՈՒԼԴՈՒՋԻ ԴԱՇՏՈՒՄ

1915 ԹՈՒԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 25-ԻՆ:

ԴԱՆԹԷԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ

I

Մենք ճամբայ բնկանք առաւօս ծկգին՝
կապոյտ երկնքի խորութեամբ արբած:
Թարմ, բերնէ եր մեր ճամբորդի հոգին՝
ուրախ էինք մենք եւ մեր սիրտը — բաց:
Կանչում եր, կանչում ճամբան անմեկին՝
ոյրապոյտոյ մեր առաջ փռուած:

Եւ վերջին անգամ նայեցինք մենք յետ,
ուր ոչինչ չկար մեզ համար դիւրիչ:
անցեալը կորել, ցնդել եր անհետ,
որպես երազում առձակած մի նիչ:
Ո՛չ մի տխրութիւն չեր նախրում մեզ հետ՝
կախարդել եր մեզ առաւօտը ջինջ:

Պար էինք խաղում ու երգեր ասում,
վեհերի փայլով հրճուում էինք մենք:
Կարծես մանկական կապոյտ երազում՝
ամեն ինչ այնպես ժպտում եր անհենգ:
Ո՛չ հրաժեշտի անուրոչ յուզում,
ոչ էլ մեռնելու կասկածանք կար ներսդ:

Անսահման դաշտն եր փռուած մեր առաջ:
Ոսկի հասկերով ողջունում եր մեզ
աշխարհի հեռուն՝ բա՜ց, յայնատարա՜ծ,
արեւի ընչով լուացուած կարծես:
Իսկ ճամբան, անծայր իրանը փռած,
թաւալում եր մի հսկայ օձի պես:

Թեթեւ խայտերով ու արտով թեթեւ
խայտում էինք մենք կայտառ ու ջահել:
Մեր հոգին ուներ բռիչքներ ու թեւ՝
ո՞վ էր մեզ արդեօք այդպես հմայել...
Նայում էին մեզ լեռները պարթեւ՝
կոչո՛ւմն է նրանց — յաւիտեան նայել:

Ուր իրիկուն էր, երբ մի գիւղ մտանք:
Վրաններն արդեն զարկըւած էին,
երբ նոյնպես ուրախ, անհոգ, անվտանգ
բոլորեց խսկոյն մեր շուրջպարը հին.
զնգացին նորից հազա՛ր երգ ու վանկ
եւ վերջին անգամ պղպջաց գինին:

Լուսնեակը արդեն բարձրացել էր վեր
եւ չորս դին փռել արծաթ մշուշ,
երբ յոգնած մտանք վրաններն մեր,
խոտերի վրայ պառկեցինք անուժ.
— է՞, բարի գիշեր, անգին ընկերներ,—
ու խոր քուն մտանք, հնեցինք անուշ:

II

Եւ ուրախ էինք այսպես — երէք օր:
Բայց յետոյ յանկարծ բացուեց մեր առաջ
մի աւեր ուղի, ուր անհուն ու խոր
մի տառապանքի խորշակ կար վառած:
Եւ կամաց-կամաց դարձաւ վիրաւոր
մեր հոգին ջահել ու բազմաերազ:

Երկի՛ցից էլ կարծես փոխուել էր արդէն։
Աւձարեւցներ էին մեր գլխին տեղում։
Աւերուած ուղին փռուած էր մեր դէմ՝
իր ծայրը թաղած մէգ-մառախուղում։
Եւ երկնքի պես մեր հոգին էլ թեն
աւձարեւցների տակ մրսում էր, դողում։

Ձամբի մօս ընկած տեսանք մի դիակ։
Կանգնեցինք, մի պահ նայեցինք իրար։
Փտել էր արդէն աւձարեւցների տակ.
ի՞նչ ցեղից էր նա — այդ ո՞վ կ'իմանար։
Իր ապրած կեանքից ամէն յիշատակ
սրբել էր, տարել աւձարեւը վաղուց։

Երկա՞ր կանգնեցինք։ Մի զինուոր-ընկեր
դիակն հրելով, խնդաց խելագար։
Բայց չէ՞ որ նա՛ էլ կրել է զէնքեր,
եղել է մեզ պես կեանքի սիրահար։
Ես մտածեցի՝ գնում ենք մենք է՛լ
այսպիսի դիակ դառնալու համար։

Եւ անցայ առաջ։ Լեռներից անդին
երեւաց յանկարծ արեգակը նուր։
Եւ ես մոռացայ այն այլանդակ դին,
ընչեցի հողի բարմութիւնը խոր,
եւ նորի՛ց իմ բաց ու լցուած սրտին
աշխարհը թուաց այնքան բա՜րմ ու նո՜ր։

Արեւի ոսկի մատները իջան
ու գուրգուրեցին հեռուները քաց։
Ցաւիտեան վազող ու միշտ ժպտացի՝
խոտերի միջից առուակը խնդաց։
Եւ թեթե՜ւ նետած սլաքի նման
դեմից մի թռչուն անցաւ արագ։

Ախ, այդ դաշտերի հեռուն ոսկեզոյն,
այդ երկինքները կապո՜յտ պայծառ...
Ամեն ինչ կարծես ասում էր հոգուս,
որ այս աշխարհում, էնտեղ ու չար՝
պետք չէ՛, որ մարդը հեկեկայ անմուն—
աշխարհում մի օր ապրելու համար։

Եւ ես հարց տուի յանկարծ ինձ,
թէ ո՞ւր եմ գնում այսպես եռանդով։
Չէ՞ որ աշխարհում կայ խոր մի կսկիծ,
ամենքի համար կայ մի վիշտ անքով—
էլ ի՞նչ եմ ուզում վերցնել կեանքից
անաբեկիչի խելագար խանդով։

Ինչո՞ւ է երազն այս աշխարհաւեր
կախուել մեր գլխին այսպես կուրօրէն։
Ինչո՞ւ նն փոում այսքան ցաւ, աւեր,
հողմերը այս չար ե՞րբ պիտի լռեն։
Եւ ո՞վ է յարում այսպիսի դաւեր—
կեանքը դարձնում ցզովեայ գեհեն։

Եւ մի՞թէ մարդիկ այստեղ չեն նայել
երբեմ հեռուներն այս յա՜ւ աշխարհի,
ուր արեւը բի՜ւր հրաբէ է վառել,
ու մարդու հոգին խանդավառ, բարի՝
գգուի մի անմար հիացմով ջահել—
ամեն մի խոտի, ամեն մի ճարի...

Ախ, ո՛չ... Սառանա՛ն էրէջացել է այս
ոսկի դաշտերի էնէոութեանը խոր,
փռել է կարմիր խորշակ ու երաշտ,
վառել է ոսկի հասկերը բոլոր:—
Սրտի կսկիծով ես անցայ առաջ
ու շուրջս նորից նայեցի մոլոր:—

Եւ ահա — կրկին մի ճանի դիակ:
Եւ այստեղ ահա — վարսեր կանացի:
Իսկ այստեղ, արնոտ վերմակներէ տակ—
չորցած փշրանքներ արնաներկ հացի:
Ո՞վ է հեռացել այստեղից — մենակ,
ճարացած սրտով, լուռ, առանց լացի:

Իսկ այստեղ ահա մի ոսկրացած ձեռ:
Մարմինը չկայ: Ընկած է անձայն:
Հեռեւում գտանէ սրունքները մերկ,
իսկ մի էիչ հեռուն—ատամներ ցիրցան:
Իսկ այնտեղ, ժայռի կատարին այն լերկ,
մոռացել էին մի հին հրացան:

Սարսափած սրտով մենք առաջ անցանք։
Եւ մեր հայեացքից արիւն էր կաթում։
Լուսնոտի նման բուք ու ծուարած՝
այլեւս ոչինչ չէինք նկատում։
Մի անհուն կսկիծ ուսերիս առած՝
լուռ քայլում էինք արնաքոյր տօրում։

Իրիկնամուտին մենք մի գիւղ մտանք։
Անուանն էր միայն, իսկ ինքը չկար։
Այլանդակ գուղձեր՝ դեւի ապարանք։
Մնացինք՝ գիշերն հանգչելու համար։
Եւ գիշերն ամբողջ պատմեցին նրանք
զոյցներ արնոտ ու խայտանկար...

III

Եւ նորից՝ կանուխ, առաւօտ ծեգին,
մենք ճամբայ ընկանք անխոնջ ու յամառ։
Այս անգամ արդեն լեռնոտ էր ուղին,
բայց տրտունջ չկար մեր նոգու համար։
Նախատում էինք տրտնջացողին,
դեպի նա դառնում անողոք ու չար։

Ես չեմ մոռանայ մեր վերելքը սեզ
դեպի լեռներն գագաթներն անտես։
Այնքան գեղեցիկ չի՛ եղել երբեք
ծոկացող կամքի ծառացումը վեհ։
Թւում էր՝ բոլոր ու բեւեր ուղեղ,
Հոգիներ կային մեր կրծքում տաք։

Սառած ճամբեհով գնում էինք մենք՝
աշխարհի բեռը ուսերիս առած:
Իսկ ձիւնոտ ճամբան խաբող էր ու նենգ՝
սայթաքում էինք, բայց անցնում առաջ:
Վագրերի նման նկուն էինք մենք՝
աչքերս ձիւնոտ գազաթին յառած:

Վերեւը ծանր էր եւ ուղին — աւեր:
Եւ այնտեղ չկար ո՛չ մարդ, ո՛չ թռչուն:
Եւ շառա՜ն-շառա՜ն բարձրանում էր վեր
մեր բեռնաւորուած քնկերների չուն:
Իսկ ձիւնն անընդհատ յարում էր դաւեր՝
ոտքերիս կպած մեզ վա՛ր էր կանչում:

Կեսօր էր արդէն, երբ հսկայ լեռան
ձիւնապատ ու ցուրտ գագաթը հասանք:
Կանգնեցինք ճերմակ գագաթի վրայ,
ուր ո՛չ արարած, ո՛չ բոյս կար, ո՛չ կեանք:
Եւ կրծքերս մեր աջից թունդ առան՝
խորո՜ւնկ զգացինք, որ ապրում ենք, կա՜նք:

Հպարտ հայեացքով նայում էի ես
եւ խմում էի անսահման հեռուն:
Բարձրութեան վրայ խորո՜ւնկ է այնպես
մարդկային հոգին անհունը սիրում:
Անհո՛ւն հրճուանքով զգում էի ես,
որ յա՛ւ է, որ կամ այս ի՜ն աշխարհում:

Եւ խորասուզուած կոյս հեռուներէ
անսահման ու խոր անհունութեան մէջ—
ես հոգուս խորհուրդ լուռ ուխտում էի
լինել գթասիրտ, ու հպարտ, ու մեծ—
երբ հեռուից յանկարծ մի գինուոր-բնկեր
դողդոջուն ձայնով ինձ իր մօտ կանչեց:

Մօտեցայ... եւ ա՛հ կտրած սրտիցի:—
Ձիւներէ վրայ բնկած էր մի կին,
որ առանց խօսքի ու առանց յոգի
մեռնում էր՝ անմիտ մի ժպիտ դէմքին:
Չոր մատներէ մէջ փշրանքը հացի
սեղմել էր ամուր, որպես գանձ անգին:

Աչքերը թարթեց ցա վերջին անգամ
եւ գոհ ժպտալով՝ ժպտադէմ հանգաւ:
Սարսափելի էր այս աննին այնքան,
որ մեր շրթերից ո՛չ մի բառ չբնկաւ:
Բայց ցչում էր մեր սրտերում կարկամ
մի անհուն կսկիծ ու հսկայ մի ցաւ:

Մենք լուռ փորեցինք սառցի կուրծքը ծեր
եւ անայելու թաղեցինք նրան:
Դողդոջուն, սառած, չոր ձեռքերը մեր
նոյն ձիւնն անհամբոյր դարսեցին վրան:
Եւ ճամբայ բնկանք որպես մեռելներ,
թաղելով այնտեղ եւ մեր խիղճն ունայն:

Ու ֆայլում էինք, յոգնած ու մոայլ,
այդ ճամբաների հետքերով աւեր:
Եւ մեր թափօրի բնաբացին յամրաքայլ
չար, մահաբեր բարձրանում էր վեր:
Եւ մեր համր հոգին ծանր էր, որպես քար,
եւ չէինք կարող այլեւս ցաւել:

Մենք չէինք կարող խղճալ ոչ-ոքի.
կսկիծն էր ցամել մեր հոգիներում:
Զգում էինք, որ մի մութ բնազդի
ներքո, դարաւ մտած, պահուել է հետուն:
Զգում էինք, որ չար ոսոխ կայ մի,
որ վերէ է տալիս ու մահ է բերում:

Եւ սուրբ էր թւում ճամբան ահաւոր,
այդ ճամբան խելառ, էմահաճ բախտի:
Եւ ֆայլում էինք մենք հանդիսաւոր,
որպես մի անհուն, արբազան ուխտի:
Եւ վերջին անգամ երդւում էինք, որ
ոչ-ո՛ք իր ուխտը երբե՛ք չխախտի:

Եւ՝ ծանրաբեռնուած բարաւաններով՝
դառնում էր մեկը ճամբաներից ետ:
Ի՞նչ էր հաւաքել, ինչո՞ւ, ո՞ւմ գնով—
մութ էր մեզ համար, անհիմ, անհեթեթ:
Բաբեկամ էր նա, բայց մե՛ր արիւնով
բաբեկամ բնձած մի գիշեր մեզ հետ...

Եւ թշնամի էր մեզ ամեն մի բար
եւ ամեն մի իր յարում էր դաւեր:
Եւ անցնում էինք մենք հանդիսաբայլ
այն նամբաների հետքերով աւեր,
ուր ո՛չ մի հակ այլեւս չկար,
ուր մարդ չէ՛ր կարող խոնջալ ու ցաւել...

IV

Եւ ահա մի օր մենք մտանք մի գիւղ,
որ գտնւում էր ծովակի ափին:
Աւերուած էր նա: Այստեղ ու այնտեղ
մի բանի տներ դեռ մխում էին:
Իսկ ծովի կապոյտ ջրերը հնչեղ
դեռ երգում էին իրենց երգը հին:

Կարկաչուն, հնչուն մանուկների պես,
դեմքերին ժպիտ ու փրփուր փռած՝
ալիքներն, անհոգ ու ժպտուն այնպես,
վեհվեհում էին ու բռնում առաջ:
Անուշ նիչերով պատմում էին մեզ
հազա՛ր մանկական զրոյց ու երազ:

Իսկ աւեր դարձած գիւղակն ալեւոր,
ծեր, խորհրդաւոր, որպես մեռած հայր,
նընջում էր անվերջ իր սեւ նիրջը խոր,
մեռելասացի իր նիրջը մռայլ:
Եւ չէ՛ր հասկանում այդ ժիր, բախտաւոր,
չար ալիքների զրոյցները չար:

Իսկ այգիների շուրջպարը կանաչ
ձգուում էր անծայր ու անծայր հեռու:
Բնութիւնը, գիրգ սիմֆոները բաց,
ցոփ կնոջ նման հեքանոս, հլու—
պատրաստ էր ամէ՛ն անցորդի առաջ
իր աճանապհին բերքը փռելու:

Երկու բնկերով նեռս մտանք այգին
եւ տեսանք մեր դեմ — խաղողի մի ծով:
Անձնատուր եղած բախտի ճմայիին՝
սնուել էր անմահ արեւի բոցով:
Հովերը նրան օրօրել էին
կարկաչուն ծովի հեռո՞ւ զնգոցով:

Մոռացած մի պահ յոգնութիւնը մեր
վիրաւոր սրտի, փոշոտ ոտքերի—
մոռացած ամէն խանդում ու աւեր,
բնութեան անհատ ճմայիին գերի՝
չորացած, ծարաւ շրթունքները մեր
վայելում էին բերքը տունկերի—

երբ տունկերի մէջ... տեսանք մի դիակ:
Խեղդամահ արուած, բնկած էր մի ծեր:
Ընկած էր արնոտ խաղողների տակ՝
նրանց ստուերին բնկեր էր դարձել...
Ու չուել էին աչքերն այլանդակ,
իրենց մէջ պահած անանուն հարցեր:

Ընկերս դողաց ու ընկաւ գետին:
Ձո՞ւր, ըմբռացին ձրխերը նրա:
Տարտամ մօտեցայ այգու ջրհորին,
ամբողջ մարմնով կախուեցի վրայ՝
ուզեցի նայել յատակի ջրին—
ոչինչ չերեւաց: Պարան կար: Առայ:

Ու կախ տուեցի աճյսակ հորի մէջ:
Լսեցի հեռու ճղփոցք ջրի:
Ու վեր բաշեցի ձիգ պարանը ես:
Ծակատը մի տեղ զարնուեց բարի:
Էլի մի վայրկեան... Եւ յանկարծ ասես
դեմս ոգիներ եկան ժուրջպարի:—

Ձուռած աչքերով նայում էի ես
սահնում լցուած ջինջ, յատակ ջրին,
որի մէջ մարմնի կիսանեխ մասեր
հանդարտ, անտրմուկ օրօրում էին:
Ճիչը իմ արտում զսպելով հազիւ՝
ջրհորի մօտից հեռացայ լուին:

Հարբածի երեր, տարտամ քայլերով,
որպես հալածուած երկու ուրուներ—
մենք դուրս վազեցինք յուզուած ու խռով:
Եւ սարսափահար հայեացքները մեր
էլ չէին տեսնում ո՛չ այգի, ո՛չ ծով,
ուր սատանա՞ն էր իր բոյնը բամել...

V

Եւ ահա մի օր, տաժանիտս ճամբից
յոգնած ու դադրած, հանգիստի համար—
մենք մտանք Մեռած Քաղաքի շեմքից
Մեռած Քաղաքի փողոցները մառ:
Սարսափն էր սահում մեր մռայլ դեմքից
ու տենդում էր մեր սիրտը դիւահար:

Մեռած Քագաքում ո՛չ-մի մարդ չկար:
Եւ ամայացած շենքերը աւեր,
մութ, մահատեսիլ կոյրերի նման
փորած աչքերով նայում էին վեր:
Եւ չէին կարող նրանց հանդիման
գետի՛ն չնայել հայեացքները մեր:

Չգիտեմ ինչո՞ւ մենք մտանք մի տուն.
Անարեւ, անբիբ աչքերի նման
Նայում էին մեզ հասկածով անէուն
պատուհաններն խոռոչները լայն:
Շեմքի մօտ ընկած էր զարկած կատուն.
այն ո՞վ էր արդեօք սպանել նրան:

Ներս մտանք: Տեսանք՝ կոտրած թախտի մօտ
ընկած էր մի կին՝ արնաշաղ ու մերկ:
Խոռոչի նման բացուած անհոգ՝
էրէջում էր կարծես բեռանն արնաներկ:
Իսկ կոնքերն ու չոր ծծերն արիւնոտ
պատմում էին մեզ պղծումներ անելէ:

Ձնդեցին գանգիս ճիգերը յետին:
Ուղեղս կարծես արդեն իմը չէր:
Ու պար բռնեցին երկինք ու գետին,
եւ մեկն ինձ ասաց, որ պետ է փախչել...
Սակայն ո՞ւր գնալ, որ ես չգտնեն
այդ կոճերը մերկ, այդ ձձերը ծեր...

Եւ մենք այդ գիշեր մնացինք այդտեղ՝
Մեռած Բալաֆի աւեր շենքերում:
Ամբոխուել էին տեսիլներն աճեղ.
խելերի նման ցատկում ու պարում,
ու դառնում էին մեռելներ մի տեղ՝
սատանայական տեղդոս շուրջպարում:

Մեռած Բալաֆի շենքերից մեկում,
աչերս անլոյս խաւարին յառած,
պառկել էի ես — ահաւոր, անխուն:
Ու դեմս, կարմիր կրակներ վառած
ցատկոտում էին, բառաչում, տնկում
մեռելներ զուարթ ու բազմատարազ:

Դոյզգոյն շորեր, մարմիններ մեռած,
սրունքներ կապոյտ, սպիներ դեղին,
յետոյներ ուռած ու արնակալած—
խեղկատակ, արագ ցատկոտում էին,—
իմ սարսափահար աչերի առաջ,
անթափանց մթում գերեզմանային...

Երգ էին ասում, ողում էին խուլ,
հեծկլտում էին, ծիծաղում, շաչում,--
խիճի էր նման ողոցը տխուր,
լացի էր նման խիճը կարկաչուն—
բայց մանուկ նման նման սուն ու անուշ
կրծում էր հոգիս ամէն մի ինչիւն:

Ու դժում էր իմ ուղեղում բորբոք
երգը այդ օփոք, սատանայական,
դառնում էր հեռու կարօտի մորմոք,
եւ բում էր ինձ, որ արդէն չկամ,
այլ ինչ-որ հեռու երազում մի օդ
տարում է հոգիս անգօր ու անկամ:

Թռչում էի ես, որպէս մի ուրու,—
նրանց պէս ուրախ խաղում, ցատկոտում:
Եւ յանկարծ նրանց աղմուկը հեռու
երգ դարձաւ անփոյթ՝ մանկական խնդում:
Եւ ես հասկացայ, որ հեռո՞ւ-հեռուն
ծո՛վն է շառաչում գիշերի մթում:

Մանուկներ ուրախ, խրտուն ու վառ,
արեւի նման կարմրավառ լուսին,
մեռելներ զուարթ ու խայտանկար—
պար էին խաղում, երգում միասին,
թռչկոտում էին սերեւեր ու չար
եւ երգում էին Աստղայ մասին...

Խե՞նք երգում էին, որ Աստղիկը կայ,
ապրում է այնտեղ — ջրերի խորքում.
թող բուբը ոռնա՛յ աշխարհի վրայ
իրեն ինչ՝ նա կայ–անմահ, աննեռքում,–
եւ մի՛ օտ գեղեցիկ ու կոյս կը մնայ
իր աստուածային, անհուն եզերքում:

Եւ մեռելների շուրջպարն էր բռնում
լուսնահար, խելառ, տխուր, արնաներկ,
ինչում էր նրանց երգը կարկաչուն,
սառնամայական տագնապի մի երգ–
ու ցասկում էին խաւարի միջում
նրանց արնավառ սրունքները մերկ...

Ու ձուլած իրար սեր, ցնորք ու մահ,
լուսնահար ծովի երգով օրորուն–
ուղեղիս բորբոք կսուի վրայ
թանձրացան նրանք ու անցան հեռու–
եւ խաւարն իջաւ աչքերիս վրայ
ու ողջը կորաւ անեռազ ցիրհուրմ...

VI

Մեռած Քաղաքից մենք նամբայ ընկանք
ճի՛շդ դեպի կռիւ — դեպի ռազմավայր:
Գնում էինք մենք՝ կայտառ ու ուրախ՝
կռուելու, կռիւով մեռնելու համար:
Հեռուն բռնամին փախչում էր արագ
եւ կռւում էինք մենք՝ յարուած ու վառ:

Թնդանօթները բնդում էին բուն
եւ արտատրոփ տեսնում էինք մեզ,
թէ ինչպես այնտեղ, լեռներում կապոյտ
աւեր է փռում նա, հարուած ու վէրք,
ու դառնում են շէն գիւղեր—մոխրակոյտ.
—օրհնուբի՞ւն էզ, Մահ, օրհնուբի՛ւն էզ, Չէնք:

Եւ գնում էինք առաջ ու առաջ՝
ձիւնապատ լեռան ահաւոր կողով:
Թժուար էր ուղին: Բայց աչքերն յառած
փախչող բնութեան՝ անհուն մի կորով
մղում էր մեզ միշտ առաջ ու առաջ
եւ արտերս այրում բանդումի հրով:

Երբ մեզ, մի վայրկեան հանգստի համար
կանգնեցինք լեռան ներմակ գագաթին—
նայեցի ներքուն: — Վարը, հողմավար,
ծովն էր աղմկում գանգատով մթին:
Զարնում էին ջրերը իրար,
ու խուլ, ու տխուր աղմկում էին:

Արեգնի նման գորշ, անփայլ ու մութ
փռուել էր իմ դեմ ծովը հողմակոծ:
Գորշացել էին ջրերը կապոյտ
ու գորշ էր բուում ամբողջ:
Եւ ինչ որ մի խոր ու տխուր խորհուրդ
համակեց յանկարծ հուրիւնս ողջ:

Եւ ձեր, ծովի պես, ծաւրացաւ հոգիս:
Ու կատակ բուաց արած գործը մեր:
Բայց լուռ բարձրացայ, խլեցի ճորից:
Թնդաճօրճներ բնդում էին դեռ:
Լցուել էր հոգիս աճքաւ մի կսկիծ՝
բուում էի ինձ մեճա՞կ ու աճսեր:

Ցաճկարծ կանգ առայ ես ձորամիջին:
Ալլաճդակ մի դի փռուած էր իմ դեմ.
Նրա մօս ընկած վիրաւոր մի ձի
ջղաձգօրեն մեռնում էր արդեն:
Հէյ, մի էիչ առաջ, նյու իր սաճձին՝
սա՛ էլ էր փախչում այս վայրից գեհեն:

Ո՞ւր էիր փախչում, փախո՞ն աճասուճ...
Քեզ ես տերն այսեղ ծեծելո՞վ բերեց:
Բայց ճա չգիտէ՞ր, որ այս երազում
միայն Մա՛ճն է տէր՝ աճողոք ու մեծ:
Էլ ինչո՞ւ էր ճա աւերել ուզում,
մեր երկիրը ինն ինչո՞ւ աւերեց...

Տե՛ս, ալլաճդակուած այժմ ընկած է ճա:
Սեւացել է, տե՛ս, արճինի ճման:
Աճքաղ, աճշիրիմ այսեղ կը մճայ,
ոչ ոք չի՛ փորի ճրաճ գերեզման,—
ոչ ոք չի՛ տխրի, որ ճա զոհ եղաւ
մի արճածարաւ, աճիմաս ցասման:

Չգիտեմ ինչու, կամքիս հակառակ,
բեցի ձրա արնոտ երեսին,—
ու առաջ անցայ էլյերով արագ,
հոգուս բեռ արած խեղճությունը իմ:
Իսկ մերոնք, անմար եռանդով վայրագ,
կուում էին դեռ ու բանդում էին:

Հուր ու ծխի մեջ օրը վերջացաւ:—
Եւ մենք կանգ առանք լերան փեշի մոտ:
Հուր ու ծխի մեջ բռնամին անցաւ՝
ուսին շալկած պատերազմ, ամօթ:
Եւ ամեն անկում, ամեն վերք ու ցաւ
ծածկեց գիշերի վարագոյրը մութ:

Եւ մենք յետ դարձանք դաշտերից մարտի՝
հանգստանալու հեռաւոր գիւղում:
Հեռուում՝ մի մեծ այրուած արտի
ցողունները էին ծուխեն մխում:
Ու էլլում էինք՝ յոգնած, անօթի,
աշնան գիշերի մեգ-մառախուղում:

Երկու բնկերով էլլում էինք լուռ՝
յոգնած գինուորի եռանդով անեզք:
Մեռելի նման ահաւոր, տխուր,
ծոլն էր տարածուել մռայլոտ ու գեղ:
Գնում էինք լուռ, չգիտեմ, թէ ո՞ւր՝
միշտ ցո՛յն ծովափով—անվե՜րջ ու անվե՜րջ:

Երբ ուրուագծուեց հեռուում մի լեռ—
ասացին, որ գիւղն այնտեղ կը լինի:
Բայց ծալուում էին սրունքները մեր.
բնկերս ուզեց, որ ընկնի, ճի—
բաց երկնքի տակ, գիւղ չհասա՛ծ դեռ,
հենց ճամբի վրայ՝ ինչ կ՚ուզէ — լինի:

Ու մնաց այնտեղ: Ես անցայ առաջ:
Նրան երեւի ձիով կը բերեն:
Վերելքը ծանր էր, ծանր էր՝ ի՞նչ արած...
Պէտք է իմ բոլոր ուժերը լարեմ,
հասնեմ—ճոր ճնեմ յոգնած, բեզարած,
որ երազները հոգիս օրօրեն:

Բարձրանում էի: Վայրենի խումին
ծեծում էր կուրծքս հսկայի ուժով:
Ու մթնում էին հայեացքները իմ,
լցուում էր հոգիս քանձր մտուոով:
Բայց նիգ թափելով մի գերմարդկային՝
ես հայլում էի լուռ, ուշի-ուշով:

Մենակ, անընկեր: Հսկայ բուի պես
աւազէ մասներն աչքերիս յառած՝
ոռնում էր խումին: Ընկնում էի ես,
նորից բարձրանում ու անցնում առաջ:
Երբեք չէր եղել մարմինս — այնքան ինձ,
եւ հոգիս — այնքան կապկի ուժ առած:

Ու վաճուում էի ճիգերս յետիս:
Գագաթը մոս է — կը հասնեմ հիմա:
Բայց յանկարծ ֆամին օպտեց գետին,
դեպի անդունդը՝ ուղի՛ղ դեպի մահ:
Բայց ո՛չ... Մեռնողի բնազդով մթին
գրկեցի ֆարերս ու ոտի ելայ:

Քայլեցի ցորից: Եւ յանկարծ իմ դեմ
փուռեց յոյսերի մի ոսկի մշուշ:
Ա՜, հասել էի ես գիւղը արդեն:
Հասել էի ես: Կես գիշեր էր ուշ:
Եւ ցուրտ խրճիթի խոտերի մէջ քեզ
ճնեցի ան՜ուշ, ճնեցի ան՜ուշ...

VII

... ես չեմ մոռանայ այն գիւղը երբեք
եւ այն խելագար վայրկեանը ինձոս,
երբ վերջին անգամ դողաց յուսաբեկ
իմ բանաստեղծի ձեռքը վարանոս—
եւ իմ յուսաւո՜ր, վերամբարձ ու սեգ
ու՝ արեգ հոգին դարձաւ արիւնոս:

Ձէ՛, չեմ մոռանայ տնական այն աւեր
եւ այն մանկական աղաղակը խոր...
Միթե իմ հոգին չգիտե՞ր ցաւել,
միթե իմ հոգին, կոյր ու վիրաւոր,
սկզբի օրից կեղծե՞լ էր, դաւե՞լ—
եւ յոկ ա՛յն պահուն յայտնուել էր նոր...

Մի գազան էի դարձել այն պահուն:
Մթնած աչքերով տեսնում էի ես
երկու մանկական գլուխներ սիրուն
եւ ծեր դեմքը մօր, որ գուցա՞ս այնպես,
խնդրում էր՝ որ սուրբ Աստծու սիրուն՝
լինել հոգեզուրկ ու աստուածատես:

Ու այն եմ յիշում, որ սուրբ ձեռքս,
Մեռած Քաղաքի տեսիլն հոգուս մէջ՝
ես վրայ պրծայ... Եւ մի հարուածից
ընկած էր արդէն իր գաւակը մեծ:
Երկրորդ գաւակն է՛լ երկրորդ հարուածից
անաբեկուած մօր ոտքի մօտ փռուեց:

Եւ, սատանայի էրէիջով յամառ,
խաբեցի նեռական մազերը ես մօր.
— վերցրո՛ւ, պառա՛ւ, վերցրո՛ւ յիմա՛ր,—
ես էրէջում եմ, տե՛ս, անգութ, անամօթ.
հէ՞յ, դո՛ւ էլ էրէջա, խնդա՛ խելագար,
խնդա՛, ծիծաղի՛ր, ու պարիր դիւոս...

— Թէի՛ր ես մեռած բալէքի վրայ
եւ մոխի՞ր ցանիր վարսերին ես ծեր,
եւ անէծք կարդա անունիդ նրա,
որ այս մեղքերին պատճառ է դարձել...
Էրէջա՛, ծիծաղի՛ր, միմի՞ս ելա,—
չէ՞ որ դո՛ւ ես մեզնից ուժերիս բարձել...

Ու դուրս վազեցի խելագարի պես:
Ու պարում էի ես, որպես գինով:
Ուրախությունից ճչում էի ես...
Ա՜, հարբե՞լ էի մանկաց արիւնով...
Ահա՛ թե ինչո՞ւ են մորթում միշտ մեզ՝
հանո՞յ են գնում մեր կեանքի գնով...

Մե՛նք էլ կը գնենք, մենք էլ կը գնե՛նք...
Արիւնն անո՞ւշ է, արիւնն հեշտագին...
Այլեւս մենք էլ անխիղճ ենք ու ցեղագ,
ամե՛ն ճիշտ իրաւունք հեգնե՞ց մեր հոգին...
Վամպիրների պես մե՛նք էլ կը խմենք
ձեր արիւնն անուշ եւ ձեր կեանքին անգին...

Եւ թռչկոտում ու պարում էի ես,
մի՛շտ այնքան առաջ դեմքն այն կանացի
եւ մանուկների գլուխները հեզ...
Եւ յանկարծ ճորից խրճիթ գնացի...
Ընկայ ծո՞վ դարձած արիւնների մէջ
եւ երկա՞ր, երկա՞ր, մանկան պես լացի...

Գրկեցի արնոտ ոսկերը ձեր մօր
եւ համբուրեցի չոր ձեռքերը իր:
Ձչում էր հոգիս՝ անդա՛ռն մեղաւոր,
եւ աչքարիը ողջ լում էր կարմիր:
Հասկացայ յանկարծ կսկիծով մի խոր,
որ ճո՛յնն է հսկայ տառապանքը մեր...

Եւ լալիս եի ու ներում ուզում...
Ներում... Աստուած իմ, ցնդե՞լ եի ես:
Աստուած իմ, Աստուած, այս սեւ երազում
մարդ ի՞նչպես ապրի, որ մնայ անեղծ:
Չէ՞ որ մենք միայն ապրել ենք ուզում,
մենք բոլո՞րս՝ որք, անբսիսի ու խեղճ...

Ի՞նչպես մոռանամ այն գիւղը ես, հէ,
եւ այն խեղճագար վայրկեանը ֆինս,
երբ վերջին անգամ դողաց յուսաբեկ
իմ բանաստեղծի ձեռքը վառանս—
եւ իմ վերամբարձ, լուսաւոր ու սեզ
ու արե՞գ հոգին դարձաւ արիւնս...

Չէ՛, չե՛մ մոռանայ տնակն այն աւեր
եւ այն մանկական աղաղակը խոր:
Մի՞թե իմ հոգին չգիտեր ցաւել,
մի՞թե իմ հոգու թեւը լուսաւոր
չէ՞ր ձգտում բոչել դեպի վե՞ր ու վե՞ր,
ու սիրել մարդուն, աշխարհը բոլոր,
եւ նոյնիսկ անծանօթ ճարերը սիրել...

Աստուա՞ծ իմ, Աստուա՞ծ.- այլանդակ ու չար՝
ել ինչո՞վ լցնեմ ես իմ սիրտը սին,
ել ի՞նչպես տեսնեմ արեւը պայծառ
եւ ի՞նչպես նայեմ աստղերի լոյսին:
Ասա՛, ի՞նչ անեմ, որ պարզ ու արդար
հոգիս զրնգայ ու սիրտս խօսի...
. . . . . .

VIII

...Կռիւն սկսուեց — աննողոք ու գոռ։
Մենք դաշտում էինք։ Ձիւնոտ լեռներից
յարձակւում էին նրանք — բիւրաւոր,
մերթ յետ նահանջում մեր խիստ գրոհից,
մերթ առաջ անցնում վոհմակներով նոր—
ու վախչում էին, ու գալիս նորից։

Եւ քնկնում էին նրանք շարեշար,
մռնչում էին գազանների պէս։
Բայց խիտ, անհատնում շարքերով վարար
շարժւում էին նրանք դէպի մեզ։
Ամէն ինչ յանկարծ խառնուեց իրար—
եւ սուինամարտն ահա սկսուեց։

Մենք գրկում էինք ու չանգռում իրար,
սուինի զարկով գլորում գետին։
Վագրերի նման խորամանկ ու չար,
ապրելու հսկայ ծարաւով յետին՝
մեռցնում էինք — ապրելու համար,—
եւ կռւում էինք, եւ կռւում էին։

Եւ չէինք յիշում այլեւս ոչինչ,
եւ չգիտէինք ի՞նչ էինք անում։
Եւ շատերն էին քնկնում մեզանից
եւ ոտքերի տակ մեր անշնչանում։
Չէ՛ինք տարբերում ո՛չ մի գազանից,
չէին տարբերում եւ ո՛չ մի բանում։

Կոխոտում էինք բնկերների դին,
բնկերների դին դիրք էինք ասում:
Ու վատնում էինք ճիգերը յեսին
անհասկանալի տագնապով ասիում:
Եւ չգիտեինք, եւ չգիտեին,
թէ յորձանքը սեւ մեզ ո՞ւր է տանում:

Իրիկունն էջաւ: Ասիում խաւարի
խաւար ծալքերում կորաւ ամեն բան:
Եւ էջաւ մոայլ երազը Ջարի
այն խայտաճամուկ դաշտերում անբաս:
— Է՜, մնաք բարի, բնկերնե՛ր արի,
դուք պատում ասցած ձեր կեանքի ճամբան:

Իսկ մենք — ենդգորեն ճահանջեցինք յետ՝
ձիւնագիտերի մրրիկների տակ:
Եւ իմաս չուներ ճամբան անվերջ,
որ անցնում էինք՝ անկումին գիտակ:
Երբեք չե՛ր եղել հոգիս — այնքան խենթ,
եւ գանգս — այնքան զառանցոտ ու տաք:

Հոգուս մէջ կարծես ինոցներ կային,
եւ աչքերիս մէջ—խարոյկներ յափրէզ:
Բայց մարմինս՝ յաւե՜րժ, յաւե՜րժ մարդկային՝
ապրել եր ուզում: Մահապարտի պես
հայեացքներս յառած ահաւոր Մահին՝
միւսների ետեւ փախչում էի ես:

Եւ խաւարի մէջ կարմիր ու կարմիր
գիդակներ էին ըսչում ու շաչում:
Եւ բնկնում էին բնկերներբ մեր
սաչանայական խուճապի միջում:
Եւ բնկնում էին անգի՞ն բնկերներ,
եւ վերջին անգամ մեզ էին կանչում:

Եւ երբ արեւը բարձրացաւ երկինք
եւ մենք յոյսի տակ իրարու գտանք—
մեռելներէ պես սիրբնած էինք,
չէինք հաւատում, որ ապրում ենք, կանք:
Անխօս հայեացքով իրար բաղեցինք,
իրար հոգու մէջ գերեզման մտանք:

. . . . . .

Նրանք մնացին ձիւնոս դաշտերում՝
խղճած գայլերի վոհմակներին կեր:
Այնտեղ, ուր բնդմիշտ տանջանքն է լռում
եւ հոգին դառնում անհունին բնկեր:
Ուր իբր յիշատակ կեանքերից սիրուն—
մնում են միայն այլանդակ գանգեր:

Ու մութ է հիմա այնտեղ, ամայի,
խաղին է միայն ոռնում ու կոծում,
տօնելով վայրագ հարսնիքը Մահի՝
ննջգաւոր ու խոր ձիւների ծոցում:
Եւ ո՞վ կը գնայ, եւ ո՞վ կը նայի
անդրեհրիմեան տօնող Ասծուն...

. . . . . .

Իսկ մենք ապրում ենք ու ծնչում ենք դեռ
այս խայտաճկար, աւերակ գիւղում,
ուր ամեն տան մէջ մահ է ու աւեր,
ուր ամեն վայրկեան արիւն է ցօղում,
ուր ամեն վայրկեան լարում է դաւեր
եղեռան բախտի ժրաջան մեղուն:

Եւ առօրեայ է հիմա մեզ համար
մարդկային անբաղ, այլանդակուած դիմ:
Անաբեկիչի երիջով յամառ
մենք կեր ենք նետում անկուշտ անդունդին:
Եւ իմաստ չունի այլեւս յիմար
ճակատագրի որոշած Անդին:

Եւ գինին այստեղ ծորում է առատ,
եւ հարբում ենք մենք կարմիր խնճոյքում:
Այլեւս չկայ եւ ո՛չ մի արատ,
որ ծաղիկ չտայ մեր գինով այգում:
Պատրաստ է բնդմիջս մեր զոհը պարարտ՝
մենք՝ զոհ, մենք՝ դահիճ՝ մեր արնոտ ձեռքում...

IX

... Երեկ առաւօտ բարձրացայ կանուխ
եւ լուռ կանգնեցի բլուրի վրայ:
Հեռուն՝ զնգալով իջնում էր մի ուղխ,
լսում էի ես կարկաչը նրա:
Կապոյտ երկնքում ո՛չ ամպ կար, ոչ ծուխ:
Եւ ես մոռացա՜յ տաժանքն առօրեայ...

Ա՜խ, գիւղակների շուրջպարը կանայ՝
դաշտերի ոսկի՜ հեռատեսութեւրում,
ուր մի անսահման թախիծ կայ փռած
եւ մի հոգեթով տխրութեան հեռու,
ուր յաւերժութեան ցնորքը անհաս
նախրում է կարծես ոսկի՜ դաշտերում...

Ամեն ինչ այնպես անդորր է ու կոյս,
որ չեմ հաւատում կարմիր երազին:
Միրաժի նման փարւում է հոգուս
անէ աշխարհի ճնշուածքը հին:
Բայց չէ՞ որ այսեղ ապրել են անյոյս—
եւ չե՛ն էլ լսել ճնշութեան մասին...

Օ, խորհուրդների յաւերժական մա՛յր,
որ տառապանքի ու տարփանքի մէջ
յղանում ես միշտ կեանքեր անհամար—
հազար գոյներով՝ հազա՛ր եղերէջ,—
որ յղանում ես աշխարհի համար
յաւիտենական կռւոյքների վեհ...

Օ, դու, բարբարո՜ս, խելագա՜ր, ցաւո՛տ,
երբեմն իմաստուն, երբեմն — գազան,
աշխարհներ այրող կախարդական խո՜տ,
աշխարհներ շինող բախտի գաւազա՜ն,—
դիւայինն ոգի՝ ճահիճների մոս,
ոչնչի՜ մասին աղօթք արքազան...

... Ու պի՞տի է խլի՞լ ու խլի՞լ յամառ՝
ապրելու հսկայ տենչը բեռ առած,—
խլել Աստծու ու Դեվի հառաչ,
մարել — ու վառել աստղերը մարած,
որ — տիեզերքի զառանցանքը մառ
չցնդի՞ երբեք ու մնայ — երազ...

1915-1916
Տաճկաստան-Պարսկաստան
Հայկական VII Կամաւոր. բանակ

ՎԱՀԱԳՆ, - ԱՏԻԼԼԱ

Վ Ա Հ Ա Գ Ն

Փրկութեանդ արեւ՝ Վահագնին ցեսար...
Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Հրդեհի աստուած, հրդեհն ու կրակ,
օ, Վահագն արի: — Տեսնում եմ ահա,
որ ծիծաղում ու բխջում են նրանք
արնաբաւ բնկած դիակիդ վրայ:
Թէ մի՞ծ էիր դու... Եկան, երգեցին
մի հին իրիկուն գուսանները ձեր,
որ ինչո՞ւ ես դու, հրոս, հրածի՛ն,
որ դու կը բերես փրկութիւնը մեր:
Եւ հաւատացինք, հարբած ու գինով,
որ դու կաս՝ ինչոր, մարմնացում ուժի—
իսկ նրանք եկան՝ արիւնով, հրով
մեր երկիրը հին դարձրին փոշի...
Եւ երբ բարբ տուին դիակդ արնաբաւ
որ նետեն բաղցած վոհմակներին կեր—
մեր կեանքի հիմերն անդունդը ընկան
եւ արնոտ միգում նարնատում են դեռ...

1916

Ա. ՏԻԼԼԱ

1

Պարերի խորհից արբնացած ցորից՝
ացցո՞ւմ եմ ահա երկրի դաշտերում.
Ցայում եմ դեպի հրդեհուող հեռուց՝
դարերի խորհից բարձրացած ցորից:

Ինձ թաղել էին ոսկի դպաղում
իմ հոգևերթ մի հեռաւոր գիշեր:
Եւ իմ շիրիմը ոչ-ոք չգիտեր
եւ աճիւնիս հետ ոչ-ոք չէ՛ր խաղում:

Մոռացե՞լ էին արեայ Աստիլլին:
Եւ հեգնում էին երազը նրա...
Եւ կարծում էին, որ մեռել է նա...
Իսկ ես—բարձրացել, ացցնում եմ կրկին:

Եւ հրդեհների բոցերը դեղին
խաղնում են ահա աստղերը ցորից.
— Ել չէ՛ք մոռացայ, չէ՛ք հեգնի Ել ինձ՝
հոգևերի արեայ հզո՞ր Աստիլլին:

Ես կրկին ահա ճանդում եմ, վառում.
խաղաքներ, գիւղեր փլչում են իմ դեմ.
եւ այս անգամ ես՝ գո՞ռ, անյաղթ արդեն՝
մի կարմիր գիշեր կը մտնեմ Հռոմ...

Եւ իմ երկաթե բռունցքովը ես
ձեր տաճարները անդարձ կը խանդեմ.
ուրի՞ց կը սողան արհաւներն իմ դեմ՝
մանր, ճաճանչին նիհուներէն պես...

Նրանք — մանր, թոյլ ու ողորմելի,
որ, կոյր, խնդացին նսած կրկեսում՝
երբ Թեոդոսը տեսաւ երազում,
որ կոտրուե՞լ է նետը Աքիլլի:

Նրանք, որ մի օր իմ անակընկալ
մահով կուրացած, որպես երազում,
մի ինչ-որ հանգի՞ստ էին երազում
յոգնած մարդկութեան եւ իրենց համար:

Եւ չըգիտէին, որ ես չե՛մ մեռել,
որ ես չե՛մ մեռնի, որ եղել եմ, կամ՝
ուրի՛ց կը գնեմ, ուրի՞ց կ'արթնանամ.—
ես—հազարանուն՝ Մահ, Աւերմ ու Նեռ...

2

Տեսնում եմ նորից իմ աչքերը ճեղ,
որ ինձ ճժոյգիս սմբակների տակ
ցնդում եմ, որպես տարտամ յիշատակ,
ձեր երազային շեմքերը բիւրեղ...

Հէ՞յ, արեւմուտից մինչեւ արեւելք
պիտի հրդեհեմ ու խանդե՞մ ինձա՝
ես—արհա՞յ, ասպուա՞ծ, տե՛նդ, դժո՛խք ու մա՞հ,
ես—ճշմարտութեան խարազանը մերկ:

Եւ քո՛ղ աշխարհի տերերն իմացան,
եւ խոր լսբռնեն մի վերջին անգամ,
որ եղել եմ ես, կը լինեմ ու կամ,
ես—աննիերթելի ու յաւերժական...

Եւ քո՛ղ մարդկային ցեղերն առանձին
յաւիտեա՛ն յիշեն աղօթքում, երգում,
որ խոս չի՛ բուսնի այլեւս այն երկրում,
որով անցել է Ասիլլի ինձ ձին...

Թող յիշեն, որ իմ ինձ կամքը բռնի,
խանդումի, հրի իմ երազը ինձ,—
երբեք չի՛ ցնդի, երբեք չի՛ մեռնի,
ոչ-ոք չի՛ յաղթի արհայ Ասիլլին...

3

Իսկ երբ մի գիշեր կրկին յագեցամ,
երբ յոգնի խաղից մարմինս արի—
ցորի՞ց կը ճնեմ մի հացի տարի,
ոսկի դագաղիս գիրկը կը գնամ:

Եւ ինձ իմ մռայլ հսկացերս խեղիր,
առանց աղօթքի եւ առանց խօսքի,—
ցորի՛ց կը թաղեն դագաղում ոսկի
եւ թաղողներս կը թաղուեն ինձ հետ—

որ իմ մարմինը ո՛չ-ոք չգտնի,
որպէսզի ոչ-ոք երբեք չիմանայ,
թէ ո՞ւր է թաղուած հին Ասիլլը — նա,
որ հաւասարեց ձեր փառքը գետնի...

Որպէսզի կրկին, երբ երկրի հրից
երկնի աստղերը գանգատուեն հարին—
իր հին երազին մի՛ըս հաւատարիմ
արեայ Ասի՞լլը բարձրանայ ցորից...

1916 Մոսկուա

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԶ

(Պոէմ երգիծական եւ ողբերգական)

Բուրդը դրին
ու գզեցին...

Ա.ք. Խ՚ևկոյեան

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԶ

1

Ցերեկի վազքից, հոգսերից յոգնած՝
տուն վերադարձայ գիշերի կիսին:
Խակոյն ննջեցի: Եւ մեկ էլ, յանկարծ,
մի երազ տեսայ հայ ազգի մասին:
Ես չեմ հաւատում ո՛չ մի երազի:
Բայց արթնանալիս վախեցայ, ասի.
վատ բան է ասում իմ երազը այս՝
ինչ էլ որ լինի — տեսիլ թէ երազ —
ինչ էլ որ լինի — պատմեմ աշխարհին,
թող օրը անցնի — ու հետը բարին:

2

Գիշերը գնաց, բայց երկա՜ր, երկա՜ր
իմ սրտի վրայ ծանր, որպես քար,
մի թախիծ մնաց երազից ես մութ—
մի նեղող թախիծ, ծանր մի խորհուրդ:
Ու մաշում է ինձ թախիծը հիմա.
մութ, խորհրդաւոր, սուր, որպես մահ
գիշեր ու ցերեկ նւում է կարծես—
եւ խելքս արդեն կորցրել եմ ես:
Շրջում եմ մենակ օրերիս միգում,
մխում է ցաւը իմ յոգնած հոգում
եւ չեն ամօթում էլ յոյսերը սին...
— Բայց ես մոռացայ երազիս մասին:

3

Քնել եի խոր: Աչքերիս առաջ
փռուել եր մի մութ, անթափանց մեռուց:
Կուրծքս բարձրանում ու իջնում եր ցած՝
զգում եի, որ ճնել եմ անուշ:
Քնել եի խոր: Եւ անիա յանկարծ
բուաց ինձ, որ ես բարձրանում եմ վեր:
Սիրտս մի մրիկ տագնապով զնգաց
ու սուր կարոսով ականց ցաւել:
Նախ բռում եր ինձ, որ բռչում եմ ես,
բայց տեսայ յետոյ, որ վերթ, օդում,
կախուել է ճոգիս, որպես աչք ճրկեզ
ու վարթ իջնող խաւարն է դիտում:
Ու ստ՞ուր ճաճոյքից նչում եի ես,
բայց խորթ եր ձայնս՝ մի կարկառ ճնչիւն:—
Զգում եի յոկ, որ երկնի միջում
կախուած է ճոգիս, որպես աչք ճրկեզ:—

4

Ու մութ եր շուրջս, մի մրիկ գիշեր:
Աջխարհս ճեռուն ճնել եր յանի:
Երկնքից կախուած ճայում եի ես
վարթ տարածուած երկրի խաւարին:
Սկզբում ոչինչ դեռ չեր երեւում.
խաւար եր միայն, մառախուղ ու մութ:
Բայց յետոյ յանկարծ ճեռու-ճեռուից
կարմիր բռնկեց մի կրակ ադոս:
«Հիւանդ կայ» ասի ինքս ինձ ես.
«Հիւանդի ճամար կրակ վառեցին:»

Ու միտ ածելով ինձ հետս հանկս
Գայում էի ես այդ կարմիր կայծին,
երբ նրա կողքին, հապշտապ, արագ,
տագնապով վառուեց մի ուրիշ կրակ:
Ցնոյ մոտիս, իրար հետևի՛ց
ուրիշ կրակներ վառուեցին նորից—
ու ծուխ բարձրացաւ, ու հրդեհ, ու բոց.
հսկայ լեզուներ վառուեցին միգում—
եւ մեկը ասաց իմ ճնած հոգուն,
որ վառւում է ողջ երկիրը հայոց...

5

Ու, ծուխ ճնշելով արնագոյն մուժում,
Գայում էի ես վառուող հրդեհին
եւ տեսնում էի՝ վարը, մռնում
վառւում է աճա մեր երկիրը հին:
Եզերքից-եզերք հրդեհը դեղին
գրկել էր հայոց աշխարհը ու նա
անկամ յանձնուած կարմիր հրդեհին
վառւում էր հսկայ բուրայի վրայ:
Արեւի հսկայ մի ծովի նման
զարկել էր բոցը ԵՒարաս սարին,
որ վառւում էր sop, պարում ալեպան,
ողջակէզ դարձած խառար աշխարհին:
Ու լուռ էր այնպես. ձայն, ծուկ չկար.
կանգնել էր կարծես ժամանակը էար,
որ հրդեհը այդ յաւիտեան տեւի...
Կրակահանդես, տօն էր երեւի

տօր, արնակրակ հրդեհը այդ վառ–
ածխարհի համար — մարդկութեան համար...

6

Նայում էի ես արտով հրաւառ
ու թարթում էին աչքերս մխից–
երբ տեսայ յանկարծ, որ մեկը, ծապ,
վախչում է աճա հրդեհի տեղից:
Հրդեհի կարմիր լոյսով ողողուած՝
կարմիր էր բում թուխ դեմքը նրա:
Վազում էր, գլուխն ու ճակատը բաց,
եւ աչքերը իր — կրակի ֆուրայ–
բոցկլտում էին ֆինս ու դաժան.
եւ շրթունքներով թուխ ու ալեւոր
մռմռում էր ցա, երդում էր ցա, որ
չի՛ դժի երբեք ուխտը սրբազան:
Ո՞ւր էր ցա վախչում եւ ինչո՞ւ համար,
ինչո՞ւ էր վազում ու երդում անում:—
Ֆարոս էր ուղին, հրդեհն ու խաւար,
բայց վազում էր ցա, չէր հանգստանում:
Երբեմն միայն բաշկինակը իր
մօտեցնում էր շրթերին կարմիր
ու շրթին սեղմած ձիւն-բաշկինակում
խեղդը հազալով արիւն էր թքում:
Եւ նորից, պարզած գոյգ ձեռքերը վեր,
ճերոսի նման անփոյթ, անձնդուէր
վազում էր առաջ ու երգ էր երգում
վրէժաժպիտ ու մահագուշակ–
ու ծածանւում էր նրա աջ ձեռքում
բաշկինակը իր, որպէս դրօշակ...

Երբ հուրը մնաց սարի յետևում—
կանգ առաւ մի պահ այդ մարդը յանկարծ,
երկչոտ աչքերով նա գնաց հետուց—
բայց չէր երեւում կրակի մի կայծ:
Խորունկ շունչ քաշեց ու նստեց քարին:
Մի-երկու վայրկեան սպասեց լռին.—
գիշեր էր շուրջը, խաղաղ ու հանդարտ:
Եւ ահա, որպես փորձուած մի մարդ,
մատները դրեց շրթունքների մէջ
եւ երկու անգամ բարձր, գի՞շ սուլեց:
Եւ ահա մէկ մէկ, իրար հետևից,
դուրս եկան նրա ընկերները քաջ,
մօտեցան նրան, բռնեցին թեւի՛ց
ու յուզուած՝ կեցան ընկերոջ առաջ:
— Ի՞նչ արիր, Ահո՛, — հարցրին նրան:—
Բայց Ահոն չուներ լեզու ու բերան,
արդի տոպից չէր կարող խօսել:
Խնդրեց մի վայրկեան, մի ինչ սպասել,
շրթերը ծամեց, բարձրանալն հազաց—
ու յուզուած ձայնով նա այսպէս ասաց.
«Հորիզոններում տիեզերական,
ուր աստղ ու յուսին բոցկլտում են վառ,
աշխարհում այս մութ, նեղգ ու խօլական—
ո՛չ մի ազգ չկայ հայի պէս բռնաւոր...»
— Լաւ, ճառ մի՛ խօսիր, մենք այդ չենք ուզում.
գիտենք, որ ճառեր դու լաւ ես խօսում.
դու մեզ այն ասա՝ ի՛նչ արիր, Ահո՛,—
ճառերը յետոյ, խօսքերը յետոյ:
Դու, որ քաջ ես միշտ, շիտակ, անսասան—

կատարի՞ր արդեօք պարտէդ արքազան։
— Իհարկէ, տէրէ... ի՞նչ խօսէ այդ մասին.—
ձեռքը դնելով բնկերոջ ուսին
նորից սկսեց Անօճ խոյտրաձայն.
(այդ մարդը ունէր այնպիսի մի ձայն,
որ եթէ խօսէր մի մութ փողոցում—
կ'ասէիր՝ այնտեղ արիւզ են ածում...)
« — Վատւում են այնտեղ երեխայ ու կին...»
Բայց բնկերներբ խլեցին կրկին
խօսքերբ նրա։ — «Ի՛նչ արի՛ր, ասա,
պատմիր սկզբից եղածը գործի։—»
Ու պատմեց Անօճ. — «Հենց որ տեղ հասայ
առաջին գիւղում հրդեհը գտի։
Խաւար էր, տէրէ... ի՞նչ իմանայի...
Դուրս եկաւ սակայն, որ... գիւղ է հայի...
Բայց ես դեռ ոչինչ, դեռ ոչինչ, տէրէ.
այն էր՝ հաւաքուել մարում էինք մենք՝
ջուր էինք լցնում կրակի վրայ—
տեսնենք հարեւան տեղերից ահա
օգնութեան եկաւ գիւղը դրացի.
յաւ է, կը մարենք, մտքումս ասացի—
մեկ էլ ես տեսայ, որ կրակը բժժ,
որպես մի վիշապ, ազան մի հրէշ,
հնոցի նման բռնկուեց միգում...
Ու գիւղը մնաց կրակի գրկում։
Եւ մենք հասկացանք, որ մեր դրացին
բարւող է լցնում մեր փոքրիկ կայծին...
Ու կայծը ահա մի հրդեհ դառաւ—
այսպէս մեզ խաբեց դուշմանն անիրաւ ..
Ու համի եկաւ, մոռնչաց աներ—
կրակը գրեց, տարաւ ուրիշ տեղ,

այդ տեղից վառուեց գիւղը հարեւան
ու ծուխ բարձրացաւ, ու հրդեհ, ու բոց,—
նայեցի՛ մեկ էլ — հրդեհի նման
վառւում է, տեսնում, աշխարհը հայոց...
Կրա՞կ է այնտեղ, ու հրդեհ, ու մահ—
հայոց աշխարհում հրդեհ է հիմա:»
Ու լուեց Ահօն: Ու բարձր հազաց:
Ձայրոյքը մի պահ խեղդեց բոլորին:
Եւ ահա նրանց վեհերանքը հին
վեր բառաւ տեղից ու խռպոտ ասաց.
— «Վայրկեանը խփեց,.. օ, այո՛, այո՛...
Կռիւ ու վրէժ, — չսպասենք իզուր:
Մենք մնանք այստեղ — դու գնա, Ահո՛,
հայոց աշխարհի անազանգը տուր:»

8

Ու նորից Ահօն բնկաւ նանապարհ:
Գիշեր էր ծուրջը, անուելի խաւար,
բայց վազում էր նա ու չէր ապրանում.
այնպես էր գնում խաւարի գրկում,
որ տանն էր ասես, գորգերի վրայ—
սովոր էր մթին հայեացքը նրա:
Մի անգամ միայն խեղճը ապրանեց—
բայց խռպոտ հազաց, աչքագոյն թեց
եւ խկոյն նորից նա ոտի բռաւ.
մի զարմանալի աշխուժ էր, իրաւ,
որ ունէր կեանքում այդ մարդը հիւանդ—
մի զարմանալի, հանճարե՞ղ եռանդ:

Ես մտածեցի՝ «Ազնի՞ւ ծերուն,
խեղճը քոհերի բորբոքում ունի,
բայց իր աշխուժով պատանի է դեռ—
գիտի արբազան պարտքը կատարել:
Քո այդ անձնուէր եռանդի համար
ես փառք ու պատիւ, յիւսական անմար:
Ով չի օրհնում ես — արիկայ է նա.
եւ ո՞վ չի ների, երբ իմանայ,
որ դու մի չնչին սխալ ես արել—
նրանց գիւղի տեղ — մեր գիւղն ես վառել...
Օ, այո, Աիօ՛, ազնի՛ւ ծերուն՛.
ով գործ է անում — նա սխալ ունի,—
անսխալ մարդիկ աշխարհում չկան—
Ասուած է միայն անսխալական...»

9

Մինչ վազում էր նա դաշտում ամայի,
ուր մութ էր ու մուժ, մշուշ էր մանի,
նամբին մնացած բնակիրներք նիր
սարի տակ նստած սպասում էին:
Վառուող սրտերով, աչքերք կրակ,
խաւարի գրկում նստոտած — նրանք
մտորում էին ապէսի մասին.
եւ ահա, բնոյս ժպիտն երեսին,
վեր բուաւ տեղից Վեսերանք ծեր
եւ ազդու ձայնով սկսեց խօսել.—
«Ընկերներ, ասաց, եղբայրներ անգին,

վառու՞մ է հայոց աշխարհը կրկին...
Հասկացո՞ւմ էք դուք մեռով վերահաս,
թե ի՞նչ են ասում կարճ խօսքերը այս...
Հայոց աշխարհում հրդեհ է կրկին...
Այսինքն այնտեղ երեխայ ու կին
վառում են հիմա անխիղճ կրակում
ու կեանք են հայցում, ու կեանքի փրկում:
Ընկերներ, սակայն խօսքերը այս խուլ
որքան էլ ինչեն անյոյս ու տխուր,—
ընկերներ, այս սեռ խօսքերում անգամ
մի բան կայ՝ անչա՞փ մխիթարական.
— դուք տեսաք կարծեմ, որ մի ինչ առաջ,
դեպի հեռաւոր ուղիներն յառած
իր աչքերը սեւ, կրակոտ ու վառ—
մեր ընկեր Ահօն ընկաւ ճանապարհ:
Ես դեռ չեմ ուզում շոշել, որ նրա
գոյութիւնը իսկ մեր երկրի վրայ
կը բաւէ արդեն, որ ցրէ իսկոյն
ամեն մի անմիտ յուսահատութիւն...
Եւ ո՞վ չըգիտէ նրա փառքը մեծ.
նա որ տեղ հասաւ ու զանգը տուեց,
զանգը մարտակոչ, աշխարհասասան—
կը յիշեն իսկոյն ուխտը սրբազան
ու եղերքներից, կողմերից հեռուի
դուրս կը գան նորից մի անեղ կռուի,
եւ մենք, անվհատ, անվախ, անձնուէր—
կ'ներքաշենք փրկելու ժողովուրդը մեր...
Ու ոտնչ կը խոչ մեր ցեղն արնահամ
օ, այս է անա մխիթարական...
Ո, ստուկ է նա, ով որ, սիրտը դող,
իւր կեանքի համար կռուել չի կարող:
Նա է այս կեանքում ապրելու արժան,

ով աստուածային ցասումով դաժան
գիտի բռնարու արիւնը խմել.
ով գիտի նրա արիւնը խմել
նա չի հալածուի գերութեան ներքոյ.
կռուով կը գտնես իրաւունքը ես...»
— Շատ ես ապրկում, բնկեր Վեսերաև,—
ձայն տուեց յանկարծ բնկերը նրան—
ու թուաւ, կանգնեց մի խարի վրայ.
Լեգեոն էր ինն աւուրը նրա—
(որ թե բարգմանել դուք կարողանաք՝
հայերեն լեզուով կը լինի «բանակ»:)
Դողում էր նրա մարմինը ամբողջ.
բարձր երջալով խօսքին բնկերոջ՝
խօսել էր ուզում, չէր կարողանում.
խեղդում էր նրան զայրոյթը անհուն:
Բայց զսպեց իրան, զայրացկոտ հազաց
ու ձգօր ձայնով յաղթ, հաստատ ասաց.
—«Ես չեմ հաւատում ձեր սին խօսքերին.
չեմ կարող լինել խօսքերի գերին.
Հայո՞ց աշխարհում արիւն է հոսում—
Դուք կանգնել այստեղ ծառեր եք խօսում...
Ո՛չ, ես չեմ կարող: Ես ասում եմ, որ
ամենից առաջ գործ է հարկաւոր:
Դուք կանգնեք այստեղ դաշտում ամայի.
ես կ'երթամ անա երկիրը մանի,
կը գտնեմ այնտեղ ես իմ կեանքը, ինձ,
գուցե եւ մեկին փրկեմ կրակից...»
Եւ ճիշտ որ, իսկոյն, առանց նայելու,
նա ճամբայ բնկաւ՝ իր խօսքին հլու:
Վեսերաևն ուզեց կանչել, համոզել,
բայց բնկերն արդեն կորել էր, չկար:
Եւ նա վերսին սկսեց խօսել.

—«Ես խենք չեմ, ասաց, կոյր ու խելագար.
իմ սիրտն էլ, ասաց, այդպես է ուզում,
բայց կայ սառը միտք, խարհ հաշվողում,
որ ծապկելով ոչինչ չես անի—
խոմու բերածը խոմին կը տանի...»
Եւ այդպես, յուզուած, զայրոյթը ճոգում,
աչքերում կրակ, բոյն ու բորբոքում—
նա դեռ շատ կ'անէ՛ր վեճ ու դալմաղալ,
բայց երկինքն յանկարծ սկսեց դողալ:
Դողում է՛ր կարծես երկինքը ամբողջ...
Վեհերանը ծեր խար կտրեց ասես.
ծանջաց միայն շրթերով դողդոջ,
— տղերք, Ահօի ահազանգն է ես...

10

Եւ ճիշտ որ. անհուն գիշերի գրկում
մռնչում էր խուլ, ողբաձայն երգում,
ու հոսում էր յորդ ձայնի մի հոսանք.
ճչում էր կարծես վիթխարի մի զանգ:
Ու ոզանջներն գիշերի գրկում
մագլցում էին հորիզոնն ի վեր:
Ես մտածեցի՝ մինչ հիմա կեանքում
ո՞վ է այսպիսի ահազանգ տուել,
որ արթնացնի հուն մտած մարդուն...
Բայց հարցս բուաց արբապղծութիւն՝
Օ, ո՛չ մի ժամկոչ չի զանգել այդպես,
բեկուզ հրդեհներ շատ է պատահել:

Ջե՞ որ ազգը մեր ճնած է ասես—
մեր ճնած ազգին այդպես է վայել...
Այս զանգը ազգիս բող խրաս լինի,
որ արթուն մնայ, որ էլ չճնի...
Մինչ ես, դողալով տերեւի մի պես,
միտք էի անում ինչ ինձ այսպես
ու նայում էի իմ մութ անկիւնից
ժողովուրդն անա արթնացաւ ճնից:
Ամենից առաջ մեծերն արթնացան:
Եւ անա ծապ, խմբերով ցիր-ցան,
բոլոր կողմերից եկան կռակուն
ու հաւաքուեցին զանգատան բակում:
Ամենից առաջ մի խնդիր էր հասել
(անունը նրա չեմ ուզում ասել)—
զարթնել էր թէ չէ՝ գիշերի մթում
վազել էր իսկոյն դէպի զանգատուն:
Եւ անա, անմահ հերոսին վայել
անմար եռանդով զանգում էր նա էլ:
Եւ ժողովրդի զարթնելու յուսով
գիլ զանգում էին նրանք երկուսով:
Ու նրանց հուժկու ձեռքերի տակին
դղրդում էին զանգերն անագին,
դողում էր նաեւ զանգատունն ամբողջ—
ու ձայն էր կտրել հորիզոնը ողջ:

11

Վերջապես նրանք երբ էլ յոգնեցին
ժպտացին իրար — ու վար նայեցին:—
Ու սիրտը նրանց խնդաց զնգոցով,

երբ տեսաւ նրանք բազմութիւնը ծով,
որ վարն հաւաքուած իրենց էր նայում—
հերոսնե՞ր էին նրանք այդ պահուն...
Ծփում էր այնտեղ բազմութիւնը նոծ.
հաւաքուել էին մեծերը հայոց,
ու աչքերն յառած դէպի զանգատուն
աղմկում էին գիշերի մթում:
Աղմուկը սակայն երկար չտեւեց.
բարբառեց յանկարծ խենթը վերեւից—
ու տիրեց իսկոյն լռութիւնը ճար,
կարծես ներքեւում ոչ մի մարդ չկար:
Աղբիւրի նման կարկաչուն ու յորդ,
մերթ մեղմ ու անուշ, մերթ անչափ խրոխտ,
մերթ ինչպես վերից փոթորիկ սուրայ—
հոսում էին վար խօսքերը նրա...
Ու այս էր ասում այդ մարդը վերից.
«— Ընկերներ, Հայոց աշխարհում նորից
կրակ է բռնկել ու մորիկ ու մահ.
բռնկեցնե՛ր, յամառ խմբերով հիմա
մեզնից պէտք է իսկոյն, անվախ, անվեհեր,
երթա՛նք փրկելու ժողովուրդը մեր:
Գիտեմ, ձեր սրտում, տիրում է յուզում.
դուք անշուշտ հիմա գտնել էք ուզում,
թէ ո՞վ է նորից աշխարհը վառել,—
կամ մինչեւ հիմա մենք ի՞նչ ենք արել
մեր ժողովուրդը փրկելու համար.
որպեսզի հարցը չմնայ խաւար
ու ոչ մի գաղտնիք մեր մէջ չմնայ—
ամեն ոք բոլ այս խօսքերս իմանայ:»
Եւ նա սկսեց պատմութիւնը հին.
ո՞վ չի իմացել, որ մեր բռնաւին
խաբող է ու նենգ, ու վախկոտ, ու մութ.

եւ ասում էր ցա. «Ոչ մի ժողովուրդ
չի սիրում խարդախ բռնաւորն մեր չար,
այնինչ ազգը մեր աստուածահաճոյար
զարմանք է յղում արտում բոլորի—
իր բախտով դաժան ու կռուով արի:
«— Այո, ընկերներ: Աշխարհը ամբողջ
ողբում է հիմա ապէսր հայոց,
չի կարողանում մեր վշտից ճնի,
ուզում է մի կերպ, մի բանով օգնի,
ու իր հեռաւոր, լուսաւոր ափում
մեր վշտի համար արցունք է թափում:
— Հայրենակիցնե՛ր, թէ ամեն մի մարդ
թափելու լինի մի շիշ արտասուք—
մեր երկիրն էլի՛ կը խնդայ զուարթ
ու էլի չի լինի աւերում ու սուգ:
Հայրենակիցներ, հաստատ եմ, գիտեմ,
եւ երդւում եմ մեր հոդեմովը վառ,—
արտասուքն այդքան կը բաւէ արդեն
մի փոքրիկ հրդեհ մարելու համար:
Եւ յետոյ — երկի, երբ խղճով հանգիստ
ճնել էիք դուք բոլորդ անխտրով—
մեր անզուգական բարեկամներից
ջուր եմ պահանջել մենք հեռագրով:
Սակայն միևնոյն գայ օգնութիւնը այդ—
ով մի սուր առած, ով թնդուզ մի փայտ,
շարժերով անձայր, ստուար, բազմահոծ—
երբա՞ծ փրկելու ժողովուրդն հայոց...»

12

Երբ ձայնը նրա խզուեց կնգողով—
վարը հաւաքուած բազմութիւնը ծով

մռնչաց ինչպես մի խաչ անվեհեր.
— երբա՞նք փրկելու ժողովուրդը մեր:
Քիչ մնաց՝ վերից մռնչում ես էլ.
իմ ամբողջ կեանքում ես չէի տեսել
մեր նոնիմ կեանքի անբափանց մթում
այդպիսի անեղծ ոգեւորութիւն:
Եւ աչքս յառած յուզուած ամբոխին՝
ես կծում էի շրթունքները իմ,—
նման էր ողջը հրազի, ճնի.
վախենում էի, որ երազ լինի...
Տեսնելով սակայն, որ չեմ արթնանում,
խո՞ր ակնածանքով, յարգանքով անհուն
ես մտածեցի. աշխարհում այս մութ
ինչե՞ր չի անում ժամկոչը հմուտ...
Անհասկանալի հրաբէ ես դու, կեանք.
բաւական էր մի ազդու ահազանգ—
եւ փրկուեց ահա մեր ազգը մահից:
Եւ չէի ուզում հաւատալ ես ինձ,
բայց երբ որ մեկ էլ նայեցի ես վար—
չհաւատալու էլ ճնարէ չկար:
Ջրած աչքերով տեսնում էի ես.
ներքեւում ահա, հրձիգներ ասես,
ձեռքերին կարմիր լապտերներ առած
մեր խեղճ ու Ահօն ընկել են առաջ—
հետքերից գցած բազմութիւնը հոծ
գնում են փրկեն ժողովուրդն հայոց...

13

Ու զարմանք կտրած, արտիս խնդութիւն,
ես նայում էի — չէի հաւատում

բախտից կուրացած իմ թաց աչքերին.
եւ արցունքները յորդ հոսում էին
ճամբէքի վրայ նրանց արբազան...
Նրանի՜ նրանց, որ ձեզ չտեսան,—
բացականչեցին երբեմն դողդոջ.
— Ճանի որ նրանք աշխարհում այս փուչ
չեն տարի յետոյ, երբ դառնայ եռազ
ոգեւորութեան սուրբ վայրկեանը այս...»
Ու գնում էին նրանք անձնուէր,—
ունեի՜ն կարծես խօսքերան թեւեր...
Նոյնիսկ գիշերի միզում անթափանց
ես տեսնում էի թեւերը նրանց,
որ տանում էին թափօրն անվեհեր—
աստուածաբնծայ, արբազա՜ն թեւեր:
Խաւար գիշերի գրկում անուր
խայտում էր նրանց խումբը թեւաւոր,
գնում էր դէպի երկիրը հին—
մի խումբ էր կարծես հրեշտակների...

14

Եւ անա նրանց աչքերի առաջ
հեռուն, մշուշում բռնկուեց յանկարծ
վառ, արնաներկ կրակի մի դեզ.
մի հսկայական լեզու էր ասես—
ու մութ գիշերի լռդերն էր լիզում
այդ հսկայական, այդ կարմիր լեզուն:
Ու աչքերն յառած լեզուին հրածին
նրանք խարացան — ու սուր զգացին

վառուող դիերի բոյրը աճաւոր...
Լսեցին նրանք կանչեր հեռաւոր,
նիչեր սխրածայն ու աղեկտուր,
որ կանչում էին ու տանջում իզուր...
Եւ ահա, հրէ այն լեզուի նման,
բռնկուեց նրանց սրտում անձնըւեր
ազնիւ վրէժի ու ատելութեան
բոյնը սրբազան ու աշխարհաւեր:
Եւ այն է՝ նրանք ուզում էին որ
անցնեն անիծուած սահմանն ահաւոր
եւ նետեն իրենց հրդեհը անանց—
մշուշում յանկարծ դէմ ելան նրանց
խմբեր կիսամերկ ուրուականների,
որ փախչում էին նահկերից հրէ...
Ու փախչում էին նրանք խայեերեր.
— կիսամեռ մարդիկ, կիսավառ կիներ
ու ծերունիներ տեսիլանման.
հայոց աշխարհի ժողովուրդն էր այն,
որ ահաբեկուած սրից ու հրից
փախչում էր անդարձ հայոց աշխարհից...

15

Երբ նրանք այդ սեւ պատկերը տեսան—
հրաբուխ դարձաւ էնը սրբազան
նրանց անվեհեր ու վեհ սրտերում.
եւ ահա, այդ սուրբ զայրոյթով եռուն
ու մռնչիւնով աշխարհասասան

մի թռիչք արին — ու հրին հասան:
Տեղ հասան տեսան — շատ են ուշացել.
իրենցից առաջ շատերն են հասել
ու իրենց նեցած կրակի մեջ վառ
աշխատում են մի եռանդով անմար.
կրակի միջից իրեր են հանում—
եռանդով անմար, աշխուժով անհուն:
Նայում էր Ահօն վառուող կրակին—
եւ ահա այնտեղ նա տեսաւ մեկին,
որ իրեն նեցած կրակը անել
ուզում էր մի բան հրդեհից հանել:
Ճանաչեց նրան — ու շտաժ մնաց...
Ու թուաց նրան, թէ ինքը հնած
երազ է տեսնում քնկերոջ մասին...
Բայց երբ որ տեսաւ քնկերոջ ուսին
բոցը, որ նրան ուզում էր յափի—
բղաւեց խզուած ձայնով տագնապի.
—Հէ՜յ-հէ՜յ, դո՛ւրս արի, Լեզհոն եղբայր:
Բայց չէր լսում նա: Նոյն ջանքով անմար
կրակի տակից հանում էր մի բան—
ու նայում էին բոլորը նրան:
— Օ, սաղամանդրա առասպելական,
հայը իր վառոով հեզ է պարտական:—
Աղաղակեցի ես ձայնով յուզուած—
բայց նա նոյն պահուն ձեռ հերը կիզուած
դուրս հանեց հրից այլանդակ, դեղին
մի անմիս դիակ — ու մի անկողին:
Երբ դուրս եկաւ նա ու բեռը դրեց—
դէմ վազեց Ահօն, ամուր համբուրեց
ու անհուն սիրով փաթաթուեց նրան.
— օ, ցնցող սիրոյ ցնցող տեսարան...

Ահօճ երեւի դեռ երկա՜ր-երկա՜ր
ընկերոջ կրծքին փաթաթուած մնար,
բայց ընկերը շատ չուներ ժամանակ՝
սերն համարելով աշտեղի հաշաք՝
մեղմ հրեց նրան ու հոգսոտ, լռին
մօտեցաւ հրից ազատուած իրին։
— «Ինէ, պատմի՛ր, պատմի՛ր, այս ի՞նչ ես անում.
մեղքս ի՞նչ պահեմ. ես չեմ հասկանում—
գցել ես դու քեզ այդ կրակն անել...
Բայց հրի միջից այդ ի՞նչ ես հանել...»
Ու տխուր ժպտաց Լեգեոնը ծեր.
—«Դիակներ են լոկ այստեղ մնացել—
